

Վ. Խ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ
ԱՐԵՎԵԼՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

В. Х. ОВАКИМЯН

КРЕСТЬЯНСКОЕ ДВИЖЕНИЕ
В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ

(1880—1890-е ГОДЫ)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1984

63
7-84

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՏ

Վ. Խ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(1880—1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

2034

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՐԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1984



Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական
խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. ԳԱՆՈՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ պատմական
գիտությունների դոկտորներ Վ. Ա. ՊՆՐՄԱՄՅԱՆԸ և Խ. Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆԸ

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

XIX դարի վերջին Արևելյան Հայաստանը շարունակում էր մնալ Ռուսական կայսրության ազդարային հետամնաց ծայրամասերից մեկը: 1897 թ. մարդահամարի տվյալների համեմայն գյուղացիությունը կազմում էր բնակչության ա՝ վելի բան 90 տոկոսը: Հասկանալի է, որ մեր ժողովրդի այս նշանակալից հատվածի սոցիալ-տնտեսական պատմությունն ունի կարևոր նշանակություն, որի ուսումնասիրմամբ է պայ՝ մանավորվում այնպիսի առանցքային պրոբլեմների լուսա՝ բանումը, ինչպիսիք են՝ կապիտալիստական հարաբերու՝ թյունների զարգացումը, բանվոր դասակարգի ձևավորումը, հեղափոխական շարժումների ծավալումը և այլն: Ուստի պատահական չէ այն մեծ հետաքրքրությունը, որ ցուցաբե՝ բում են սովետահայ պատմաբանները և տնտեսագետները նա՝ իանհեղափոխական գյուղացիության պատմության հանդեպ: Այդ պատմության հարցերին տարբեր տեսանկյուններից անդրադարձել են Վ. Ռշտունին, Ա. Մարությանը, Օ. Հովհան՝ նիսյանը, Ա. Եսայանը, Հ. Թումանյանը, Մ. Ադունցը, Ա. Համ՝ բարյանը, Խ. Ավդալբեգյանը, Ա. Պողոսյանը, Մ. Եգանյանը, Վ. Պարսամյանը, Ռ. Մելիք-Սարգսյանը, Մ. Խոնդկարյանը, Ա. Հակոբյանը:

Սովետահայ պատմաբաններն ու տնտեսագետները փաստական հարուստ նյութերով վեր են հանել հտաեֆորմյան արևելահայ գյուղացիության սոցիալ-տնտեսական վիճակը, ցույց տվել ցարիզմի ազդարային և գաղութային քաղաքականության անմիջական ազդեցությունը տնտեսության զարգացման և գյուղացիական մասսաների վրա: Իրենց աշխատություններում նրանք անդրադարձել են նաև գյուղում տեղի

Հովակիմյան, Վ. Խ.
Հ 843 Գյուղացիական շարժումները Արևելյան Հայաստանում (1880—1890-ական թվականներ) Պատ. խմբ.՝ Գ. Ա. Գալոյան.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984.—182 էջ. Վերնախորագր. ՀՍՍՀ ԳԱ, Պատմ. ին-տ.

Աշխատության մեջ Արևելյան Հայաստանի հտոեֆորմյան սոցիալ-տնտեսական զարգացման ֆոնի վրա լուսարանվում է XIX դ. վերջին քառորդի արևելահայ գյուղացիական շարժումների պատմությունը: Արխիվային նորահայտ նյութերի հիման վրա ցույց է տրվում, որ գյուղացիության պայքարը մղվում էր երեք հիմնական ուղղություններով՝ պայքար հողի համար, ցարիզմի հարկային քաղաքականության և տեղական ադմինիստրացիայի դեմ: Հավասարապես լուսարանվում են ինչպես պետական, այնպես էլ կալվածատիրական գյուղացիության դասակարգային պայքարի հարցերը: Հասցեագրվում է պատմաբաններին:

0505040000
Հ-----14-84 ԳՄԴ 63.3 (2) 51+63.3 (22)
703 (02)—84

ունեցող դասակարգային պայքարի հարցերին, սակայն այն-
քանով, որքանով դա առնչվել է իրենց հետաքրքրության շրջ-
անակներում արժարժվող խնդիրներին:

Տնտեսական զարգացման հետևանքով XIX դ. վերջին քա-
ռորդում Արևելյան Հայաստանում դասակարգային պայքարի
ոլորտներում ներգրավված էր գերազանցապես գյուղացիու-
թյունը: Այս առումով, Արևելյան Հայաստանի այդ ժամանա-
կաշրջանի դասակարգային պայքարի պատմությունը դա
գյուղացիական շարժումների պատմություն է, որի գիտական
ուսումնասիրությունը հրատապ և կարևոր խնդիր է:

Սովետահայ պատմագրությունը մեջ էտոեֆորմյան արևե-
լահայ գյուղացիական շարժումների պատմությանն առաջին
անգամ խորությամբ ու բազմակողմանիորեն անդրադարձել է
Վ. Ռշտունին: Գյուղացիական խնդրագրերի ու բողոքագրերի և
արխիվային այլ փաստաթղթերի հիման վրա նա կազմել է արե-
վելահայ գյուղացիական շարժումներին վերաբերող հարուստ
ժողովածուներ², որոնք իրենց տեսակի մեջ այսօր էլ եզակի
են: Դրանք բարձր են գնահատվել նաև միութենական գրակա-
նության մեջ³:

Վ. Ռշտունու աշխատությունները հիմնականում լույս են
սփռում Երևանի նահանգի գյուղացիական շարժումների վրա:
Այս կապակցությամբ նա գրում է. «Բոլորովին պատահական
են մեր ունեցած տեղեկությունները Զանգեզուրի և Լոռիի այդ
տարիների (XIX դարի վերջ—Վ. Հ.) գյուղացիական ելույթնե-
րի մասին: Այդ խնդիրը կարոտ է հատուկ ուսումնասիրու-
թյան»⁴: Միաժամանակ պետք է նշել, որ Վ. Ռշտունին գլխա-
վորապես անդրադարձել է կալվածատիրական գյուղացիու-
թյան պայքարի պատմությանը: Այնինչ, գյուղացիության մե-
ծամասնությունը կազմող պետական հատվածի պայքարի
պատմությունը եղել և մնում է անհամեմատ քիչ ուսումնա-
սիրված:

XIX դարավերջի արևելահայ գյուղացիական շարժումնե-
րի պատմությանը անդրադարձել են նաև Ա. Համբարյանը,
Ռ. Մելիք-Սարգսյանը և Ա. Հակոբյանը⁵: Ա. Համբարյանը ու-
սումնասիրում է այդ շարժումները ինչպես Երևանի նահան-

գում, այնպես էլ Կարսի մարզում, ընդ որում, որոշակի տեղ
հատկացնում նաև պետական գյուղացիության պայքարին:
Ռ. Մելիք-Սարգսյանը անդրադառնալով 1870-ական թվա-
կանների արևելահայ գյուղում տեղի ունեցող դասակարգային
պայքարի հարցերին, արխիվային հարուստ փաստաթղթերով
ցույց է առել 1870 թ. գյուղացիական ռեֆորմի և այդ պայ-
քարի փոխկապակցվածությունը: XIX դարի վերջի և XX դարի
սկզբի Կարսի մարզի գյուղացիության դասակարգային պայ-
քարին է նվիրված Ա. Հակոբյանի թեկնածուական դիսերտա-
ցիայի վերջին գլուխը:

Ինչպես տեսնում ենք, էտոեֆորմյան Արևելյան Հայաս-
տանի գյուղացիական շարժումների պատմության ուսում-
նասիրմանը քիչ թվով մասնագետներ են ձեռնամուխ եղել:
Չնայած կատարվել է մեծ և արժեքավոր աշխատանք, սա-
կայն կան նաև անելիքներ: Տարիներ առաջ Վ. Ռշտունին գրում
էր. «Շատ բան դեռ չի արված Հայաստանի գյուղացիական
շարժումների քիչ թե շատ լրիվ պատկերը տալու համար: Դրա
վրա բավական ջանք են թափում մեր երիտասարդ պատմա-
բանները և հավանորեն մոտիկ ապագայում մենք կունենանք
գյուղացիության երկու հատվածի պայքարի պատմության
գոհացուցիչ պատկերը»⁶: Հայ գյուղացիության պատմության
երախտավորի խոսքերը, ցավոք, չեն իրականացել, և մենք
շարունակում ենք մխիթարվել Երևանի նահանգի գյուղացիու-
թյան կալվածատիրական հատվածի պայքարի պատմության,
թերևս, միակ գոհացուցիչ պատկերով:

Սույն աշխատությունը նպատակ է հետապնդում մասամբ
լրացնելու մեր պատմագրության մեջ նկատվող այդ բացը:
Իսկ ինչո՞ւ ենք հատկապես ընտրել 80—90-ական թվականնե-
րը և ոչ էտոեֆորմյան ամբողջ երեսնամյակը: Նախ, դա ժա-
մանակագրական առումով ավելի մեծ ու տարողունակ հատ-
ված կընդգրկեր, որն աշխատության ներկայիս ծավալի պայ-
մաններում որոշակիորեն կնվազեցներ հարցերին ու իրադար-
ձություններին մանրամասն անդրադառնալու հնարավորու-
թյունը: Երկրորդ, դրա անհրաժեշտությունը չի զգացվում,
քանզի էտոեֆորմյան առաջին տասնամյակի՝ 1870-ական

թվականների գյուղացիական շարժումները բավարար չափով լուսաբանված են Վ. Ռշտունու և Ռ. Մելիք-Սարգսյանի վերոհիշյալ աշխատություններում:

Օգտագործելով այս պրոբլեմի մշակման ուղղությամբ մեր պատմագիտության կուտակած փորձը և հենվելով արխիվային նորահայտ նյութերի վրա, փորձել ենք տալ XIX դարի վերջի արևելահայ գյուղացիական շարժումների շատ թե քիչ միասնական պատկերը: Խոսել ենք զրանց ծագման օբյեկտիվ պատճառների, ձևերի ու արդյունքների մասին: Հնարավորության սահմաններում աշխատել ենք օգտագործել Արևելյան Հայաստանի՝ խնդրո առարկայի առումով համեմատաբար քիչ ուսումնասիրված շրջանների՝ վերաբերյալ եղած նյութերը և, միաժամանակ, ցանկացել ավելի մանրամասն անդրադառնալ գյուղացիության պետական հատվածի պայքարի հարցերին:

Ակադեմիկոս Ն. Դրուժինինը գրում է, որ 1870-ական թվականներին Ռուսաստանում դասակարգային պայքարը գյուղում տեղի էր ունենում երեք հիմնական ուղղություններով. պայքար սակավահողության, հարկային հարստահարման և տեղական ազմինիստրացիայի դեմ³: Նույնը կարելի է ասել նաև XIX դարի վերջին քառորդի արևելահայ գյուղացիության պայքարի մասին: Ի դեպ, մենք նպատակահարմար ենք գտել սույն աշխատությունը շարադրել գյուղացիական պայքարի այդ հիմնական ուղղություններին համապատասխան:

Թերևս, հնարավոր էր պետական և կալվածատիրական գյուղացիության պայքարը ներկայացնել առանձնաբար: Սակայն հաշվի առնելով, որ արևելահայ գյուղացիությունը իրավաբանորեն էր բաժանված երկու հատվածների, իսկ փաստորեն ներկայացնում էր մի որոշակի ամբողջություն և գտնվում տնտեսական համարյա միևնույն անմխիթար պայմաններում, մենք փորձել ենք գյուղացիության երկու հատվածների պայքարի պատմությունը ներկայացնել որպես դասակարգային միասնական պայքարի պատմություն, իհարկե, շանտեսելով նաև որոշ առանձնահատկություններ:

Աշխատության համար փաստական հիմք են հանդիսացել արխիվային նորահայտ նյութերը, որոնք պահվում են ՍՍՀՄ Կենտրոնական պետական պատմական արխիվում (ՍՍՀՄ ԿՊՊԱ), Հայկական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվում (ՀՍՍՀ ԿՊՊԱ), Հոկտեմբերյան հեղափոխության ՍՍՀՄ Կենտրոնական պետական արխիվում (ЦГАОР), Վրացական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվում (ՎՍՍՀ ԿՊՊԱ), Ադրբեջանական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվում (Ադրբեջ. ՍՍՀ ԿՊՊԱ):

Արևելահայ գյուղացիական շարժումների պատմության ուսումնասիրման համար արխիվային փաստաթղթերն ունեն սկզբնաղբյուրային նշանակություն: Սակայն դրանք անըսպառ չեն: Ռեալ իրականությունը լիովին համապատասխանող գյուղացիական շարժումների քանակական պատկերը ստանալու հնարավորությունից, ցավոք, մենք զրկված ենք: Նախ, չպետք է մոռանալ, որ գյուղացիական բոլոր հուզումների կապակցությամբ չէ, որ պաշտոնական գրագրություն էր սկսվում ցարական աստիճանավորների միջև և թե՛ սկսվում էր, ապա գրագրությունների մի մասն, ընդհանրապես, չէր հանձնվում պահպանման, իսկ հանձնվելուց հետո ժամանակի ընթացքում շատերը պարբերաբար ոչնչացվում էին:

Արխիվային փաստաթղթերի մեջ իրենց նշանակությամբ հավասարը չունեն գյուղացիական խնդրագրերն ու բողոքագրերը: Անպաճույճ, պարզ լեզվով գրված, բայց խոր բովանդակություն ունեցող այդ փաստաթղթերը XIX դարի վերջին տասնամյակների ընթացքում արևելահայ գյուղացիության պայքարի պասսիվ ձևի առկայության վկայումն են: Գյուղացիական խնդրագրերն ու բողոքագրերը պատմական մեծ արժեք ներկայացնող վավերագրեր են, որոնց ուսումնասիրմամբ է պայմանավորվում գյուղացիության և, մասնավորապես, գյուղացիական շարժումների պատմության հարցերի բազմակողմանի լուսաբանումը:

Ուսումնասիրման առարկա հանդիսացող տարբեր հարցերի վերաբերյալ վիճակագրական և փաստական բազմաբնույթ նյութեր կան ժամանակի մի շարք ժողովածուներում,

հաշվետվություններում ու աշխատություններում⁹: Ընդամին, մեզ հետաքրքրել են ոչ այնքան դրանց հեղինակների քաղաքական հայացքներն ու մեկնաբանումները, որքան որ նրանց օգտագործած փաստերը:

Սկզբնաղբյուրային նշանակություն ունեն նաև ժամանակի հայ պարբերական մամուլի օրգաններում հրատարակված բազմաթիվ նյութեր: Ընդհանրապես անհնար է տալ դարավերջի արևելահայ գյուղացիության նկարագիրը, առանց օգտագործելու ժամանակաշրջանն արտացոլող այդ տարեգրությունը: Տարբեր գավառներից և գյուղերից ուղարկված նամակներն ու թղթակցությունները, հաճախ բավական պարզունակ, սակայն վառ գույներով են վերակենդանացնում գյուղում տիրող իրավիճակը:

Գյուղացիության սոցիալ-տնտեսական պայմանները, կենցաղը, հոգեբանությունը հիանալիորեն են արտացոլվել Պ. Պոռչյանի, Վ. Փափազյանի, Մուրացանի, Ղ. Աղալյանի, Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, ստեղծագործություններում: Գեղարվեստական ու միաժամանակ ճանաչողական խոշոր արժեք են ներկայացնում այդ հեղինակների գործերը, որոնցից մեզ է հասնում ժամանակի շունչը: Դահատկապես լավ է զգացվում գյուղագիրներ Հ. Ճուղուրյանի, Ա. Աղելյանի, Ա. Ազապյանի և այլոց ստեղծագործություններում¹⁰, որոնցում մեծ տեղ է հատկացվում չքավոր գյուղացիության և գյուղական վերնախավի միջև առկա հակամարտությունների սրմանը:

Ետոեֆորմյան Ռուսաստանի գյուղացիական շարժումն ընդ նրանց սկզբնապատճառներն ու հետևանքները անմիջականորեն բխում և սերտորեն կապվում են հիկրի սոցիալ-տնտեսական կյանքի ընդհանուր զարգացման հետ: Ց. Էնգելսը նշում է, որ Ռուսաստանում ճորտատիրական իրավունքը վերացնելուց հետո գյուղացիության կողմատման պատասխանը հանդիսացավ գյուղացիական շարժման անխուսափելի աճը: «Գյուղական բնակչության մասսան, — գրում էր նա, — հատկապես կոռի ետգնման ժամանակից սկսած այնպիսի դրություն մեջ է դրված, որն ավելի ու ավելի է նրան ստիպում կռվելու կառավարչության ու ցարի դեմ... Գյուղացիները հո-

ղի պակաս են զգում, նրանք, ճնշված են հարկերի տակ, կոլտպտված վաշխառուների կողմից»¹¹: Այս խոսքերը լիովին վերաբերում են նաև արևելահայ գյուղացիությանը:

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը արևելահայ գյուղում տեղի էր ունենում ֆեոդալական հնացած հարաբերությունների զուգորդման պայմաններում: Վ. Ի. Լենինը գրում է, որ կապիտալիստական տնտեսությունը չէր կարող միանգամից առաջ գալ, իսկ կոռային տնտեսությունը չէր կարող միանգամից շքանալ: «Հետևաբար, տնտեսության միակ հնարավոր սիստեմն անցումային սիստեմն էր, մի սիստեմ, որն իր մեջ զուգորդում էր թե կոռային և թե կապիտալիստական սիստեմների գծերը»¹²: Հենց այդպիսի անցումային շրջան էր թևակոխել հայ գյուղը XIX դարի վերջին բառորդին: Նման զուգորդման պայմաններում ավելի էր ուժեղանում գյուղացիության շահագործումը, քանի որ, ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, «Ռուսաստանում ազրարային հարաբերությունների ամբողջ վիթխարի բազմաղանութունը հանգում է շահագործման ճորտատիրական և բուրժուական եղանակների խճճմանը»¹³: Շահագործման այդ համատեղությունը ենթադրում էր միաժամանակ աշխատավոր գյուղացիության կողմից մղվող պայքարի համատեղություն, որը գյուղում հանդես էր գալիս սոցիալական երկու պատերազմների ձևով:

Առաջինը, որն առավել նշանակալից էր, ուղղված էր կալվածատերերի և ինքնակալության դեմ: Գյուղացիության շերտավորմանը զուգընթաց պայքարը սրվում էր նաև գյուղի ներսում՝ ընդդեմ գյուղական նորածին բուրժուազիայի, ընդդեմ շահագործման նոր՝ կապիտալիստական ձևերի: Զբաղվող գյուղացիության կողմից մղվող այս պայքարը հանդիսանում է սոցիալական երկրորդ պատերազմը, որը պայմանավորված լինելով Արևելյան Հայաստանի ետոեֆորմյան զարգացմամբ, տակավին նոր էր մուտք գործում այստեղ: Սակայն ունենալով զարգացման մշտական միտում, այն ոչ հեռու ապագայում դառնալու էր Արևելյան Հայաստանի գյուղացիական պայքարի բնորոշ գիծը:

1880-ական թվականներին գյուղացիական շարժումնե-

րը Ռուսաստանում կրում էին վառ արտահայտված ազգա-
բային բնույթ: Գյուղացիական մասսաների պայքարի հիմնա-
կան առանցքը հողն էր: Վ. Ի. Լենինը նշում է, որ «Հողի և
ազատության համար մղվող պայքարը դեմոկրատական պայ-
քար է»¹⁴: Այդ դեմոկրատական կռիվը տեղի էր ունենում նաև
արևելահայ գյուղում, սակայն մասշտաբների և ձևերի որո-
շակի տարբերությամբ:

Եթե 80-ական թվականներին Ռուսաստանի գյուղացիա-
կան շարժումներում գերակշռում են մասսայական ելույթների
ակտիվ ձևերը¹⁵, ապա Արևելյան Հայաստանում, ինչպես 80-
ական, այնպես էլ 90-ական թվականներին գյուղացիական
շարժումներին բնորոշ էր պայքարի պասսիվ բնույթը, որն
արտահայտվում էր հիմնականում գյուղացիական խնդրագրե-
րի ու բողոքագրերի միջոցով:

Արևելյան Հայաստանի գյուղացիական պայքարի պասսի-
վության մասին խոսելիս չպետք է մոռանալ, որ գյուղացիու-
թյունն այստեղ չի ենթարկվել ճորտատիրական այնպիսի
շահագործման, ինչպես ստենք Ռուսաստանում կամ Վրաս-
տանում, որը XIX դարի ողջ ընթացքում որոշակիորեն նպաս-
տել էր գյուղացիական շարժումների հասունացմանը: Եվ
վերջապես, ոչ պակաս կարևոր չէ այն հանգամանքը, որ արե-
վելահայ գյուղացիության կալվածատիրական հատվածն ան-
համեմատ փոքրաթիվ էր և չէր ներկայացնում այն ուժը, ինչ
Ռուսաստանում և հարևան Վրաստանում:

80-ական թվականներին Ռուսաստանում գյուղացիական
շարժումները ընթանում էին կապիտալիստական հարաբերու-
թյունների նկատելի հասունացման և բանվորական շարժում-
ների ծավալման պայմաններում, իսկ Արևելյան Հայաստա-
նում՝ կապիտալիստական հարաբերությունների դեռևս թույլ
զարգացման և բանվորական շարժման բացակայության պայ-
մաններում, որոնք, ինչ խոսք, որոշակի կնիք էին դնում գյու-
ղացիական մասսաների պայքարի վրա:

Գ Լ Ո Ւ Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ XIX ԳԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

ա) ՈՐԱԿԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1861 թ. գյուղացիական ռեֆորմը Ռուսաստանում վե-
րացրեց ճորտատիրական իրավունքը: «Դա մի քայլ էր Ռու-
սաստանը բուրժուական միապետության վերածելու ու-
ղիով»¹, սկիզբը Ռուսաստանի պատմության նոր՝ կապի-
տալիստական դարաշրջանի:

Ռեֆորմը բնավ չդիպավ ճորտատերերի շահերին, քանզի
նրա իրագործողները ճորտատերեր էին: Փոխարենը ամենա-
անխիղճ կերպով թալանվեցին գյուղացիները: Կալվազույն հո-
ղակտորները, որոնցից նախկինում օգտվում էին նրանք, ան-
ցան կալվածատերերին, իսկ մնացած հողերը գյուղացիները
ստիպված էին ետ գնել եռակի թանկ գնով: Սակայն ճորտա-
տերերի կողմից իրագործված այդ ռեֆորմը բուրժուական
բովանդակություն ուներ: Վ. Ի. Լենինը նշում է, որ «Որչափով
գյուղացին դուրս էր պրծնում ճորտատիրոջ իշխանության
տակից, այնչափով նա ընկնում էր փողի իշխանության տակ,
ընկնում էր ապրանքային արտադրության պայմանների մեջ,
կախման մեջ էր ընկնում ծնունդ առնող կապիտալից»²:

1861 թ. ռեֆորմը մեծ հնարավորություններ ընձեռեց
կապիտալիզմի զարգացման համար: Կարճ ժամանակահատ-
վածում որակական մեծ տեղաշարժեր կատարվեցին արդյու-
նաբերության և գյուղատնտեսության մեջ: «...61 թվակա-
նից հետո կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում ըն-
թացավ այնպիսի արագությամբ, որ մի քանի տասնամյակ-

ներում կատարվեցին այնպիսի փոփոխումներ, որպիսիները եվրոպական մի քանի հին երկրներում տեղի էին ամբողջ հարյուրամյակներ»³։

Նառնֆորմյան ժամանակաշրջանում Ռուսաստանում ծավալվեց երկաթուղային բուռն շինարարություն։ Հազարավոր կիլոմետրեր ձգվող պողպատե այդ ուղիներով կապիտալիզմը ներթափանցում էր երկրի անկյունները, ազրարային ծայրամասերը կապում արդյունաբերական կենտրոնների հետ, նույնպես արդյունաբերության, գյուղատնտեսության զարգացմանը, ապրանքաշրջանառության աճին, սոցիալ-տնտեսական ընդհանուր առաջադիմությունը։

Ռուսաստանում սկսված արդյունաբերական հեղաշրջումը կյանքի էր կոչում արդյունաբերական նոր կենտրոններ, մանուֆակտուրային ձեռնարկություններն իրենց տեղը զիջում էին ֆաբրիկաներին ու խոշոր գործարաններին, որոնք հագեցվում էին նոր տեխնիկայով։ Զարգացման մեծ տեմպեր էին վերցրել տեքստիլ արդյունաբերությունը, սև մետալուրգիան, նավթարդյունաբերությունը և այլն։ 1860—1900 թթ. ընթացքում Ռուսաստանի արդյունաբերական արտադրանքի ծավալն աճեց մոտ ութ անգամ⁴։

Կապիտալիզմի զարգացումը արմատական փոփոխություններ մտցրեց բնակչության դասակարգային կազմի մեջ։ Այն հասարակական կյանքի թատերաբեմ կոչեց բուրժուազիային և պրոլետարիատին։ Արագ տեմպերով սկսեց աճել քաղաքային բնակչությունը։ Օրինակ, Կովկասի քաղաքային բնակչությունը 1863 թ. 350 հազարից աճեց մինչև 900 հազարի՝ 1897 թվականին⁵։

Սակայն Ռուսաստանի տարբեր շրջաններում և ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում կապիտալիզմի զարգացման պրոցեսն ընթանում էր անհամաչափ՝ ժամանակի, ձևերի, տեմպերի առումով, որոնց հիմքում ընկած էին ինչպես կայսրության տարբեր մասերի միջև եղած սոցիալ-տնտեսական բազմաբնույթ առանձնահատկությունները, այնպես էլ ցարիզմի գաղութային քաղաքականությունը։

Ռուսաստանում կապիտալիզմի տիրապետության ուր-

առ շարունակում էր տարածվել նորանոր տերիտորիաների վրա, այսինքն կապիտալիզմը զարգանում էլ լայնությամբ⁶։ Այդ նպաստում էր Ռուսաստանի ծայրերկրների տնտեսական զարգացմանը, որոնք երկրի արդյունաբերական զարգացող կենտրոններին մատակարարում էին էժան հումք և միաժամանակ հանդիսանում վերջիններիս արտադրանքի վաճառահանման հարմարավետ շուկաներ։

Ռուսական կայսրության ծայրամասերից մեկի՝ Անդրկովկասի թեև կոխելը զարգացման կապիտալիստական ուղին, նպաստեց Ռուսաստանի հետ նրա տնտեսական կապերի ամրապնդմանը, որոնք նախկինում բավականին թույլ էին։ «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» կապիտալ աշխատության մեջ խոսելով Կովկասի մասին Վ. Ի. Լենինը նշում է, որ «նրա տնտեսական «նվաճումը» Ռուսաստանի կողմից շատ ավելի ուշ է կատարվել, քան քաղաքականը, իսկ տնտեսական այդ նվաճումը լիովին չի ավարտված մինչև այժմ էլ»⁷։ Նառնֆորմյան ժամանակաշրջանում երկրամասը մի կողմից ենթարկվում էր սաստիկ գաղութացման, իսկ մյուս կողմից տեղի էր ունենում բնիկ տնայնագործական արհեստագործությունների արտամղում, որոնք չկարողանալով մրցակցել ներմուծվող ֆաբրիկա-գործարանյին արտադրանքի հետ, անկում էին ապրում։

1861 թ. ռեֆորմի օրգանական շարունակությունը հանդիսացավ 1864—1871 թթ. Անդրկովկասում անցկացված գյուղացիական ռեֆորմը, որն ամենևին չնպաստեց գյուղացիների դրության բարելավմանը։ Նոր հողեր ձեռք բերելու փոխարեն նրանք զրկվեցին անգամ այն հողերից, որոնցից նախկինում օգտվում էին։ Երկրամասի հողերի լավագույն և մեծ մասը ռեֆորմից հետո մնաց պետության և կալվածատերերի ձեռքում։ Նրանց էր պատկանում Անդրկովկասի հողային ֆոնդի 70,5 տոկոսը, իսկ բնակչության հիմնական մասը կազմող գյուղացիությունը՝ 29,5 տոկոսը⁸։

Արևելյան Հայաստանում գյուղացիական ռեֆորմի իրագործմանը ցարիզմը ձեռնամուխ եղավ 1870 թվականին։ Դրա արդյունքները շատ անմխիթար դուրս եկան գյուղացիական

մասսաների համար: Այն պահպանեց գյուղացիական սակա-
վահողութիւնը և ֆեոդալական հարկերը:

1861 թ. ռեֆորմը Ռուսաստանում վերացրեց գյուղացու
անձնական կախվածութիւնը կալվածատիրոջից, որը որոշիչ
նշանակութիւն ունեցավ կապիտալիզմի զարգացման հա-
մար: 1870 թ. ռեֆորմին վիճակված չէր նման կարևոր դեր,
քանի որ արևելահայ գյուղում բացակայում էր գյուղացու
ճորտական կախվածութիւնը: Այդ ռեֆորմը չէր տարածվում
պետական գյուղացիների վրա, որոնք կազմում էին գյուղա-
ցիութիւնի 85,4 տոկոսը⁹: Այն տարածվում էր գյուղացիութիւն
մի փոքր հատվածի և հողերի փոքր քանակութիւնի վրա: Հո-
ղի փրկագնումը, որը ռեֆորմի հիմնական բովանդակութիւնն
էր, այդպես էլ տեղի չունեցավ:

1870 թ. մայիսի 14-ի կանոնադրութեամբ նախատեսվում
էր գյուղացիական հողաբաժնի ետգնում, սակայն այս հար-
ցում հայ գյուղացիութիւնը ծանր պայմանների մեջ դրվեց:
Եթե Ռուսաստանում հողերի ետգնումը պարտադիր համարվեց
և կատարվեց պետական դրամական օժանդակութեամբ, ապա
արդունքն այն եղավ, որ 1883 թ. այստեղ ավարտվեց հողերի
ետգնումը և գյուղացին դարձավ իր, թեկուզ և փոքր, հողա-
կտորի սեփականատերը: Հայ գյուղում հողերի փրկագնման
համար նման պայմաններ չստեղծվեցին: Այդ էր պատճառը,
որ երեսուն տարվա ընթացքում (1870—1900 թթ.) ամբողջ
Երևանի նահանգում փրկագնվեց ընդամենը 41 դեսյատին
հող¹⁰: Մինչև հողի ետգնումը գյուղացին իրավական տեսա-
կետից համարվում էր ժամանակավոր կախյալ, որպիսի
դրութիւնը շարունակվեց պահպանվել գրեթե կես դար: Գյու-
ղացին ստիպված էր հողատիրոջ համար նույնութեամբ կա-
տարել մինչև ռեֆորմի պարհակները: Ժամանակավոր կախ-
յալ գյուղացիները փաստորեն կես դար մնացին մշտապես
կախյալ վիճակում:

Արևելահայ գյուղում կապիտալիստական հարաբերու-
թիւնների զարգացման հարցին անդրադառնալիս, Մ. Եգան-
յանը անտեսում է 1870 թ. գյուղացիական ռեֆորմի խաղա-
ցած դերը այն պատճառաբանութեամբ, որ վերջինս տարած-

վում էր մասնատիրական հողերի վրա, որոնց տեսակարար
կշիռն անշափ փոքր էր (համայնական բաժանելի հողերի ըն-
դամենը 3,4 տոկոսը): «Կարելի է արդյոք դրանից հետո պըն-
դել,— գրում է նա,— որ Հայաստանում կատարվել է հողա-
յին ռեֆորմ: Ոչ, չի կարելի»¹¹: Սակայն չի կարելի նաև հա-
մաձայնել Մ. Եգանյանի այն մտքի հետ, որ «հողային ռե-
ֆորմը շատ թանկ նստեց հայ ժողովրդի վրա և բերեց գյու-
ղատնտեսութեան բնագավառում արտադրողական ուժերի
զարգացման համարյա լրիվ ճահճացում»¹²: Անհասկանալի է,
ինչպես կարելի է մի կողմից անտեսել այդ ռեֆորմի դերը,
քանի որ այն «պտտվում էր» աննշան հողաքանակի շուրջը,
ասել, թե ռեֆորմ չի եղել, բայց և գրել, որ այն արտադրողա-
կան ուժերի զարգացման լրիվ ճահճացում առաջ բերեց: Իսկ
մի՞թե «պտտվելով» նույն աննշան հողաքանակի շուրջը, ռե-
ֆորմն ի վիճակի էր նման ճահճացում առաջ բերել: Ինչու մի
դեպքում, իր տարածման շրջանակների անհամեմատ փոքր
լինելու պատճառով այն չէր կարող նպաստել տնտեսական
զարգացմանը, սակայն կարող էր տնտեսութեան մեջ առաջ
բերել ճահճացում: Եվ, վերջապես, ի՞նչ ճահճացման մասին
կարող է խոսք լինել, երբ արևելահայ տնտեսական կյանքը
դարավերջին ապրում էր նկատելի վերելք: Ի դեպ այդ մասին
իր աշխատութեան մեջ քանիցս նշում է նաև Մ. Եգանյանը:

1870 թ. գյուղացիական ռեֆորմը չունեցավ էական նշանա-
կութիւն արևելահայ տնտեսական կյանքի զարգացման հա-
մար: Նախ, շատ նեղ էին նրա տարածման շրջանակները և
հետո՝ այն, ինչ պետք է կյանքի կոչվեր թեկուզ այդ նեղ շր-
ջանակներում, հիմնականում մնաց թղթի վրա: Կարևորն այն
չէ, թե մայիսի 14-ի կանոնադրութիւնը որքան և որպիսի բո-
վանդակութեամբ հողվածներից էր բաղկացած, այլ այն՝ թե
իրականում դրանք ինչպես, երբ և որքանով իրագործվեցին:
Ոչտունին գրում է, որ «ցարիզմն իր ճորտատիրական էու-
թեանը հավատարիմ մնաց և այդ դեպքում՝ մի ձեռքով գրա-
ծը ջնջեց մյուս ձեռքով»¹³:

Արևելահայ տնտեսական կյանքի աշխուժացումը նկա-
տելի էր 60-ական թվականներին: Պատահական չէ, որ արե-

2034



վելահայ գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը նվիրած իր աշխատությունը Ա. Համբարյանը ժամանակագրական առումով իրավացիորեն սկսում է 1860 թվից¹⁴։ Ավելի շուտ կարելի է խոսել 1870 թ. գյուղացիական ռեֆորմի սոցիալական որոշ նշանակության մասին, որը նա թողեց գյուղացիական մասսաների վրա։ Այն բարձրացրեց գյուղացու՝ քաղաքացիական անձնավորության դերը, առանց որի չէին կարող կազմվել կանոնադրերը, սահմանեց կալվածատերերի և գյուղացիների պարտավորություններն ու իրավունքները, որը նպաստում էր գյուղացիների ավելի համարձակ դառնալուն իրենց կենցաղական շահերի պաշտպանության գործում։ Այդ մասին են վկայում ետեֆորմյան ժամանակաշրջանում տեղի ունեցած արևելահայ գյուղացիական շարժումները։

Ռուսաստանում կապիտալիզմի զարգացումը լայնության մեջ նպաստեց Արևելյան Հայաստանի ներգրավմանը համառուսական շուկայի մեջ։ XIX դարի վերջին քառորդին, մյուս ծայրերկրների նման, իհարկե, ոչ միակերպ, Արևելյան Հայաստանն էլ ապրում էր տնտեսական աննախադեպ վերելք, որը պայմանավորված էր ռուսական կապիտալիզմի զարգացմամբ։ Ռուսական կայսրության բաղկացուցիչ մասը հանդիսացող և նրա հետ տնտեսական հաղարավոր թելերով կապված Արևելյան Հայաստանը շեր կարող մեկուսի մնալ սոցիալ-տնտեսական այն մեծ տեղաշարժերից, որոնց կյանքի էր կոչել ռուսական կապիտալիզմը։ Վերջինս իր ամենագոր ուժով նպաստեց Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացմանը և համահարթելով նրա տեղական առանձնահատկությունները, ներգրավեց նրան համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ¹⁵։

Ռուսական բաղմազգ կապիտալիզմի ձևավորումը առաջադիմական նշանակություն ունեցավ Արևելյան Հայաստանի հասարակական-տնտեսական զարգացման համար։ Վերջինիս թևակոխելը զարգացման կապիտալիստական ուղին վերցրեց նրա ինքնամոտի նեղ շրջանակները, նպաստեց Ռուսաստանի հետ նրա տնտեսական կապերի էլ ավելի ամ-

բապնդմանը, ռուս ժողովրդի և կայսրության մյուս ազգերի հետ նրա մերձեցմանն ու նրանց հետ համատեղ քաղաքական-հեղափոխական պայքարի ներգրավմանը։

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը որոշակի փոփոխություններ մտցրեց Արևելյան Հայաստանի բնակչության սոցիալական կառուցվածքի մեջ։ Գյուղացիության քայքայմանն ու շերտավորմանը զուգընթաց ձևավորվում էր արդյունաբերական պրոլետարիատը, հարաբերական գերբնակչությունը և արտագնացությունը նպաստում էին քաղաքային բնակչության արագ աճին։ 1873—1897 թվականների ընթացքում Արևելյան Հայաստանի քաղաքային բնակչությունն աճեց 1,8 անգամ, իսկ Երևան քաղաքի բնակչությունը՝ 2,5 անգամ։ 1865—1900 թթ. ընթացքում Արևելյան Հայաստանում արդյունաբերական արտադրանքի ծավալն աճեց 3,3 անգամ, արդյունաբերական ձեռնարկությունների թիվը՝ 1,3, բանվորների թիվը՝ 1,6, իսկ աշխատանքի արտադրողականությունը՝ 2,1 անգամ¹⁶։ Չնայած այս թվերը բավականին ցածր էին Ռուսաստանի արդյունաբերական զարգացման տեմպերից, այնուհանդերձ վկայում են, որ Արևելյան Հայաստանի արդյունաբերությունը ընթանում էր զարգացման վերընթաց գծով։

Արդյունաբերության ճյուղերից զարգացման առավել արագ տեմպեր էին վերցրել պղնձարդյունաբերությունը և գինու-օղու-կոնյակի արդյունաբերությունը։ 1880 թ. համեմատ 1900 թ. պղնձի ձուլումը ավելացավ ավելի քան 13 անգամ, իսկ գինու արտադրությունը 1890 թ. մինչև 1900 թ. աճեց ավելի քան վեց անգամ¹⁷։ Շարք էին մտնում նոր գործարաններ, եղածներից շատերը վերակառուցվում էին։

Երկաթուղային շինարարությունը մեծապես խթանեց հանքարդյունաբերության, գինու-կոնյակի արդյունաբերության և, ընդհանրապես արևելահայ ողջ տնտեսության հետագա զարգացմանը։ 1899 թ. սկսեց գործել Թիֆլիս—Կարս երկաթուղագիծը, իսկ 1902 թ. Ալեքսանդրապոլ—Երևան գիծը։ Արագ տեմպերով շարունակվում էր Ուլուխանլու—Ջուլֆա երկաթուղագծի շինարարությունը։

Եթե 1893 թ. Ալավերդու գործարանում ձուլվել էր 4841 փութ պղինձ¹⁸, ապա 1900 թ.՝ 19682 փութ, իսկ 1901 թ.՝ 59689 փութ¹⁹: Բացի պղնձից, Ալավերդին երկրի զանազան բնականություններին էր մատակարարում նաև ծծմբաքար: 1900 թ. արտահանվել է մեկ միլիոն 200 հազար փութ ծծմբաքար, որը հասնում էր անգամ հեռավոր էստոնիա²⁰: Զարգանում էր նաև Զանգեզուրի պղնձարդյունաբերությունը: Նշենք միայն հետևյալ փաստը. եթե 1880 թ. այստեղի պղնձածուլական գործարանների տված արտադրանքի գումարը կազմել է 42430 ռուբլի, ապա ընդամենը հինգ տարի անց՝ 1885 թ. այն անցել է 279 հազար ռուբլուց²¹:

Օտարերկրյա կապիտալը, որն Անդրկովկասում խորն արմատներ էր գցել, մեծ շահերով մուտք էր գործել նաև Արևելյան Հայաստանի պղնձարդյունաբերության մեջ:

90-ական թվականներին Երևանում բացվում են գինուկոնյակի մի շարք նոր գործարաններ (Աֆրիկյանի, Գյոզալովի, Սարաչևի, Թայիրովի, Շուստովի): 1899 թվականին ռուս խոշոր կապիտալիստ Շուստովը գնելով Թայիրովի և գինուկոնյակի մի շարք ուրիշ ձեռնարկություններ կոնյակի արտադրությունը կենտրոնացնում է իր ձեռքում: Հայկական կոնյակը մեծ համբավ ուներ ինչպես Ռուսաստանում, այնպես և արտասահմանում, 1899 թ. Երևանի նահանգում արտադրվել է 666 հազար աստիճան կոնյակի սպիրտ²², իսկ սպիրտի արտադրությունը, որը 1890 թ. կազմում էր երկու միլիոն 474 հազար աստիճան, 1900 թ. հասնում է 8992 հազարի²³:

Արևելյան Հայաստանի արդյունաբերության մեջ տեսակարար որոշ կշիռ ուներ աղի արտադրությունը: Կողքի և Նախիջևանի աղահանքերից 1900 թվականին արդյունահանվել է մոտ երկու միլիոն փութ աղ²⁴:

Զարգանում էր նաև մետաքսագործությունը, որում զբաղված էին զգալի թվով բանվորներ: Մետաքսագործական ձեռնարկությունների մեծ մասը կենտրոնացված էր Նախիջևանի գավառում: 70-ական թվականների վերջերից այդ գավառի ներքին և Վերին Ազուլիս գյուղերում գտնվող մե-

տաքսաթելի գործարանատերերը Ֆրանսիայից և այլ երկրներից ստանում էին շերամի բարձրորակ սերմ²⁵:

90-ական թվականներին պղնձարդյունաբերության և գինուկոնյակի արդյունաբերության, ինչպես նաև մետաքսագործության և բամբակամաքրման աշխատանքներում ներդրվում են նոր մեքենաներ, որոնք որոշակիորեն խթանում են վերահիշյալ ճյուղերի զարգացումը:

Այսուհանդերձ, Արևելյան Հայաստանը մնում էր կապրոզիայի ագրարային հետամնաց ծայրամասերից մեկը: 1897 թ. մարդահամարի տվյալներով Երևանի նահանգի բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ գյուղական բնակչության թիվը կազմում էր 87,4 տոկոս²⁶: 1900 թ. արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը կազմում էր ընդհանուր արտադրանքի մոտ 10 տոկոսը²⁷: Այդ փաստը խոսում է ցարիզմի գաղութային քաղաքականության մասին, որը ծայրերկրները համարում էր լուկ հումքի աղբյուր և իրացման շուկա: Յարական կառավարությունը մտահոգված չէր ծայրերկրների տնտեսական զարգացմամբ, իսկ թե մի նոր բան էր ձեռնարկում, ապա հետամուտ էր լուկ նորանոր շահույթներ ստանալուն:

Կապիտալիզմի զարգացումը Արևելյան Հայաստանում ընթանում էր կապիտալիստական հասարակարգի գլխավոր արտադրական ուժի՝ պրոլետարիատի ձևավորման պայմաններում: Հայկական հողի վրա կազմավորվում էր ամենահեղափոխական և առաջադեմ դասակարգը, Ռուսաստանի բազմազգ պրոլետարիատի անբաժան ջոկատը:

Գյուղացիության քայքայման, քաղաքային բնակչության աճի, երկաթուղային շինարարության պայմաններում ձևավորվում էր Արևելյան Հայաստանի պրոլետարիատը, որը XX դարի սկզբին արդեն որոշակի թիվ էր կազմում: Տնտեսագետ Լ. Թումանյանի կարծիքով XIX դարի վերջում այդ թիվը հասել է վեց հազարի²⁸: Իսկ Մ. Աղայանը իրավացիորեն նշում է, որ այն անցել է տասը հազարից²⁹:

1900 թ. պաշտոնական տվյալներով Երևանի նահանգում աշխատում էր ավելի քան 8200 բանվոր³⁰: Եթե այս թվին ա-

վելացնենք նաև Ալավերդու և Ղափանի (սրանք գտնվում էին Երևանի նահանգից դուրս) պղնձարդյունաբերության մեջ աշխատող մոտ վեց հազար բանվորներին³¹, և Կարսի մարզի հազար բանվորներին³², ապա բանվորների թիվը կանցնի 15 հազարից: Եթե սրանից անգամ հանենք ջրաղացներում աշխատողների թիվը (մոտ երեք հազար)³³, ապա վերոհիշյալ ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի բանվորների թիվն, իրոք, կանցնի տասը հազարից:

Ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին Արևելյան Հայաստանում արդեն ձևավորվել էին բուրժուական հասարակարգի երկու հակամարտ դասակարգերը՝ բուրժուազիան և պրոլետարիատը: Սակայն հայ բուրժուական ազգի ձևավորման գլխավոր առանձնահատկություններից մեկն այն էր, որ հայ բուրժուազիայի և արդյունաբերական պրոլետարիատի գերակշռող մասը ձևավորվեց և սկսեց գործել Արևելյան Հայաստանի սահմաններից դուրս: Եվ եթե առաջինը Անդրկովկասի և Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններն էր շտապում լուկ շահույթի տենչով բռնկված, ապա երկրորդի համար այդ ճանապարհը սոսկ գոյատևման հնարավորություն էր ընձեռում:

Արևելյան Հայաստանի տնտեսական հետամնացության և Բաքվի, Քիֆլիսի, Բաթումի նման արդյունաբերական կենտրոնների մոտիկության պայմաններում հայ բուրժուազիան գերադասում էր իր կապիտալները ներդնել հիմնականում այդտեղ և ոչ, օրինակ, Երևանում, Ալեքսանդրապոլում, Շուշում, Ալավերդում և այլուր: Ահա թե ինչ է գրում 1892 թ. իր հաշվետվություններից մեկում Կարսի նահանգապետը. «Կարսի գործարանային արդյունաբերության թույլ զարգացման պատճառները ձեռներեց կապիտալիստների բացակայության հետևանք են»³⁴:

Փոխարենը հայ բուրժուազիան մեծ բաժին ուներ Բաքվի նավթարդյունաբերության, Քիֆլիսի սննդի և թեթև արդյունաբերության մեջ: Երկրամասի բազմազգ բուրժուազիայի շրջանում ամենից հաստատուն դիրքերը գրավել էր տնտեսապես ուժեղ հայ բուրժուազիան³⁵: Զգալի թիվ էին կազմում

նաև Անդրկովկասի հայ խոշոր առևտրականները: 1890 թ. Ալեքսանդր II-ին ուղղած զեկուցագրում Կովկասի կառավարչապետը նշում էր. «Հայերն Անդրկովկասում գրավել են համարյա ողջ առևտուրը, արդյունաբերությունը, քաղաքներում ունեցվածքի մեծ մասը և հողային սեփականության մի մասը»³⁶:

Ինչ վերաբերում է հայ պրոլետարիատին, ապա վերջինս նույնպես մեծ թիվ էր կազմում Անդրկովկասի պրոլետարիատի շարքերում: 1900 թ. Բաքվի նավթարդյունաբերության մեջ աշխատող բանվորների 20—22 տոկոսը հայեր էին³⁷: Զգալի թվով հայեր էին աշխատում Քիֆլիսի ծխախոտի, կոշիկի և այլ գործարաններում, գլխավոր երկաթուղային արհեստանոցներում, Բաթումի գործարաններում և այլուր: XIX դարի վերջին Վրաստանի բանվոր դասակարգի մոտ 35 տոկոսը կազմում էին հայ բանվորները³⁸:

Արևելյան Հայաստանի պրոլետարիատն իր ազգային կազմով միատարր չէր: Նրա շարքերում կային ազգբեջանցիներ և ռուսներ, վրացիներ և ուկրաինացիներ, հույներ, պարսիկներ և այլք: Բանվորները դաժան շահագործման էին ենթարկվում, աշխատում օրական 12—14 ժամ և ավելի, մեծ ձգձգումներով ստանում առանց այն էլ շնչին աշխատավարձը, գտնվում կենցաղային անմխիթար պայմաններում:

Անտանեկի ծանր էր Ալավերդու և Ղափանի պղնձածուլական գործարանների, երկաթուղու շինարարության, Կողբի աղահանքերի և մյուս վայրերի ու ձեռնարկությունների բանվորների դրությունը: Ահա թե ինչ է գրում Կողբի աղահանքների մասին «Մուրճ» ամսագիրը. «Արշալույսը դեռ չբացված մշակները կազմ ու պատրաստ խմբավորված էին լինում աղահանքի մոտ, յուրաքանչյուրը իր օրվա հացը մեջքին կապած «տեր աստված» կանչելով մտնում էին որջերից ներս և սկսում կատարյալ խլուրդային աշխատանք, շիմանալով ինչ հանկարծահաս վտանգի կարող են ենթարկվել: Աշխատում էին ձեռքի ճրագների լուսավորության ներքո: Դուրս գալով այդ խավար խորխորատներից արևի մայր

մտնելուց հետո, երկնքի վրա սփռած վերջալույսը նրանց համար կարմիր առավոտ էր թվում»³⁹։

Բանվորներից շատերը, որ դեռ երեկ էին թողել գյուղական խավարի թագավորությունը պարզորոշ կերպով չէին պատկերացնում իրենց նոր տեղն ու դերը, շփոթին իրենց պայմանների բարելավման ձևերն ու միջոցները։ Խոսելով Կարս քաղաքի բանվորների թշվառ վիճակի մասին «Մուրճ» ամսագիրը նշում էր, որ դրա պատճառներից մեկն էլ այն է, որ բանվորները միավորված չեն, որ ընդհանուր շահերի պաշտպանություն համար միասնաբար հանդես չեն գալիս⁴⁰։

Բանվորական շարժման սկզբնավորումը և հասունացումը սերտորեն կապված են երկրի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման հետ։ Կապիտալիստական շահագործմանը զուգընթաց աստիճանաբար ձևավորվում էր նաև բանվորների դասակարգային գիտակցությունը, սկիզբ էր դրվում բանվորական շարժմանը, որը 90-ական թվականներին Անդրկովկասում նկատելի աշխուժացում ապրեց։ Բաբվի, Թիֆլիսի, Թաթուրի բանվորական գործադուլներին իրենց ակտիվ մասնակցությունն էին բերում նաև տեղի հայ բանվորները։ Համատեղ պայքարի ընթացքում ամրանում էր երկրամասի բազմազգ պրոլետարիատի ինտերնացիոնալ միասնությունը։

Մինչև XIX դ. 90-ական թվականները Արևելյան Հայաստանում եղել են առանձին բանվորական ելույթներ, սակայն դրանք տարեբային պոռթկումներ էին, բանվորական շարժման լոկ նախաքայլեր։ Դա այն ժամանակաշրջանն էր, երբ նոր էր սաղմնավորվում արևելահայ պրոլետարիատը։ Այսպես, օրինակ, 1864 թ. Ալավերդու պղնձաձուլական գործարանի բանվորների գործադուլը⁴¹, 1860—70-ական թվականներին Սուրմալուի գավառի Կողբի աղահանքերի բանվորական ելույթները⁴²։

Արևելահայ բանվորական շարժումն իր առաջին քայլերը կատարել է տակավին արևելահայ պրոլետարիատի կազմավորման ժամանակաշրջանում։ Այսուհանդերձ, Արևելյան Հայաստանի պրոլետարիատի դասակարգային պայքարի՝ որպես հասարակական կյանքի նոր, առաջմղիչ ուժի պատմու-

թյան պարբերացման սկիզբը համարվում է անցյալ դարավերջի վերջին տասնամյակը՝ արևելահայ պրոլետարիատի ձևավորման ժամանակաշրջանը։ Միայն կապիտալիզմը կարող էր ծնել իր գերեզմանափորին՝ բանվոր դասակարգին, հետևաբար և բանվորական շարժմանը։ XIX դ. 90-ական թվականներին արևելահայ պրոլետարիատի ելույթները համեմատաբար հաճախակի են դառնում, որոնց վրա ինչ-որ շահով սկսում է զգացվել երկրամասի արդյունաբերական կենտրոնների բանվորական շարժումների ազդեցությունը։

1895 թ. հուլիսին գործադուլ են հայտարարում Ալեքսանդրապոլի տպարաններից մեկի բանվորները։ «Ամսի 25-ին Մալխասյանի տպարանի բոլոր բանվորները գործադուլ էին արել. գործադուլի պատճառը,— կարդում ենք «Մշակ» թերթում, ռոճիկի քուլությունը և անկանոն վճարելն է։ Ինչպես ասում են, բանվորները ուր հարկն է բողոք են տալու, որպեսզի իրենց հասանելիք օրավարձը ստանան։ Այդ տպարանում բանվորները ստանում են ամսական 3—12 ռուբլի։ Օրական բանում են 14—16 ժամ»⁴³։

Անցյալ դարավերջին՝ 90-ական թվականներին Արևելյան Հայաստանում ծավալված ամենամեծ շինարարությունը դա Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Կարս երկաթուղու շինարարությունն էր, ամենամեծը թե շինարարական աշխատանքների ծավալով, թե՛ նյութական միջոցների ներդրմամբ ու երկրի տնտեսական զարգացման համար ունեցած նշանակությամբ, այլև այդտեղ կենտրոնացած բանվորական ուժի առումով։ Ընդհանրապես Արևելյան Հայաստանի բանվորական շարժման վրա իր կնիքն էր դնում այն հանգամանքը, որ այստեղ փոքր խմբերով ցրված լինելով մանր ձեռնարկություններում բանվորները չէին ներկայացնում պրոլետարիատի կենտրոնացված ուժ։ Բացառություն էին կազմում պղնձարդյունաբերության գործարանները և վերոհիշյալ երկաթգծի շինարարությունը։ Ուստի պատահական չէ, որ բանվորական առաջին ելույթները այստեղ համեմատաբար առավել վաղ դրսևորվեցին։

Թիֆլիսի երկաթուղային գլխավոր արհեստանոցների և

դեպոզի բանվորների ելույթների ազդեցության տակ Քիֆ-լիս—Կարս երկաթուղու շինարարության Ախթալայի, Զաման-լուի, Կարսի տեղամասերի հարյուրավոր բանվորներ իրենց կենսական շահերի պաշտպանության համար գործադուլների են դիմում, որոնք ճնշելու համար անմիջապես գործի է անցնում ոստիկանությունը⁴⁴։

Պայքարի առաջին ազդանշանը տվեցին Ախթալայի տեղամասի բանվորները։ Կովկասի կառավարչապետին հասցեագրած Քիֆլիսի նահանգապետի ղեկուցադրից տեղեկանում ենք, որ 1896 թ. ապրիլի 8-ին մոտ 200 բանվորներ գործադուլ են անում և պահանջում կապալառուին անմիջապես վճարել իրենց աշխատավարձը։ Բայց ինչպես վկայում է արխիվային փաստաթուղթը «ոստիկանական միջոցներով կարգը վերականգնվում է»⁴⁵։ Նոր բարդություններից խուսափելու նպատակով կապալառուն սկսում է վճարել բանվորների մի մասի աշխատավարձը։ Սակայն տեղեկանալով, որ ոչ բոլորն են ստանալու աշխատավարձ, տարբեր ազդեցությունների պատկանող մոտ 400 բանվորներ ապրիլի 15-ին նորից են հավաքվում գրասենյակի մոտ։ Մահակներով զինված նրանք հարձակվում են ոստիկանների վրա, խլում նրանց մոտ եղած զենքեր։ Վերջիններս փախուստի են դիմում։ Սակայն բանվորների դեմ շուտով ոստիկանական նոր ուժեր են ուղարկվում։ Առավել ակտիվություն հանդես բերած 8 բանվորներ ձերբակալվում և դատի են տրվում⁴⁶։

Ախթալայի տեղամասի բանվորների ելույթը սթափեցրեց տեղական իշխանություններին և երկաթուղու շինարարության ղեկավարությունը։ Այն միաժամանակ ոգեշնչող նշանակություն ունեցավ հարևան տեղամասերի բանվորների համար։ Այսպես, օրինակ, 1896 թ. օգոստոսի 11-ին ըմբոստացան Ղարաբաղի իսախանի, իսկ ղեկտեմբերի 3—7-ը՝ Զամանլուի տեղամասերի բանվորները⁴⁷։

Ուշագրավ են հատկապես Զամանլուի տեղամասի բանվորական հուզումները, որոնք լայն արձագանք գտան։ Այլևս չկարողանալով տանել կապալառու Դեմոսիի կամայականությունները բանվորները թողնում են աշխատանքը և մոտ

300 հոգով ուղղվում դեպի գրասենյակ։ Այնուհետ դեպքերը զարգանում են համարյա նույն արագությամբ ու ընթացքով, ինչպես որ Ախթալայում։ Միակ տարբերությունը լինում է այն, որ այստեղ կազակները կրակում են ոչ թե օդում, այլ բանվորների վրա, որի հետևանքով երեք հոգի վիրավորվում են։

Կովկասի կառավարչապետին ուղղած հեռագրում, խոսելով բանվորական այդ «անկարգությունների» մասին, Երևանի նահանգապետն անգամ ստիպված էր ընդունել, որ բանվորները պաշարել են Դեմոսիի գրասենյակը, որովհետև երկար ժամանակ խաբված են եղել խոստումներով և օգոստոս ամսվա սկզբից աշխատավարձ չեն ստացել⁴⁸։ Իսկ Ալեքսանդրապոլի գավառապետն իր ղեկուցադրում այդ նույն կապալառուին մեղադրում է կամայականության մեջ, որը հաշվի չի նստում «բանվորների օրինական շահերի հետ»⁴⁹։ Սակայն դժվար չէ բնութագրել նաև նման խոսքերի հեղինակներին, որոնք կապալառուին պատժելու փոխարեն շտապում են Զամանլու ուղարկել կազակների շոկատ։

Մի քանի օր տևած պայքարի շնորհիվ բանվորները, ի վերջո, հասնում են իրենց արդարացի պահանջի բավարարմանը։ Ուշագրավ է, որ բանվորական այս ելույթի մասին տեղեկանում է անգամ Նիկոլայ II կայսրը։ 1890—1900-թվականների ընթացքում Ռուսաստանում տեղի ունեցած «բանվորական անկարգությունների» վերաբերյալ կայսրին ներկայացված ոստիկանության ղեկարտամենտի ղեկուցադրում, որտեղ, անշուշտ, արձանագրված են առավել աչքի ընկած ելույթները, 1896 թ. վերաբերող բաժնում (ի դեպ, Ռուսաստանում այդ թվականին եղել է նման 43 ելույթ)⁵⁰ հիշատակվում է նաև Քիֆլիս—Կարս երկաթուղու շինարարության Զամանլուի տեղամասի բանվորների ղեկտեմբերյան ելույթը⁵¹։

Նույն հոգի վրա բանվորական հուզումներն ավելի բուռն են դրսևորվում 1897 թ. հոկտեմբերին Կարսում (երկաթգծի շինարարության 5-րդ տեղամասում)⁵²։ Հոկտեմբերի 24-ին մոտ 250 բանվորներ գործադուլ են անում և իրենց հասանելիք գումարը ստանալու պահանջով ներկայանում շինարարության

տեղամասի պետին: «Ի՞նչ անձը բռնությունից պաշտպանելու»
օգնության խնդրանքով վերջինս դիմում է Կարսի նահանգա-
պետին⁵³: Ժամանում են ոստիկանական լրացուցիչ ուժեր,
որոնց հետ ընդհարման ժամանակ մի բանի բանվորներ ձեր-
բակավում են⁵⁴:

Կարսի տեղամասի բանվորների պայքարը դրանով չի ա-
վարտվում: Շուտով, մի բանի հարյուր բանվորներ թողնում
են աշխատանքը և մեկնում Թիֆլիս: Նրանք կազմակերպված
ներկայանում են երկաթուղու շինարարության վարչություն,
ապա ուղղվում Կովկասի կառավարչապետի պալատ: Բանվոր-
ների կռիվտիվ բողոքի երթը մեծ տպավորություն է գործում:
Մամուլում երևացած հրապարակումների շնորհիվ այդ լուրը
տարածվեց երկրամասի շատ անկյուններում⁵⁵: Կարսի տեղա-
մասի բանվորները համառ պայքարով, ի վերջո, հասան իրենց
արդարացի պահանջների բավարարմանը:

Բանվորական հուզումները ուղեկցում էին Թիֆլիս—Կարս
երկաթուղու շինարարության աշխատանքներին: Գործի ոչ ճիշտ
կազմակերպման, շինարարության վարչության ու կապալառու-
ների ճնշումների և կամայականությունների հետևանքով բան-
վորական ընդվզումներ ու դժգոհություններ էին դիտվում նաև
մյուս տեղամասերում: Օրինակ, աշխատավարձը ժամանակին
չստանալու կապակցությամբ երկաթգծի 84-րդ վերստի (Ալա-
վերդու մոտ) թունելի վրա աշխատող իտալացի բանվորների
մի խումբ 1898 թ. բողոք է ներկայացնում Կովկասի կառա-
վարչապետ Գուլիցինին⁵⁶:

1899 թ. վերոհիշյալ բնույթի դժգոհություններ են ծագում
նաև կապալառու Ռաֆայելովի տեղամասում: Բանվորական
բողոքները հասցեագրվում են Կարսի նահանգապետին, ճանա-
պարհների հաղորդակցության մինիստրությանը: Իսկ բան-
վորներից թուրքահայտակները օգնության համար դիմում են
Կարսում Թուրքիայի գլխավոր հյուպատոսին: Վերջինս կապ-
վում է Թուրքիայի դեսպանի հետ, որն էլ այդ բողոքի մասին
տեղեկացնում է Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրու-
թյանը: Այստեղից բողոքն ուղարկվում է Կովկասի կառավար-
չապետին: Ի վերջո, այն հանգրվանում է Կարսի նահանգապե-

տի գրասենյակում⁵⁷: Նման երկարատև ճամփորդությունից և
հեղինակավոր ատյանների միջնորդությունից հետո միայն,
բանվորները ստացան իրենց հասանելիք գումարը: Այս կա-
պակցությամբ Կարսի նահանգապետը կառավարչապետին
գրում էր, որ իրենց հասանելիք գումարը կապալառուներից
ստանալու համար ինչպես օտարերկրյա, այնպես էլ տեղացի
սևագործ բանվորների համբերությունը հասցված է ծայրահե-
ղության⁵⁸:

«Մշակ» թերթից տեղեկանում ենք այն գործադուլի մասին,
որը տեղի է ունեցել 1899 թ. գարնանը Կարսի մարզի Կաղզվա-
նի աղահանքերում: Բանվորները, որոնք աշխատում էին 12—
14 ժամ և ստանում ընդամենը 40 կոպեկ օրավարձ բողոքնե-
րով ու խնդրանքներով ոչ մի արդյունքի չեն հասնում: Ուստի
դիմելով գործադուլի նրանք պահանջում են օրավարձն ավե-
լացնել 10 կոպեկով և վերջ տալ վերակացուների ճնշումներին⁵⁹:
Կաղզվանի աղահանքերի գործադուլի վերաբերյալ մեզ այլ
տեղեկություններ հայտնի չեն:

Անշուշտ, արխիվային փաստաթղթերի ու ժամանակի
պարբերական մամուլի նյութերի հետագա ուսումնասիրումը
հետազոտողներին հնարավորություն կտա լրացնելու արևելա-
հայ բանվորական շարժման սկզբնավորման պատմության
էջերը:

Արևելյան Հայաստանի բանվորական այս առաջին գոր-
ծադուլները⁶⁰, չնայած իրենց փոքր մասշտաբներին, որոշակի
դեր խաղացին բանվորների համախմբման ու կազմակերպման,
նրանց դասակարգային ինքնագիտակցության ձևավորման
գործում: Տեղին է նշել, Վ. Ի. Լենինի այս առումով գործադու-
լային շարժմանը տված գնահատականը. «...Ամեն մի գործա-
դուլ, որքան էլ շնչին լինեին նրա հետևանքները, տալիս էր ինչ-
որ անգնահատելի, նոր, կարևոր, բովանդակալից մի բան...»⁶¹:

Տնտեսական հողի վրա ծագած բանվորական այս առաջին
ելույթները տարբերային ու տեղային բնույթ էին կրում: Դրանք
թույլ էին ու անկազմակերպ և որպես կանոն դատապարտվում
էին անհաջողության: Բանվորները շունեին անհրաժեշտ փորձ
ու ղեկավար կենտրոն, գործողությունների միասնական պլան,

բացակայում էին պայքարի մասշտաբայնությունն ու հետևողականությունը: Եվ այլ կերպ չէր էլ կարող լինել, քանզի դժբախտ միայն առաջին քայլերն էին: Այնուհանդերձ, բանվորական շարժման սկիզբը որակական նոր երևույթ էր մեր ժողովրդի հասարակական կյանքում, դա սկիզբն էր մեծ պայքարի, որն ուղի էր հարթում Արևելյան Հայաստանում մարքսիզմի տարածման համար:

Կապիտալիզմի զարգացումը Արևելյան Հայաստանում ծնեց ամենահեղափոխական ուժը՝ բանվորական շարժմանը, որը շատ շուտով ձեռք էր մեկնելու գյուղացիական և աղքատինազատագրական շարժումներին, շրջելու էր դրանք պայքարի մեկ միասնական հունի մեջ և գլխավորելու ինքնակալության գեմ ուղղված այդ պայքարը:

* * *

Վ. Ի. Լենինը նշում է, որ «Հողագործական կապիտալիզմի յուրաքանչյուր քայլը դեպի առաջ նշանակում է ներքին շուկայի աճ, շուկա, որ ըստ Մարքսի տեսության, հատկապես հողագործական կապիտալիզմի միջոցով էլ ստեղծվում է»⁶²: Արևելյան Հայաստանը գնալով ավելի ու ավելի էր ներքաշվում համառուսական շուկայի մեջ: Նրա տնտեսությունը աստիճանաբար ենթարկվում ու հարմարվում էր այդ շուկայի օրավուր աճող պահանջարկներին: Արդյունաբերության զարգացումը Կենտրոնական Ռուսաստանում և առևտրական հողագործության զարգացումը ծայրերկրներում գտնվում էին անբակտելի կապակցվածության մեջ և ստեղծում փոխադարձ շուկա մեկը մյուսի համար:

Համառուսական շուկայի անմիջական աղղեցության տակ Արևելյան Հայաստանում տեղի էր ունենում բնատնտեսության քայքայման պրոցես, ուժեղանում էին ապրանքադրամական հարաբերությունները, կատարվում էր գյուղատնտեսության մասնագիտացում: Անդրադառնալով ետնեֆորմյան Ռուսաստանի սոցիալ-տնտեսական կյանքին Ֆ. Էնգելսը նշում է, որ «Համաշխարհային շուկայի հետ անմիջական շփման մեջ են

մտնում երկրի նույնիսկ ամենահեռավոր մասերի հողագործական արտադրանքները»⁶³: Արևելյան Հայաստանի տարբեր գավառներ մասնագիտանում էին գյուղատնտեսական որոշակի մթերքների արտադրությամբ: Մասնագիտացումը նպաստում էր գյուղատնտեսության ընդհանուր առաջադիմությանը: Գյուղատնտեսությունը սկսում էր աշխատել շուկայի համար՝ աստիճանաբար բարձրացնելով իր ապրանքայնությունը: Ինչպիսի պահանջարկ ներկայացնում էր ռուսական զարգացող արդյունաբերությունը, ըստ այդմ էլ կայսրության ծայրերկրներում տեղի էր ունենում համապատասխան հումքի ընդլայնում: XIX դարի 60-ական թվականներին բամբակի արտադրությունն Արևելյան Հայաստանում շեշտակի վերելք ապրեց: Գա կապված էր ինչպես համառուսական շուկայում, այնպես էլ եվրոպական շուկայում բամբակի մեծ պահանջարկի հետ: Նման պայմաններում Արևելյան Հայաստանում ղգալի տեղաշարժեր կատարվեցին նաև խաղողագործության և շերամապահության բնագավառներում:

XIX դարավերջին Արևելյան Հայաստանի առևտրական հողագործության առաջատար ճյուղը համարվում էր բամբակագործությունը: Անդրկովկասի բամբակի արտադրության մեջ տեսակարար մեծ կշիռ ուներ Երևանի նահանգը, որի նշանակալից բաժինն ընկնում էր Սուրմալուի գավառին: Գավառի օգտակար հողատարածքի 2/3-ը գրավում էին բամբակի ցանքսերը: 90-ական թվականներին նահանգում արտադրվող բամբակի 48,9 տոկոսը⁶⁴ տալիս էր Սուրմալուի գավառը: Եթե 1880 թ. Երևանի նահանգը արտադրել է 81 հազար փութ բամբակ, իսկ 1885 թ.՝ 148 հազար, ապա 1895 թ. այդ թիվը հասել է 364 հազարի, իսկ 1899 թ.՝ ավելի քան 406 հազարի: Այդ նույն թվականին Երևանի նահանգում բամբակի ցանքսերը ղբաղեցնում էին մոտ 25 հազար դեսյատին⁶⁵ հողատարածք: Վերոհիշյալ տարիների ընթացքում բամբակի բերքատվությունը ունեցել է որոշակի տատանումներ, սակայն ամբողջության մեջ վերցրած այն ընթացք է վերընթաց գծով: Բամբակի արտադրության ծավալը սերտորեն կապված էր Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերության վերելքի հետ, հայրենական բամբակի

արտադրութեան հանդէպ կառավարութեան հովանավորողական քաղաքականութեան հետ:

Երևանյան բամբակի գնորդների դերում հանդես էին գալիս Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերութեան այնպիսի նշանավոր ֆիրմաներ, ինչպիսիք էին Ս. Մորոզովի մանուֆակտուրային ընկերությունը, Կորզինկինի մոսկովյան ֆիրման, Ալեքսեևի մոսկովյան առևտրաարդյունաբերական ընկերությունը և Պոզնանսկու Լոձի մանուֆակտուրային ընկերությունը, որոնք 1886—1887 թթ. Երևանում բացեցին իրենց ներկայացուցչությունները: Նրանք իրենց հետ բերեցին ամերիկյան լավորակ բամբակենու սերմ, նոր սիստեմի ձիաքարշ և շոգեքարշ սեղմիչներ, բամբակագտիչ սարքավորումներ⁶⁶:

Արևելյան Հայաստանի բամբակագործութեան ապրանքային բնույթի մասին է խոսում այն փաստը, որ ղանազան ֆիրմաների կողմից Երևանի նահանգում 1887 թ. բամբակի բերքից (որը կազմել է 326 հազար փութ), գնվել է մոտ 300 հազար փութ բամբակ⁶⁷:

Բամբակի նախնական մշակման պարզունակ գործիքները տեղի էին տալիս արտասահմանից ներմուծվող նոր գործիքներին՝ կոտոն-չիններին: Եթե 1864 թ. Երևանի նահանգում կար ընդամենը երեք կոտոն-չին, ապա դարավերջին՝ մոտ 350⁶⁸: Զինները շարունակ ավելանում էին, բամբակի մաքրման հին եղանակը, որը կատարվում էր այսպես կոչված «չագրիխների» օգնությամբ, անցնում էր մոռացության գիրկը:

Բամբակագործությամբ զբաղվող գյուղացիները շատ էին տուժում հատկապես միջնորդ առևտրականներից, որոնք «արջի ծառայություն» էին մատուցում նրանց: Կարիքի մեջ խրված գյուղացին, որը դրամի մեծ կարիք ուներ, միջնորդ առևտրականին դեռ զարնանը ստիպված կես գնով վաճառում էր բամբակի իր ստանալիք բերքը: Ստացվում էր այնպես, որ փութը տասը ութբլով վաճառվող բամբակից անմիջական արտադրողները ստանում էին ամենաշատը 4—5 ուրբի, իսկ մնացածը մտնում էր միջնորդ առևտրականի գրպանը⁶⁹:

Երևանի նահանգի գյուղատնտեսական արտադրության ապրանքային բնույթը պայմանավորված էր նաև խաղողա-

գործությամբ, որն իր նախկին սպառողական բնույթին, հատկապես 90-ական թվականներից ձեռք էր բերել առևտրաապրանքային նշանակություն: Դրա հիման վրա սկսել էր զարգանալ արդյունաբերության մի նոր ճյուղ՝ գինու-կոնյակի արդյունաբերությունը:

Կարսի մարզում խաղողի այգիներ համարյա չեն եղել, իսկ Երևանի նահանգում դրանք գերակշռել են Երևանի և էջմիածնի գավառներում: 1900 թ. տվյալներով նահանգում խաղողի այգիները զբաղեցրել են 8507 դեսյատին: Չնայած խաղողի այգիների տարածքով երկրամասի նահանգների շարքում Երևանի նահանգը ամենավերջին տեղում էր, բայց նույն թվականի տվյալներով նրա արտադրած երեք միլիոն 348 հազար փութ խաղողի բերքը ամենաբարձր ցուցանիշն էր Անդրկովկասում⁷⁰:

Գյուղատնտեսության ճյուղերից ապրանքային բնույթ էր ստացել նաև շերամապահությունը: Այն տարածված էր հատկապես Զանգեզուրի և Նախիջևանի գավառներում, որտեղ շերամապահությունն ամբողջովին ենթարկվում էր շուկային: Զանգեզուրի գավառը 1885 թ. տվել է 10.520 փութ շերամի բոժոժ⁷¹, իսկ Նախիջևանի գավառում մշակվող բոժոժը դարավերջին կազմել է 5400 փութ⁷²: Ի դեպ, շերամապահության հետագա զարգացման նպատակով 90-ական թվականների սկզբներին մի շարք ուսումնարաններ են բացվել Նախիջևանի, Զանգեզուրի, Շուշիի գավառներում և այլուր⁷³:

Հացահատիկային տնտեսությունը և անասնապահությունը, որոնք գյուղական ազգաբնակչության գլխավոր զբաղմունքն էին, նույնպես ձեռք էին բերել ապրանքային բնույթ: 80—90-ական թվականներին Արևելյան Հայաստանի շրջանների մեջ հացահատիկային տնտեսության զարգացման ամենաբարձր ցուցանիշներից մեկը պատկանում էր Զանգեզուրի գավառին: Եթե 1880 թ. այստեղ արտադրվել է 354.650 շետվեր ցորեն⁷⁴, ապա 1890 թ.՝ 534 հազար շետվեր⁷⁵: Ղազախի գավառի դեմքը նույնպես բնորոշում էր հացահատիկային տնտեսությունը: 1880 թ. այստեղ հավաքվել է 108.700 շետվեր հացահատիկ, իսկ 1890 թ. այն կազմել է 326.365 շետվեր⁷⁶:

1880—90-ական թվականներին հացահատիկի արտադրության առաջնությունը Երևանի նահանգում պատկանում էր էջմիածնի և Սուրմալուի գավառներին: Սակայն դարավերջին այդ դիրքը նրանք զիջում են Ալեքսանդրապոլի գավառին և Կարսի մարզին: Կարսի մարզը շուտով արժանանում է երկրամասի հացի շտեմարան կոչվելու պատվին: Եթե 1885 թ. մարզում հավաքվել է 2.915.495 փութ հացահատիկ⁷⁷, ապա 1897 թ. այդ թիվը հասել է մոտ հինգ միլիոնի⁷⁸: Ինչ վերաբերում է Երևանի նահանգին, որը 80-ական թվականներին հացահատիկ էր արտահանում անգամ այլ երկրներ, 90-ական թվականներից ստիպված էր այն ներմուծել: Ռուսաստանից ներմուծվող էժան հացը լուրջ մրցակցի հայտ էր ներկայացնում տեղական հացահատիկային տնտեսությանը և նպաստում վերջինիս ճգնաժամի խորացմանը: Բնակչության աճն այստեղ չէր ուղեկցվում հացահատիկի արտադրության համապատասխան աճով և, ընդհանրապես, 1891 թ. հետո երկար տարիներ շարունակ հացահատիկի համախառն բերքը Երևանի նահանգում գրեթե չի ավելանում⁷⁹:

Նույնը չի կարելի ասել անասնաբուծության մասին, որի ապրանքային բնույթը գնալով ավելի խորն էր արտահայտվում: Ընդամենն, անասունների գլխաքանակի աճը գերազանցում էր բնակչության աճի տեմպերը: Օրինակ, եթե 1886 թ. Երևանի նահանգում գյուղական բնակչության մեկ շնչին ընկնում էր 0,4 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, ապա 1900 թվականին՝ 0,6 գլուխ, իսկ Կարսի մարզում համապատասխանաբար 1,1 և 1,8 գլուխ⁸⁰:

Խոսելով անասնաբուծության ապրանքային բնույթի մասին, անհրաժեշտ է նախ և առաջ հիշատակել Կարսի մարզը, Ալեքսանդրապոլի և Նոր Բայազետի գավառները, որոնք միս, բուրդ, կաթնամթերք էին մատակարարում ինչպես Արևելյան Հայաստանի բնակչությանը, այնպես էլ նրա սահմաններից շատ հեռու:

1886—1899 թվականների ընթացքում Երևանի նահանգում մանր եղջերավոր անասունների գլխաքանակը ավելացել է 213 հազարով՝ հասնելով մեկ միլիոն 33 հազարի, իսկ խոշոր

եղջերավոր անասունների գլխաքանակը՝ ավելի քան 238 հազարով, համապատասխանաբար հասնելով 516 հազարի: Ի գեպ, այս վերջին ցուցանիշով Երևանի նահանգը դարավերջին անդրկովկասյան նահանգների շարքում գրավում էր առաջին տեղը⁸¹:

Անասնապահության ապրանքային բնույթը բնորոշ էր նաև Բորչալուի գավառին, որը Թիֆլիսի նահանգում իրեն հավասարը չունեցող ոչ միայն հացահատիկի արտադրության բնագավառում, այլև համարվում էր նահանգի արդյունաբերական պանրագործության կենտրոնը⁸²: 1896 թ. «Մշակ» թերթը գրում էր, որ վերջին տարիների ընթացքում կատարելագործված եվրոպական կաթնատնտեսությունը մեծ զարգացում էր ստացել գավառում և որ կաթնատնտեսային նոր գործարաններ էին բացվել Վորոնցովկա, Զալալօղլի, Իմազլի գյուղերում, որոնց մեծ մասը ձեռք էր բերել Լեֆելդի խնոցի և սերզատ մեքենա⁸³:

Բորչալուի գավառում զարգացած էր ինչպես առևտրական ոչխարաբուծությունը, այնպես և խոզաբուծությունը: Այդ է վկայում այն փաստը, որ դարավերջին գավառի միայն կոռի տեղամասից վաճառքի համար զանազան վայրեր էին ուղարկում տարեկան շուրջ 15 հազար խոզ⁸⁴: Խոզաբուծությունը առևտրական բնույթ ուներ նաև Ղազախի գավառի հայ գյուղացիության շրջանում:

Անասնաբուծության զարգացման տեմպերը, այնուհանդերձ, դանդաղ էին: Իրեն զգացնել էր տալիս կերի կայուն բազայի պակասը, որն արդյունք էր ոչ միայն բնակիչմայրական անբարենայաստ պայմանների, այլև նրա, որ վարելահողերն ընդարձակելու նպատակով շարունակ կիրառվում էր արոտավայրերի կրճատման պրակտիկան: Որոշիչ դեր էին խաղում նաև անասունների զանազան վարակիչ հիվանդությունները և որ ամենակարևորն է՝ գյուղացիական մասսաների ընդհանուր քայքայվածությունը:

Ապրանքային տնտեսության զարգացումը ուղեկցվում էր գյուղատնտեսության մեջ կատարելագործված գործիքների ներդրմամբ, որոնք հիմնականում ներմուծվում էին Ռուսաստա-

նից և արտասահմանից: Միաժամանակ Երևանում, Ալեքսանդրապոլում, Շուշիում դարավերջին առաջ են գալիս գյուղատնտեսական գործիքներ արտադրող և նորոգող ձեռնարկություններ: 90-ական թվականներին Երևանում սկսում է գործել Տեր-Չաքարյանցի գործարանը, որն արտադրում էր կաշիչններ և գյուղատնտեսական այլ գործիքներ⁸⁵: Գյուղատնտեսական տեխնիկայի նորոգման և պատրաստման արհեստանոցներ են առաջ գալիս նաև Ալեքսանդրապոլում, Նոր Բայազետում, Իգդիրում, Ղուրղուղուլի, Վորոնցովկա գյուղերում և այլուր⁸⁶:

1885 թ. Ղազախի գավառում օգտագործվում էին մոտ 30 եվրոպական գույքաններ, որոնք հայտնի էին «կարմիր» կամ «բուլղարական» անուններով⁸⁷ և կատարելագործված այլ գործիքներ:

Տեղին է նշում Ա. Համբարյանը, որ դարավերջին Արևելյան Հայաստանի գյուղատնտեսության բոլոր ճյուղերը այս կամ այն չափով ներգրավված էին ապրանքադրամական հարաբերությունների մեջ: Ապրանքարտադրողների հիմնական մասսան մանր գյուղացիական տնտեսություններն էին: «19-րդ դարի երկրորդ կեսին առևտրական կապիտալն իր ցանցի մեջ բաշեց գյուղացիության համեմատաբար մեծ մասսա և վաշխառուական կապիտալի հետ միասին կազմում էր կաբալի հիմնական տարրը հայկական գյուղում, իսկ կաբալը հարաբերությունների որոշ համակարգ էր, այն է՝ կապիտալիստական հարաբերությունների սաղմնային համակարգ»⁸⁸:

Արևելյան Հայաստանի գյուղատնտեսական արտադրության ապրանքային բնույթը, առևտրական հողագործությունը խոսում են այն մասին, որ հայ գյուղը ներքաշվել էր կապիտալիստական հարաբերությունների ոլորտը: Չնայած բազում խոչընդոտներին, որոնք հարուցում էին ֆեոդալիզմի մնացուկները, հաղորդակցության ճանապարհների անմխիթար վիճակը, հնացած տեխնիկայի տիրապետումը և այլն, այդ հարաբերությունները զարգանում էին և նպաստում մի կողմից արտադրողական ուժերի ծաղկմանը, իսկ մյուս կողմից՝ աշխատավոր ժողովրդի շահագործման նոր ձևերի արմատավորմանը:

Ռուսաստանի ետոնֆորմյան կյանքը ծնեց գյուղատնտեսության կապիտալիստական էվոլյուցիայի ձևերի բազմակերպություն: Նույնիսկ մի նահանգի շրջանակներում, օրինակ, Երևանի, կարելի է նկատել գյուղում կապիտալիզմի զարգացման տարբեր աստիճաններ և տեմպեր: Էջմիածնի, Սուրմալուի, Երևանի գավառների կապը համառուսական շուկայի հետ ավելի ուժեղ էր և պատահական չէ, որ գյուղացիության քայքայման պրոցեսն այստեղ ավելի ցայտուն էր դրսևորվում, քան, ասենք, Նոր Բայազետի, Ղազախի և այլ գավառներում:

Խոսելով Արևելյան Հայաստանում կապիտալիզմի զարգացման տեմպերի դանդաղության մասին, չպետք է մոռանալ, որ այդ ասվում է հարաբերականորեն: Նախորդ ժամանակաշրջանի համեմատ այդ տեմպերը, ինչ խոսք, անհամեմատ բարձր էին, իսկ Ռուսաստանի տնտեսական ընդհանուր զարգացման համեմատ՝ բավականաչափ ցածր: Արտադրողական ուժերի զարգացման տվյալ մակարդակում և տեղական հումքի առկայության պայմաններում սկզբունքորեն հնարավոր էր այդ տեմպերի համահավասարեցում, սակայն դրան արգելակում էին այնպիսի առաջնային գործոններ, որպիսիք էին ֆեոդալիզմի հնացած մնացուկները և ցարիզմի գաղութային քաղաքականությունը:

բ) ԳՅՈՒՂԱՅԻՆԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արևելահայ գյուղում կատարվող սոցիալ-տնտեսական տեղաշարժերը իրենց կնիքն էին դնում գյուղացիական մասսաների վրա: Սակավահողությունը, հարկային ծանր համակարգը, վաշխառուական կապիտալը, բնակլիմայական անբարենպաստ պայմանները նպաստում էին գյուղացիության քայքայման պրոցեսի խորացմանը:

Ինչպես Ռուսաստանի, այնպես և Արևելյան Հայաստանի ետոնֆորմյան ամբողջ պատմությունը բնորոշվում է հողագործական տնտեսության մեջ կապիտալիզմի ներխուժումով:

Առևտրային հողագործությունը Վ. Ի. Անիկը իրավամբ համարում էր գյուղացիության քայքայման գլխավոր գործոնը⁸⁹, խոսելով գյուղացիության քայքայման պրոցեսի մասին, նա շեշտում էր այն հանգամանքը, որ վերջինս «ներքին շուկա է ստեղծում կապիտալիզմի համար»⁹⁰: Այստեղից հետևում է, որ կապիտալիստական հարաբերությունների զարգացումը և գյուղացիական մանր տնտեսությունների քայքայումը փոխադարձաբար կապակցված պրոցեսներ են, որոնց զարգացմամբ են պայմանավորվում ետեմֆորմյան գյուղում կատարված սոցիալ-տնտեսական մեծ տեղաշարժերը:

Արևելահայ գյուղը ներգրավվելով ապրանքադրամական հարաբերությունների ոլորտը, նույնպես ենթարկվում էր կապիտալիզմի զարգացման ընդհանուր օրինաչափություններին՝ գյուղացիությունը տրոհվում էր անհաշտ դասակարգերի՝ գյուղական բուրժուազիայի և գյուղական պրոլետարիատի, որոնք աճում էին միջակ գյուղացիության հաշվին:

XIX դարավերջի արևելահայ գյուղի տնտեսական կյանքը հետազոտողները ընդհանուր գույններով նկարագրում են գյուղացիության շերտավորման վիճակը, հարուստ նյութերով ցույց տալիս այդ պրոցեսի խորացումը, սակայն չեն փորձում վերջինիս խորությունն աստիճանը տալ ամբողջ Արևելյան Հայաստանի մասշտաբով: Լավագույն դեպքում այդ կատարվում է առանձին գյուղի կամ գավառամասի շրջանակներում:

Ռուսաստանում վիճակագրական գործի թույլ դրվածքն առավել բնորոշ էր ծայրամասերի համար: Արևելյան Հայաստանում զեմստովոնների՝ հետևաբար և զեմստովոյական վիճակագրության բացակայությունը մեզ զրկում է գյուղացիության տնտեսական կյանքը բաղմակողմանի ուսումնասիրելու հնարավորությունից: Այդուհանդերձ, նման փորձեր մեզանում կատարվել են: Մասնավորապես Մ. Ադոնցը և Ա. Համբարյանը գիտական արժեքավոր հետազոտություններ են կատարել արևելահայ գյուղում կապիտալիզմի զարգացման ուսումնասիրման ուղղությամբ: Գյուղացիության շերտավորման աստիճանը որոշելիս Մ. Ադոնցը ելակետ էր ունեցել բանող անասունների գլխաքանակը: Նա գտնում է, որ չքավոր գյուղացիու-

թյան խմբին պետք է դասել բանող անասուն չունեցող կամ մեկն ունեցողներին, ինչպես նաև երկուսն ունեցող տնտեսությունների որոշ մասին: Ըստ նրա հաշվարկների, XIX դարի 80-ական թվականների կեսերին Երևանի նահանգի չքավոր գյուղացիությունը կազմում էր գյուղական բոլոր տնտեսությունների մոտ 35, միջակը՝ 50, իսկ ունևորը՝ 15 տոկոսը⁹¹:

Ա. Համբարյանի հաշվարկները, որոնք ևս հիմնվում են նույն թվականների տվյալների վրա, ելակետ ունեն գյուղացիական հողաբաժնի չափը: Ըստ այդմ, մինչև մեկ դեսյատին հող ունեցողները առանձնացվում են չքավոր գյուղացիության խմբում, որը կազմում էր 26,2, մեկից մինչև երեք դեսյատին ունեցողները՝ միջակ գյուղացիության-60,6, իսկ երեք դեսյատինից ավելի ունեցողները՝ ունևոր-13,2 տոկոս⁹²:

Տնտեսական կյանքի բաղմազանության պայմաններում, գյուղացիության շերտավորման աստիճանը որոշելիս, չի կարելի սահմանափակվել միայն մեկ հատկանիշը՝ տվյալ դեպքում բանող անասունների գլխաքանակը կամ էլ հողաբաժնի չափը ելակետ վերցնելով: Ի դեպ, այդ մասին Ա. Համբարյանը գրում է. «Շատ ավելի ճիշտ կլիներ գյուղացիության շերտավորման աստիճանը որոշել ցանքերի, վարձակալման, հողերի առուծախքի չափերով, բանող անասունների գլխաքանակով, սակայն վիճակագրական նման մասսայական տվյալներ, ցավոք, չկան»⁹³:

Վերցնենք հավասար հողաքանակ ունեցող տնտեսություններ՝ մեկը բամբակագործական այնպիսի շրջանում, ինչպիսին է Երևանի գավառը, իսկ մյուսը Ալեքսանդրապոլի գավառում, որտեղ վարելահողը հիմնականում տրամադրվում էր հացահատիկային կուլտուրաներին: Զխոսելով արդեն բնական պայմանների, հողերի արգավանդության մասին, նշենք միայն, որ Երևանի գավառում մեկ դեսյատին բամբակի ցանքից ստացված եկամուտը մի քանի անգամ կարող էր գերազանցել Ալեքսանդրապոլի գավառում մեկ դեսյատին ցորենի ցանքից ստացվող եկամուտից: Հավասար հողաքանակի առկայության փաստը նման պարագաներում չի կարող այս տնտեսություննե-

քին դասել գյուղացիական միևնույն խմբին, քանզի տարբեր կարող է լինել դրանց տնտեսական դրուժյունը:

Առևտրական հողագործության զարգացման պայմաններում, երբ երկրի տարբեր շրջաններ մասնագիտանում են գյուղատնտեսական որոշակի մթերքների արտադրության մեջ, գյուղացիության շերտավորման աստիճանը որոշելիս հնարավոր չէ միևնույն հատկանիշը տարբեր շրջանների համար ընդունել որպես ցուցանիշ և դիմել ընդհանրացումներին:

Գյուղացիության շերտավորման մասին խոսելիս կարելի է, արդյոք, հողաբաժնի չափը, որպես ցուցանիշ, տարածել անասնապահական շրջանի, իսկ անասունների գլխաքանակը՝ առևտրական հողագործության շրջանի վրա: Վ. Ի. Լենինը «Ագրարային հարցը Ռուսաստանում XIX դարի վերջին» աշխատության մեջ ցույց է տալիս հարցին նման մոտեցման սխալ լինելը: «Այս հանգամանքի վրա, — գրել է Վ. Ի. Լենինը, — պետք է հատուկ ուշադրություն դարձնել: Անտեսելով դա, չի կարելի ճիշտ գաղափար կազմել կապիտալիզմի զարգացման մասին հողագործության մեջ և հեշտումբ կարելի է ընկնել զուհակացման սխալանքի մեջ»⁹⁴:

Դիցուք թե ցանկանում ենք որոշել գյուղացիության շերտավորման աստիճանը, ասենք, Սուրմալուի գավառում, ապա ճիշտ չէր լինի որպես ցուցանիշ վերցնել անասունների գլխաքանակը: Եթե այստեղ գյուղացին չունի երկու գլուխ բանող անասուն, ապա դա դեռ չի նշանակում, որ նա շքավոր է: Փոխարենը նա ունի որոշակի հողաբաժին, որից ստանում է բավականաչափ բամբակ կամ խաղող և կարող է համարվել միջակ կամ էլ ունևոր:

Անասնապահական շրջանի, օրինակ, Նոր Բայազետի գավառի համար որպես ցուցանիշ եթե ընդունենք հողաբաժնի չափը, ապա կստացվի, որ XIX դարավերջին գավառում շքավոր գյուղացիությունը կազմում էր գյուղացիական տնտեսությունների 0,6, ունևորները՝ 1,3, իսկ միջակները՝ 98,1 տոկոսը⁹⁵: Անշուշտ, սոցիալական հավասարության նման պատկեր չէր ստացվի, եթե գյուղացիության շերտավորման աստիճանը

որոշելիս այս դեպքում հաշվի առնվեր մթերատու անասունների գլխաքանակը:

«Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատության մեջ Վ. Ի. Լենինը, քննադատելով դեմոստոյակական վիճակագրությունը, նշում է, որ գյուղացիության քայքայման մասին խոսելիս չպետք է սահմանափակվել ըստ հողաբաժնի խմբավորման: «Տնտեսական վիճակագրությունը խմբավորման հիմքում անհրաժեշտորեն պետք է դնի տնտեսության չափերն ու տիպերը: Այդ տիպերը տարբերելու համար հատկանիշները պետք է վերցվեն տեղական պայմաններին ու հողագործության ձևերին համապատասխան...»⁹⁶:

Արևելյան Հայաստանի գյուղացիության շերտավորման աստիճանը որոշելիս անհրաժեշտ է նախ այն որոշել յուրաքանչյուր գավառի համար առանձին-առանձին՝ տվյալ գավառի դեմքը բնորոշող ցուցանիշի կիրառմամբ:

Գյուղացիության շերտավորման խորության մասին է վկայում հայ գյուղում վարձու աշխատանքի տարածման փաստը: Գյուղացիական շատ տնտեսություններ զոյություն հնարավոր այլ ելք չգտնելով, ամենաէժան գներով վաճառում էին իրենց հողակտորները ու դիմում վարձու աշխատանքի թե՛ գյուղում և թե՛ արդյունաբերական կենտրոններում: Արդեն 1885 թ. Երևանի նահանգում հողազուրկ ծխերի թիվը հասնում էր 1209-ի⁹⁷: Գյուղացիությունն աստիճանաբար պրոլետարացման էր ենթարկվում: Վ. Ի. Լենինը նշում է, որ ևսոսֆորմյան ամբողջ բառասնամյակը ապագյուղացիացման համատարած պրոցես է⁹⁸:

1900 թ. էջմիածնի գավառի Փարպի գյուղն ընդամենն ունեցել է 150 տնտեսություն: Մեկ տարվա ընթացքում իրենց հողը վաճառել և գյուղից հեռացել են քսան տնտեսություն կամ տնտեսությունների 13,3 տոկոսը: Նույնքան տնտեսություններ հեռացել էին Քանաքեռ գյուղից (Երևանի գավառ), իսկ Ապարանի շրջանի Գանազիրմազ գյուղում 33 տնտեսությունից մի քանի տարվա ընթացքում իրենց հողերը վաճառել էին 17 տնտեսություն կամ 51,5 տոկոսը⁹⁹:

Արևելահայ գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացումը ուղեկցվում էր գյուղացիական մասսաների պրոլետարացման աճով: Դարասկզբին արևելահայ գյուղում պրոլետարական և կիսապրոլետարական բնակչության թիվը հասնում էր 330 հազարի¹⁰⁰: Ներքին Ախտա գյուղից «Մշակ» թերթին գրում էին, որ «շրջակա բազմաթիվ գյուղերի բնակչությունը պրոլետարիատի իսկական պատկեր է ներկայացնում»¹⁰¹: Վարձու աշխատողների բանակն ազահարար կլանում էր թշվառացած նորանոր մասսաներ, հանդիսանում հուսալի ղեկերվ արդյունաբերական պրոլետարիատի ձևավորման համար: 1897 թ. մարդահամարի տրվյալներով Երևանի նահանգի և Կարսի մարզի 134.597 գյուղացիական տնտեսություններից վարձու աշխատանք օգտագործող տնտեսությունների թիվը հասնում էր 4183-ի կամ տնտեսությունների 3,6 տոկոսը¹⁰²: Ի դեպ, Կարսի մարզում, Երևանի և էջմիածնի գավառներում այդ թիվն ավելի բարձր էր, որը վկայում է այդ վայրերում գյուղացիության շերտավորման խորությունը և այն մասին, որ Արևելյան Հայաստանի տարրերը շրջաններում այդ պրոցեսն անհամաչափ էր ընթանում:

Արևելյան Հայաստանում գյուղացիության շերտավորման պրոցեսն ավելի արագացավ 90-ական թվականներին հաճախակի կրկնվող սովի տարիներին: Վաշխառուական կապիտալը, հարկային ծանր համակարգը, բնակլիմայական անբարենպաստ պայմանները և այլն, նպաստում էին գյուղացիության շերտավորման պրոցեսի խորացմանը: 1895 թ. Արևելյան Հայաստանի գյուղացիական տնտեսությունների թվում ցանքս չունեցողների տեսակարար կշիռը հասավ 16, իսկ բանող անասուն չունեցողներինը՝ 20 տոկոսի¹⁰³: Միայն էջմիածնի գավառում բանող անասուն չունեցող տնտեսությունների տեսակարար կշիռը դարավերջին հասավ 42 տոկոսի¹⁰⁴: Նույն գավառի Բաշ Ապարան գյուղում 180 ծխից 67-ը չէր ցանում, իսկ 113-ը՝ այսինքն՝ ավելի քան 62 տոկոսը, չունեի բանող անասուն¹⁰⁵:

Ինչպես ամենուր, այնպես էլ արևելահայ գյուղում կապիտալի սկզբնական կուտակումը արտահայտվում էր վաշխառության ձևով: Վ. Ի. Լենինը նշում էր, որ «Առևտրական և վաշխառուական կապիտալը մի անհրաժեշտ մեծնու է կապիտալիզմի զարգացման մեջ, մի անհրաժեշտ անիվ սակավ զարգացած կապիտալիստական հասարակության (ինչպես մերը) մեխանիզմում»¹⁰⁶:

Արևելյան Հայաստանում վաշխառուական կապիտալը գյուղացիական մանր տնտեսությունների գերակշռության և աննշան բանկերի ու վարկային գործի թուլության պայմաններում զարգացման մեծ տեմպեր էր վերցրել և պատահական չէ, որ արդեն դարավերջին այն հանդես էր գալիս «որպես կանոն, որպես հարաբերությունների տիրապետող սիստեմ»¹⁰⁷:

Վաշխառուները դարձել էին գյուղի լիիրավ տերերը: Սակավահողությունը, հարկային ծանր համակարգը, բնակլիմայական անբարենպաստ պայմանները և այլն գյուղացուն նետում էին վաշխառուի ցանցը, որի մշտապես աճող տոկոսները ի չիք էին դարձնում ազատվելու ամեն մի հույս: Ստ. Շահումյանը գրում է, որ «վաշխառուն տղրուկի նման կայելով գյուղացուն, իր ձեռքումն է կենտրոնացնում թե՛ դրամական միջոցները և թե՛ հողը, իսկ գյուղական քայքայված աղգարնակչության մոտակա ապագայի հորիզոնի վրա նշմարվում է պարբերական սովի ուրվականը»¹⁰⁸:

XIX դարի վերջին էջմիածնի գավառի Ֆրանգանոց գյուղի 77 ծխից միայն հինգն էր ազատ պարտքերից, իսկ Կողբ գյուղի 332 ծխից 105-ը պարտքերի հետևանքով զրկվել էին իրենց հողաբաժիններից¹⁰⁹: Զանգեզուրի Արծվանիկ գյուղից «Մշակին» գրում էին. «Մեծ տոկոսով փող տալը սովորական բան է գյուղերում, բայց վերջին տարիներին այս ախտը գյուղական համայնքի մեջ դարձել է ծայրահեղ: Հացի պակասության հետևանքով և պարտքերը վճարելու համար Ղափանի գյուղերը դատարկվել են տղամարդկանցից, որոնք խմբերով դիմում են պանդիստության՝ ընտանիքի անհրաժեշտ պիտույքները հոգալու համար»¹¹⁰:

Վաշխառուները հաճախ վարձակալում էին պետական հողեր և կրկնապատիկ ու ավելի թանկ գնով դրանք հանձնում գյուղացիներին: 80-ական թվականներին Երևանի գավառի պետական հաստիքները հատվածները կազմում էին 11.900 դեսյատին, որից վաշխառուների ձեռքում էր գտնվում 10.874 դեսյատինը, իսկ գյուղացիների ձեռքում՝ ընդամենը 1026 դեսյատին¹¹¹:

«Արձագանք» թերթը գրում էր, որ Երևանի նահանգում 30—40 և 50 տոկոսով պարտք տալը սովորական երևույթ էր¹¹²: Թերթի մեկ այլ համարում խոսվում էր Մեծ Ղարաքիլիսա գյուղի բնակիչների տնտեսական անմխիթար վիճակի մասին: «Միջին և ստորին դասակարգերը թաղված են պարտքի մեջ և անագորույն հարստի անզթությամբ այդ հասնում է մինչև կոկորդը»¹¹³: Վաշխառուական կապիտալը նպաստում էր գյուղացիական հողաբաժինների, անասունների, ոռոգող ջրի, շարժական և անշարժ գույքի համակենտրոնացմանը գյուղական բուրժուազիայի ձեռքում:

Վաշխառուական կապիտալի զարգացման և գյուղացիության՝ վաշխառուական կապիտալի ցանցի մեջ ընդգրկվելու կարևոր հատկանիշներից մեկը, դա հողի և զանազան գույքի գրավ դնելու փաստն էր: Ընդհանուր քայքայվածության և կուտակված պարտքերը ժամանակին վճարել չկարողանալու հետևանքով Երևանի գավառում գրավ էր դրված գյուղացիական հողերի մոտ 27 տոկոսը, նոր Բայազետի գավառում՝ մոտ 40 տոկոսը¹¹⁴: XX դարի սկզբին Երևանի նահանգի յուրաքանչյուր գյուղում պարտք ունեցող տնտեսությունների թիվը կազմում էր բոլոր տնտեսությունների 1/3—2/3-րդը¹¹⁵:

Խոսելով Արևելյան Հայաստանի գյուղացիության քայքայման մասին մեր հետազոտողները նշում են, որ վաշխառուական կապիտալը մեծապես նպաստում էր գյուղացիության շերտավորման պրոցեսի արագացմանը: Ինչ խոսք, որ վաշխառությունը վերջնական հաշվով նպաստում էր գյուղացիական տնտեսությունների սեփականազրկմանը, սակայն այն ոչ թե արագացնում, այլ արհեստականորեն դանդաղեցնում էր գյուղացիության քայքայման պրոցեսը: Գյուղացին առժա-

մանակ հնարավորություն էր ստանում երկարաձգել իր շարքառ գոյատևումը գյուղում: Վ. Ի. Լենինը նշում է, որ «առևտրային ու վաշխառուական կապիտալի ինքնուրույն զարգացումը մեր գյուղում կասեցնում է գյուղացիության քայքայումը»¹¹⁶:

XIX դարի վերջին Արևելյան Հայաստանի գյուղերը կարճես միմյանց հետ մրցում էին աղքատությամբ ու սակավահողությամբ, նրանց բարձիթողի վիճակը չէր անհանգստացնում իշխանություններին: Հարկերի ծանրության տակ կթած գյուղացուն կողոպտում էին վաշխառուներն ու ավազակները, հողատերերն ու շինովնիկները, բոլորը՝ պետական ապարատի գլխավորությամբ: Խոսելով ետեֆորմյան ռուս գյուղացիության մասին, Վ. Ի. Լենինը նշում է. «Գյուղացին հասցրվեց կյանքի մուրացկանային մակարդակի. նա անասունների հետ էր ապրում, ցնցոտի հագնում, թելովով կերակրվում. գյուղացին փախչում էր իր հողաբաժնից, եթե փախչելու մի որևէ տեղ կար... Գյուղացիները շարունակաբար սով էին ապրում և տասնյակ հազարներով մեռնում սովից և ավելի ու ավելի հաճախ կրկնվող անբերրիությունների ժամանակ ծագող համաճարակներից»¹¹⁷: Լենինյան այս բնութագրումը լիովին վերաբերում է նաև հայ գյուղացիությանը:

Արևելյան Հայաստանի գյուղացիության մեծագույն մասը պատկանում էր պետական գյուղացիության կատեգորիային: Ինչպես նշվեց, XIX դարի վերջին Երևանի նահանգում պետական գյուղացիները կազմում էին գյուղացիության 85,4 տոկոսը: Նույն ժամանակաշրջանում պետական գյուղացիությունը մեծամասնություն էր կազմում նաև Լոռիում՝ գյուղացիական բոլոր ժխերի մոտ 89 տոկոսը¹¹⁸ և Զանգեզուրում, որտեղ պետական գյուղացիները կազմում էին մոտ 65 տոկոսը¹¹⁹: 1880-ական թվականների տվյալների համաձայն Զանգեզուրի գավառի պետական գյուղացիության 44 տոկոսը հայեր էին, 26 տոկոսը՝ բրդեր, 22 տոկոսը՝ աղբրեջանցիներ և այլն¹²⁰: Ղազախի գավառի հայ բնակչությունը նույնպես կենտրոնացած էր պետական գյուղերում: Բացառություն էր կազմում միայն կալվածատեր Փայանթարյաններին պատկա-

նող Չորաթան գյուղը: Նույն թվականների տվյալների համա-
ձայն գավառի պետական 69 գյուղերից հայկական էին 43-ը,
իսկ 50.024 պետական գյուղացիներից 30.494-ը՝ այսինքն
մոտ 61 տոկոսը հայեր էին¹²¹: Կարսի մարզի գյուղացիությունն
ամբողջովին պատկանում էր պետական գյուղացիության կա-
տեգորիային:

Կալվածատիրական գյուղացիությունը հիմնականում
կենտրոնացած էր Երևանի նահանգի Սուրմալուի, Նախիջևանի
և Էջմիածնի գավառներում: Անհամեմատ փոքր թիվ էին կազ-
մում վանքապատկան գյուղացիները, սակայն հայ եկեղեցին
հանդիսանում էր խոշոր հողատեր: Միայն Էջմիածնի վանքի
կալվածքները հասնում էին 21 հազար դեսյատինի, Տաթևի
վանքինը՝ 26 հազարի, Հաղպատինը՝ մոտ 8 հազար դեսյա-
տինի և այլն¹²²:

XIX դարավերջին Արևելյան Հայաստանի ինչպես կալվա-
ծատիրական, այնպես էլ պետական գյուղացիության հողա-
յին ապահովվածությունը ծայրաստիճան անբավարար էր:
Գյուղացիությունը հողային ահավոր սով էր գգում: Պաշտո-
նական տվյալների համաձայն Երևանի նահանգի կալվածա-
տիրական գյուղացիության մեկ ծխին հասնում էր 8,4 դես-
յատին հողաբաժին, իսկ արական մեկ շնչին՝ 1,8 դեսյա-
տին¹²³: Դա ղգալիորեն պակաս էր 1870 թ. կանոնադրությամբ
սահմանված շափաբաժնից, որի համաձայն մեկ ծխին նա-
խատեսվում էր 15 դեսյատին, իսկ արական մեկ շնչին՝ հինգ
դեսյատին: Զանգեզուրի գավառում այդ թվերն ավելի ցածր
էին՝ համապատասխանաբար 4,5 և 1,4 դեսյատին¹²⁴: Միա-
ժամանակ պետք է նշել, որ վերոհիշյալ թվերը ներկայաց-
նում են հողօգտագործման խիստ մոտավոր պատկերը: Պաշ-
տոնական վիճակագրությունը գյուղացիական հողաբաժիննե-
րի մասին խոսելիս ղեկավարվել է «միջին հաշվով» ընդուն-
ված սկզբունքով: Գյուղացիության շերտավորման պրոցեսի
պայմաններում, որն ուղեկցվում էր հողազրկման և հողերի
համակենտրոնացման, հողաբաժինների գրավազրման ու
վարձակալման այնքան սովորական դարձած փաստերով,
նման սկզբունքի կիրառումը չի կարող տալ ճիշտ եզրահան-

քումների հնարավորություն: Այլապես, եթե Ղազախի ու Ալեք-
սանդրապոլի գավառների պետական գյուղացիության յու-
րաքանչյուր ծխին ընկնում էր մոտ 16 դեսյատին հող, իսկ
Նոր Բայազետի գավառում նույնիսկ 23 դեսյատին¹²⁵, ապա
ինչով բացատրել այդ գավառների գյուղացիության տնտե-
սական անտանելի կեցությունը, այն բազմաթիվ բողոքազր-
բերն ու խնդրագրերը, որոնք գյուղացիության հողասակավու-
թյան խոստովանվածքներն են:

Պետական գյուղում հողի վերաբաժանումները կատար-
վում էին մեծ ուշացումներով ու անկանոն: Եվ այդ է պատ-
ճառը, որ սակավահողությունը գնալով իրեն ղգացնել էր տա-
լիս, որովհետև բնակչությունը շարունակ աճում էր, իսկ օգ-
տագործվող հողի քանակը մնում էր անփոփոխ: Այսպես,
օրինակ, Ալեքսանդրապոլի գավառի Քափանակ գյուղը
1854 թ. ուներ 25 տուն բնակիչ, իսկ 1898 թ.՝ 85, Փոքր Ղա-
րաքիլիսան՝ համապատասխանաբար 60 և 385, Դոլղաթը՝ 30
և 100, իսկ օգտագործվող հողը մնացել էր նույնքան¹²⁶:

Երևանի նահանգի գյուղացիության կարիքներն ուսում-
նասիրող նահանգային կոմիտեն հողի վերաբաժանումների
նման վիճակը բացատրում էր «տեղական կուլակների աղղե-
ցությամբ, որոնց հաջողվել է իրենց ձեռքը վերցնել մեծ քա-
նակությամբ բաժնեհող և որոնց համար դրա բաժանումները
ձեռնտու չէին լինի: Այդ անձինք գյուղական հասարակության
ժողովներում հաճախ հասնում էին այն բանին, որ վերաբա-
ժանման վերաբերյալ վճիռներ չէին կայացվում»¹²⁷:

Բորչալուի գավառում պետական գյուղացիության մեկ
շնչին ընկնող հողաբաժինը դարավերջին կազմում էր մինչև
2 դեսյատին¹²⁸: Իսկ Լոռիի տեղամասի Ղամշկուտ գյուղում
այն կազմում էր 0,71, Քոլագերանում՝ 0,76, Շահալիում՝
0,83, Գարաքենդում՝ 0,93 դեսյատին և այլն¹²⁹: Դրությունն
ավելի վատթար էր Լոռիի կալվածատիրական գյուղերում,
որտեղ մեկ ծխին ընկող հողաբաժինը կազմում էր մոտ 2,3
դեսյատին: Որնակ և Սանահին գյուղերում այն համապա-
տասխանաբար կազմում էր 1,7 և 1,3 դեսյատին¹³⁰: 1896 թ.
«Արձագանք» թերթը Լոռիի կալվածատիրական գյուղացիու-

թյան մասին գրում էր. «Լոռու ազնվականաց գյուղերում բնակվող գեղջուկները այնպես են ճնշված իրենց ազնվականներից, ինչպես ճանապարհի միջին բսած խոտը, որին ամեն անցնող տրորում, ոտնատակ է տալիս»¹³¹:

Լոռիի կալվածատիրական գյուղացիության անապահով կյանքի նկարագիրը կարելի է գտնել Ալ. Շիրվանզադեի «Լոռվա ձորերում» ակնարկում, որը մեծանուն գրողի 1888 թ. Լոռիում կատարած շրջագայության արդյունքն էր: «Որնակ գյուղն իր արտաքին տեսքով ավելի ողորմելի երևաց ինձ, քան Հաղբատը,— գրում էր Շիրվանզադեն:— Խոտից, փայտից և տեղ-տեղ խճից մի կերպ հորինած խղճուկ խրճիթներն մի քանի շարք— դա է գյուղը: Մանուկները մերկանդամ, կանայք ոտարոբիկ, տղամարդիկ ընկճված դառն աշխատանքի և աղքատության լծի ներքո, խեղճ, ողորմելի, միանգամայն ողորմելի արարածներ:

Թե՛ Հաղբատ և թե՛ այստեղ հողի ահագին պակասությունն են գյուղացիները: Շրջակայքը անմերձենալի ժայռեր և անտառապատ սարեր, երկրագործության պիտանի հողի մի փոքրիկ տարածություն, ճանապարհների կատարյալ բացակայություն— ահա գյուղը, ահա գյուղացիների վիճակը:

Այս բավական չէ. Հաղբատում գանգատներ էին լսվում, թե կալվածատեր ոմն իշխան Բարաթովը հետզհետե խլում է գյուղի հողերը, թե գյուղացիները քանի դնում, այնքան աղքատանում են»¹³²:

Ինչպես Արևելյան Հայաստանի մյուս շրջաններում, այնպես էլ Զանգեզուրի և Ղազախի գավառներում XIX դարի վերջերին գյուղացիությունը հողի մեծ կարիք էր զգում: Այնրիցյանը, որը ուսումնասիրել էր Ղազախի գավառի պետական գյուղացիության տնտեսական կացությունը, նշում է, որ գավառի պետական բոլոր գյուղերը տառապում են սակավահողությունից¹³³: Գավառի պետական գյուղացիության մեկ շնչին դարավերջին ընկնում էր 0,65 դեսյատին վարելահող, իսկ ընդհանրապես հող՝ 1,46 դեսյատին¹³⁴: Մի շարք գյուղերում այդ թվերը համեմատաբար ավելի ցածր էին: Օրինակ, Գոշավանքում մեկ շնչին ընկնող վարելահողը կազմում էր

0,37 դեսյատին, Ղուլալիում՝ 0,38, Հին Դիլիջանում՝ 0,44, Քարվանսարայում՝ 0,47, Մովսեսում՝ 0,49 դեսյատին և այլն: Իսկ մեկ շնչին ընկնող հողաբաժինը Ղալաջա գյուղում կազմում էր ընդամենը 0,68, Կողբում՝ 0,82, Բարանայում՝ 0,91 դեսյատին և այլն¹³⁵:

1880-ական թվականների տվյալների համաձայն Զանգեզուրի կալվածատիրական գյուղացիության մեկ շնչին ընկնող հողաբաժինը կազմում էր 0,73 դեսյատին¹³⁶: Այն չէր անցնում երկու դեսյատինից գավառի պետական 57 գյուղերում¹³⁷: Զանգեզուրի գյուղացիության հողասակավությունը գրավել է նաև Վ. Ի. Լենինի ուշագրությունը: Այդ մասին նա նշում է «Վերաբնակեցման հարցը» հոդվածում¹³⁸, Վ. Ի. Լենինը գրում է, որ ցարիզմի վերաբնակեցման գաղութային քաղաքականության հետևանքով ավելի է աճում գյուղացիների հողասակավությունը, քանզի «Վերաբնակեցման ֆոնդն ստեղծվում է բնիկների հողային իրավունքների աղաղակող խախտման միջոցով»¹³⁹: Եվ իսկապես, Ղազախի գավառի Զարխեշ և հարևան գյուղերի սակավահողությամբ մտահոգվելու փոխարեն, իշխանությունները դրանց մոտերքում հիմնեցին Գոլովինո և Նոր Դիլիջան գաղութները¹⁴⁰: Անհամեմատ տարբեր էր այս վերջինների և հայկական գյուղերի հողային ապահովվածությունը: Օրինակ, Նոր և Հին Դիլիջան գյուղերում մեկ ծխին հասնում էր վարելահող համապատասխանաբար 19,76 և 3,49 դեսյատին, իսկ մեկ շնչին ընկնող հողաբաժինը կազմում էր 6,83 և 1,89 դեսյատին¹⁴¹:

Կապիտալիստական հարաբերությունների զարգացման պայմաններում արևելահայ գյուղում տեղի էր ունենում հողերի համակենտրոնացման պրոցես: Ունեոր անձանց ձեռքն էին անցնում գյուղացիների օգտագործման տակ գտնվող լավագույն հողակտորները, որը հաճախ կատարվում էր զավթումների միջոցով: Նույնիսկ երևանի նահանգապետը ստիպված էր ընդունել, որ «Զավթումների ճանապարհով զգալի թվով չբավոր շինականներ բոլորովին զրկվում են հողից, որն անցնում է աշխարհակերների ձեռքը: Այդ պատճառով զավթումների դեմ անհրաժեշտ է պայքարել բոլոր մի-

ընդհանրում»¹⁴²։ Սակայն որոնք էին այդ միջոցները՝ նախանգապետը չէր նշում։

Գյուղացիական մասսաների հողասակավորությունն արդյոք մտահոգում էր ցարական կառավարությանը և ինչ էր նախաձեռնում նա այդ ուղղությամբ։ Այս հարցի լավագույն պատասխանը տալիս է ժամանակակիցներից մեկը՝ գյուղացիական հարցերի գիտակ համարվող ցարական աստիճանավոր Մեդվեդևը։ Դարավերջին (այդ ժամանակ Մեդվեդևը զբաղեցնում էր Ռուսաստանի հողագործության մինիստրի Կովկասի լիազորի պաշտոնը) նա գրում էր, որ Անդրկովկասի պետական գյուղացիության հողային ապահովվածության հարցը երբեք չի դառնել քննարկման առարկա, այդ գյուղացիությանը հողով ապահովելու և բաժնեհողերը շահավորելու ուղղությամբ չեն կիրառվել սխտեմատիկ այնպիսի միջոցառումներ, ինչպես կայսրության ներքին նահանգներում¹⁴³։ Համարյա նույն կարծիքին էր նաև Երևանի նահանգապետը. «Դատելով ըստ ինձ մոտ ստացվող բազմաթիվ խնդրանքների և նահանգում կատարած շրջագայություններիս ընթացքում արված բողոքների, ինչպես և պետական ունեցվածքների վարչությունում և տեղական դատարաններում քննվող գործերի քանակի, ես գալիս եմ եզրակացության, որ նահանգում գյուղացիների հողակարգավորումը գտնվում է անորոշ և խախուտ վիճակում»¹⁴⁴։ Յավոթ, նման եզրակացության գալով էլ սպառվում էր հարցի լուծումը։

Սակավահողության պայմաններում թե՛ պետական և թե՛ կալվածատիրական գյուղացիությունը ստիպված էր դիմել հողերի վարձակալման պրակտիկային։ 1890-ական թվականների տվյալներով՝ միայն Ջանգեզուրի գավառում գյուղացիության այդ երկու կատեգորիան կալվածատերերից և պետությունից վարձակալել էին 73,686 դեսյատին հող¹⁴⁵։ Ի գեպ, վարձակալման գերիշխող բնամթերային ձևը, ապրանքային տնտեսության զարգացման պայմաններում, 90-ական թվականների սկզբներից իր առաջնային դերը զիջում է վարձակալման դրամական ձևին, որը նպաստում է գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը։

Ապրանքային հողագործության զարգացման պայմաններում հողի գինն արագորեն բարձրանում էր։ Եթե վարելահողի դեսյատինի միջին գինը 1889 թ. Երևանի նահանգում եղել է 249 ռուբլի, ապա 1899 թ.՝ 314 ռուբլի, իսկ 1902 թ.՝ ավելի քան 400 ռուբլի¹⁴⁶։ Իսկ Կարսի մարզում 1883—1900 թթ. ընթացքում հասութաբեր հողվածների վարձակալման գնի բարձրացման հետևանքով պետական եկամուտներն ավելացել են ավելի քան երկու անգամ՝ 24 հազարից հասնելով 59 հազար ռուբլու¹⁴⁷։

Գյուղացիության վրա ծանր էր անդրադառնում նաև ջրասակավորությունը, որը մեծապես խոչընդոտում էր գյուղատնտեսության զարգացմանը և ավելի խորացնում գյուղացու տնտեսական քայքայվածությունը։ «Մշակ» թերթի համարներից մեկում կարդում ենք. «Երևանի նահանգի այն տափարակը, որն Արարատյան դաշտ է կոչվում, այնպիսի տաք կլիմանի և այնքան արգավանդ է, որ ամեն մի բուռ հողը, ինչպես ասում են, ոսկի արժե. սակայն այդ նույն դաշտի բնակիչը այսօր տնտեսական անապահով վիճակի մեջ է, շնորհիվ այն բանի, որ նա բավականաչափ հող չունի, իսկ ունեցածի մի մասն էլ ջրից զուրկ, անմշակ, ամայի ընկած հող է։ Մտեք էջմիածին, Սուրմալուի, Գառնի-Բասարի գավառամասերը, այցելեցեք Խոր վիրապի և Դավալուի հարթությունները, ամեն տեղ նույն դրությունը,— չորացած ամայի տարածություններ։ Կանոնավորելով ոռոգումը, վերջ կտրվի այն անվերջանալի վեճերին և մարդասպանություններին, որոնք տեղի են ունենում նահանգում հատկապես ամռանը՝ ջրաբաժանման ժամանակ»¹⁴⁸։

Նույնիսկ իշխանությունները ստիպված էին ընդունել ջրաբաշխման գործում տեղ գտած լուրջ թերությունները և 1890 թ. օրենք հրապարակել երկրամասում ջրից օգտվելու և ոռոգման աշխատանքների կարգի մասին։ Սակայն դրանից 14 տարի անց ջրային ինժեներներից մեկը ստիպված էր խոստովանել, որ «ջրի բաշխման գործում շրջանների մեծ մասում կարգերը շարունակվում են բառացիորեն նույնը մնալ, ինչ որ եղել են մինչև 1890 թ. և այդ գործում տիրող քաոսի, միրաբ-

ների կամայականության ու շարաշահումների դեմ դժգոհություններ արտահայտում են բոլորը»¹⁴⁹,

1894 թ. թագավորին ուղղած զեկուցագրում Երևանի նահանգապետը գրում էր, որ Նոր Բայազետի գավառի գյուղացիները վերջին տարիների ընթացքում շատ են տուժում անբերրիությունից, որը հիմնականում ոռոգման ցանցի բացակայության հետևանք է: Զեկուցագիրը կարգալիս այս վերջին խոսքերը Նիկողայ II-ը ընդգծել է և լուսանցքում ավելացրել. «Մայրահեղ ցավալի է»¹⁵⁰: Սակայն ավելի ցավալի էր, երբ գրանից հետո էլ դրուժյունը շարունակում էր մնալ նույնը:

Զանազան հարկերի ու տուրքերի անող ծանրությունը իր կնիքն էր դնում գյուղական բնակչության վրա, խլում նրա եկամուտների մի զգալի մասը: Աշխատավոր գյուղացիությունը մեծապես տուժում էր ինչպես հարկերի անհամաչափ ու անարդար բաշխումից, այնպես և հարկահավաքման ժամանակ կատարվող անօրինականություններից ու շարաշահումներից: Գյուղացուց կրկնակի կամ ավելի վերցնելը սովորական էր դարձել: Հարկային ծանր համակարգը պարարտ հող էր ստեղծում վաշխառուական կապիտալի տարածման համար:

Երևանի նահանգի պետական գյուղացիներից գանձվող ծխահարկը կազմում էր 2—10 ուրլի, հողատուրքը՝ յուրաքանչյուր ծխից 25 կոպեկից մինչև 1 ուրլի: Նրանք վճարում էին նաև զեմստովային հարկ, որը բաժանվում էր պետական և նահանգային հարկերի ու կազմում էր ծխից 2—5 ուրլի և ավելի: 1887 թ. Կարսի մարզի գյուղացիներից գանձվող պետական հարկը՝ աշարը, որը կազմում էր հողագործական մթերքների 1/10 մասը, փոխարինվեց հողային դրամական հարկով: Այն մի քանի տարվա ընթացքում աճեց և 80-ական թթ. 277 հազարի փոխարեն 1900 թ. կազմեց 377 հազար ուրլի¹⁵¹:

Հարկերը բաշխելիս հաշվի չէին առնվում տեղական պայմաններն ու հնարավորությունները, դրանք բաշխվում էին խիստ անհավասարաչափ: Օրինակ, Ղազախի գավառի Քարվանսարա և Աշատու հարևան գյուղերի ծխերը, որոնք

կազմված էին միջին հաշվով 12-ական շնչից, վճարում էին պետական հարկ. առաջինները՝ 34 ուրլի 84 կոպեկ, իսկ երկրորդները՝ 22 ուրլի 18 կոպեկ, շնայած որ Աշատուի հողային պայմանները համեմատաբար ավելի տանելի էին, քան Քարվանսարայինը¹⁵²: Հարկերի նման, ոչ ճիշտ բաշխումը բնորոշ էր արևելահայ մյուս շրջանների համար ևս:

Երկրամասի, այդ թվում և Արևելյան Հայաստանի հարկային համակարգի խառնաշփոթ վիճակի «բարելավմանն» էր հետամուտ 1900 թ. հունիսին Անդրկովկասում իրագործված հարկային ռեֆորմը, որը ծխահարկը փոխարինում էր հողատուրքով: Ի դեպ, նոր օրենքի համաձայն հարկվում էին նաև կալվածատիրական հողերը, սակայն այն մեծ տարբերությամբ, որ եթե գյուղացիները մեկ զեսյատինի համար պետական հողատուրք էին վճարելու միջին հաշվով 42,5 կոպեկ, ապա կալվածատերերը՝ 20,4 կոպեկ¹⁵³: Տարիներ անց Կովկասի փոխարքա Վորոնցով-Գաշկովը ամենահպատակ զեկուցագրերից մեկում ստիպված էր խոստովանել, որ մինչև 1901 թ. ուղղակի հարկերի և ծխական պարտույթների ողջ ծանրությունը բացառապես ընկած էր երկրամասի գյուղացիական բնակչության վրա և որ տասնամյակների ընթացքում այն իր կործանարար ազդեցությունն է թողել վերջինիս վրա¹⁵⁴:

Աշխատավոր գյուղացիության շահագործման դերում հանդես էր գալիս նաև հոգևորականությունը: Հայ եկեղեցին ուներ գյուղեր, որոնք կոչված էին պահպանելու և ավելացնելու նրա եկամուտները: Մանր էր վանքապատկան այս գյուղերի բնակիչների դրուժյունը: Բացի դրամական տուրքից, նրանք տալիս էին բերքի 1/10-րդ մասը, կատարում բազմապիսի պարհակներ: 1870 թ. ռեֆորմը շտարածվեց այդ գյուղերի վրա: Այստեղ շարունակվեցին պահպանվել կիսաճորտական հարաբերությունները:

Այն փաստը, որ երբեմն հայ գյուղացին ըմբոստանում էր եկեղեցու սպասավորների դեմ, հոգևորականների կողմից աշխատավոր գյուղացիության շահագործման վկայում են: Զանգեզուրից «Մշակ» թերթին ուղարկած մի թղթակցության

մեջ կարգում ենք. «Բացի սովից և ավազակներից, աղքատ գյուղացին մի թշնամի էլ ունի, որի դեմ դժբախտաբար նա ոչ զենք ունի և ոչ էլ պաշտպանվելու միջոց: Այդ թշնամին հոգևորականներն են, որոնք աչ և ձախ կորզում են անզրագետ գյուղացուց, որը բնավ չի կասկածում նրանց ազնվության վրա»¹⁵⁵,

Գյուղացիությունն ըմբոստանում էր նաև հոգևոր դասի ապականվածության, նրա շահամուլության դեմ: Ահա թե ինչ է գրում 1900 թ. Սևանի մենաստանի վանահայրը կաթողիկոսին. «...Գևորգ քահանան տեղույն վաշխառությամբ առիթս տուեալ է գյուղականաց ոմանց՝ սառել ի կրոնական զգացմանց, յորմե և ծագյալ է ի նոսա դիտավորություն կրոնափոխության»¹⁵⁶. Հայտնի գյուղագիր Հ. Ճուղուրյանի 90-ական թվականների արևելահայ գյուղացիության կյանքն արտացոլող պատմվածքներից մեկի հերոսը զայրույթով լցված ասում է. «...էլ ասելու չեմ, թե յա՛ Քրիստոս կա, յա՛ պատարագ, յա՛ մեռոն, յա՛ խաչ, հոգի ու հավատ: Այսուհետև ես որտեղ նստեմ ու կաղնեմ, ասելում եմ, թե՛ չիմ սուտ են: Սը՛հ բան կլի՞, էրեցնի ե՞ն, դրանք Քրիստոսի փոխանորդ ե՞ն, որ մեզ խարում են, հե՛: Չէ՛, չէ՛, չէ՛. դրանք սատանաներ են, դրանք աչքակապներ են, դրանք հարուստների ոսկու դուլ են...»¹⁵⁷,

1897 թ. վերաբերող արխիվային փաստաթղթից տեղեկանում ենք, որ Երևանի գավառի նովրուզլու գյուղի բնակիչները 1895 թ. հրաժարվում են գյուղական քահանային հասանելիք տարեկան 100 ուրբլին վճարելուց¹⁵⁸: Իսկ Բորչալուի գավառի Հաղպատ գյուղի բնակիչները տարիներ շարունակ հետամուտ են լինում, որպեսզի հոգևոր իշխանությունները ուշադրություն դարձնեն Հաղպատի վանքում տիրող դուրբյանը, քննեն իրենց վանահոր անվայել արարքները և շարաշահումները: Գյուղացիների ձայնը վերջապես տեղ է հասնում և վանահորը փոխում են: Ստուգումներից պարզվում է, որ նա անգամ չէր խորշել յուրացնել վանքին պատկանող արժեքավոր շատ իրեր¹⁵⁹:

XIX դ. վերջերին ցարական կառավարությունը մեծ թափով առաջ էր տանում վերաբնակեցման գաղութային քաղաքականությունը, շնայած որ տեղական ազգաբնակչությունը հողի ահավոր կորիք էր զգում: Գլխավոր ճանապարհների վրա, ամենաարգավանդ հողերում, հիմնվում էին ուսական բնակավայրեր, որոնք ապահովվում էին բավարար հողաբանակով: Իր համար հենարան ստեղծելու և ուսականացման գործը առաջ տանելու ձգտումով ցարիզմն աշխատում էր «Կովկասյան տարածությունները լցնել ուս բնակչությամբ», շարունակում է կայսրության ներքին նահանգներից կատարվող վերաբնակեցման քաղաքականությունը, որը պաշտոնական հեղինակներից մեկի վկայմամբ, հանդիսանում էր «Ռուսաստանի պետական ժամանակակից կարևորագույն խնդիրներից մեկը, որովհետև խելացի ուղղություն ստացած այդ գաղութացումը Ռուսաստանի հզորության հետագա զարգացման ամենից զորեղ միջոցն է...»¹⁶⁰:

Արժե նշել ցարիզմի վերաբնակեցման գաղութային քաղաքականության վկայումը հանդիսացող բազում փաստերից մեկը. այն ժամանակ, երբ Ղազախի գավառի պետական բուլր գյուղերը տառապում էին սակավահողությամբ, նույն գավառի ուս վերաբնակիչների անձին հասնում էր ավելի քան տասը դեպատին հող¹⁶¹:

Ցարիզմի վերաբնակեցման քաղաքականությունն ավելի էր սրում գյուղացիական սակավահողությունը: Այն հողերը, որոնց կարիքն այնքան զգում էր հայ գյուղացին, տրամադրվում էին վերաբնակիչներին: Եվ ահա թե ինչ քայլի էին դիմում ճարահատյալ գյուղացիները. «Նորագույն գյուղում, 30 հայ տուն, մեր քաղաքի (Նոր Բայազետի—Վ. Հ.) ուսաց քահանայի միջոցով, խնդիրք են ներկայացրել ուր հարկն է, ուսագաղանություն ընդունելու: Նրանք նեղվում են հողի պակասությունից և հույս ունեն այդ ճանապարհով նոր հողեր ձեռք բերել»¹⁶²: Նույն քայլին են դիմում Ալեքսանդրապոլի գավառի Աղին և Բուղդաշեն գյուղերի 22 ընտանիքներ: 1899 թ. նրանք ընդունում են ուղղափառություն: Կովկասի կառավարչապետն անմիջապես կարգադրում է ձեռնարկել բուլր միջո-

ցառումները՝ լավագույն և հարմար հողերով այդ ընտանիքներին ապահովելու ուղղությամբ¹⁶³։

Ցարիզմի կողմից կիրառվող այդ անիրավահավասարությունն աղաղակող էր։ Ահա թե ինչ է գրում 1897 թ. Նոր Բալազետի գավառի սակավահող Դալիկարդաշ գյուղի հայ բնակչությունը հողագործության միջինստրին. «Ոչ մի կասկածի ենթակա չէ, որ Ռուսական կայսրության բոլոր գյուղացիները պետք է լինեն միմյանց հավասար, որովհետև ներքանք բոլորն էլ, առանց սահմանափակման, ապրում են հավասար իրավունքներով, միանման վճարում պետական հարկ և կատարում ամեն տեսակի պարհակներ, ուրեմն և կառավարությունը, մեր կարծիքով, պետք է հողա, թույլ չտա բացառություններ ու տարբերություններ»¹⁶⁴։

Կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքներից և, միաժամանակ, անհրաժեշտ պայմաններից մեկն էլ ագրարային գերբնակչությունն էր, որը XIX դ. վերջին արևելահայ գյուղում արդեն կաղմավորվել էր։ Կապված լինելով գյուղացիության շերտավորման պրոցեսի հետ, ագրարային գերբնակչությունն աճում էր ավելի արագ, քան նրան կհասցնեին կլանել Արևելյան Հայաստանի համեմատաբար դանդաղ զարգացող արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը։ Այդ պատճառով հայ գյուղացիությունը ոչ-հողագործական արտադնացության էր դիմում հիմնականում իր հայրենիքի սահմաններից դուրս։

Բաբուն, Թիֆլիսը, Բաթումը և Կովկասի արդյունաբերական այլ օջախներ, որոնք բանվորական ուժի մեծ կարիք էին զգում, դեպի իրենց էին ձգում քաջքայլած գյուղացիական մասսաներին։ Վերոհիշյալ վայրերի ճամփան էր բռնում նաև հայ ընչազուրկ գյուղացիությունը, որը թողնելով իր դարավոր զբաղմունքը, համալրում էր երկրամասի բաղմաղգ պրոլետարիատի շարքերը։ 1884 թ. Չանգեզուրի գավառից արտադնացության մեջ են եղել մոտ 3000 մարդ¹⁶⁵, իսկ 1895 թ. այդ թիվը հասել է 5000-ի¹⁶⁶։ Երևանի, էջմիածնի, Սուրմալուի, Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի գավառներից 1893 թ. արտադնացության են դիմել 5236 հոգի¹⁶⁷։ Այլ վայ-

րեր գնալու համար 1894 թ. միայն Մեծ Ղարաքիլիսա գյուղում անցագրեր են ստացել 1893 մարդ¹⁶⁸։ 1898 թ. Երևանի նահանգից արտադնացության մեջ են գտնվել մոտ 20000 մարդ¹⁶⁹։

XIX դարի վերջին Արևելյան Հայաստանում արտադնացները միջին հաշվով կազմում էին գյուղական աշխատունակ տղամարդկանց 15 տոկոսը¹⁷⁰։ Հասկանալի է, որ վերոհիշյալ տվյալները տալիս են արտադնացության մոտավոր պատկերը, քանզի բոլորը չէին, որ ձեռք էին բերում անցագրեր և գնում էին տանտներերի վկայաթղթերով։

Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացումը, անշուշտ, մեծապես կշահեր, եթե աշխատուժի այդ հսկա պահեստաբանակը հնարավոր լիներ օգտագործել տեղում։ Այն հանգամանքը, որ հայ գյուղացին հեռանում էր իր հայրենիքից և հաճախ առնդմիշտ, ցավալի իրողություն էր։ Սակայն իր ընտանիքի գոյությունը պահպանելու այլ ելք նա չուներ։ «Էս բոպեխս էնպես տուն կա,— գրում էր հայտնի գյուղագիր Ա. Աղեկյանը,— որ ցորեն չունի տանը և չոր մրգերով է կառավարվում։ Ոմանք կորեկ են ուտում, շոր չունեն հագներին, պարտքն էլ խո անպակաս է։ Հրաման էր եկել, որ երկու շաբաթում հարկ ժողովեն. հրես երեք շաբաթ լրացել է, հլա ոչինչ չի հավաքվել։ Ամենքն էլ աչքերը տնկել են դեպի Բաբուն, թե էնտեղից փող գա—հարկ տան»¹⁷¹։

Արտադնացությունն ուներ և սոցիալական դրական հետևանքներ։ «Ոչ-հողագործական արտադնացությունը,— նշում է Վ. Ի. Լենինը,— առաջադիմական երևույթ է։ Նա կտրում է բնակչությունը հեռավոր, հետամնաց, պատմության կողմից մոռացված խուլ անկյուններից և ներգրավվում արդի հասարակական կյանքի հորձանուտի մեջ»¹⁷²։ Այն ազատում էր գյուղացուն նահապետական և անձնական կախման ու դասայնության հարաբերություններից, թուլացնում էր նահապետական հին ընտանիքը, կնոջը դնում ավելի ինքնուրույն՝ տղամարդուն իրավահավասար պայմանների մեջ¹⁷³։

Արտադնացների մեծ մասն իր բախտն առհավետ կապում էր քաղաքի հետ, դառնում մշտական բանվոր, իսկ որոշ մա-

սը վերադառնալով հայրենի գյուղերը, իր հետ տանում էր քաղաքի շունչն ու առաջադիմական նոր գաղափարները: «Նրանք (արտագնացները—Վ. Հ.) հետամնաց գյուղացիութեան մեջ արթնացնում են մարդկային արժանապատմութեան գիտակցութիւնը և զգացմունք, արթնացնում են հավատ իրենց ուժերի նկատմամբ»¹⁷⁴ և բանվորական պայքարի լուրը տարածում բոլոր խուլ անկյուններում:

Գյուղացիութեան համար սոցիալական մեծ շարիք էր ավազակութիւնը: Արևելյան Հայաստանի մի շարք գավառներում գործում էին կաղմակերպված ավազակախմբեր, որոնք ահ ու սարսափի մեջ էին պահում գյուղական բնակչութիւնը: Վերջիններս վերացմամբ լրջորեն չզբաղվելու հետևանքով, ցարական կառավարութիւնը այդ գործը փաստորեն հանձնել էր գյուղացիներին: Ինչ խոսք, որ գյուղացին անշափ շահագրգռված է դրա վերացմամբ, սակայն այդ ուղղութեամբ ձեռնարկած նրա միջոցառումները հեռու էին բավարար համարելուց:

1897 թ. հոկտեմբերին Կովկասի կառավարչապետ Գոլիցինը Երևանից Թիֆլիս վերադարձի ճանապարհին որոշ ժամանակով կանգ է առնում Ներքին Ախտա գյուղում: Օգտվելով առիթից, շրջակա գյուղերի բնակիչները մի շարք խնդրագրերով դիմում են նրան, որոնք հիմնականում վերաբերում էին հողասակավութեանը և տնտեսական այլ հարցերի: Ավազակների դեմ պաշտպանվելու նպատակով, գյուղացիները խնդրում են իրենց հատկացնել հրացաններ: Եվ իսկապես, որոշ ժամանակ անց նրանց հատկացվեց տասը հրացան: Սակայն դրանով չբավարարվելով, գյուղացիները նոր խնդրագիր են ուղարկում կառավարչապետին¹⁷⁵:

Բորչալուի գավառի Շնող գյուղի բնակիչները 1900 թ. օգոստոսին դիմում են Թիֆլիսի նահանգապետին՝ խնդրելով օգնել իրենց ազատվելու ավազակներից, որոնք մի քանի ամսովա ընթացքում գյուղից տարել էին ավելի քան 30 ձի, 20 կով, 10 գոմեշ, 30 եղ և այլն¹⁷⁶: Գյուղացիները ստանում են այդ «օգնութիւնը»: Մի քանի ամիս անց միայն Շնող է ժամանում Բորչալուի գավառապետը, որպեսզի «գողութիւններ

ըի դեմ խիստ միջոցառումներ ձեռնարկի»¹⁷⁷: Ի դեպ, նման միջոցառման մասին տեղեկանում ենք Երևանից «Մշակ» թերթին ուղարկած մի նամակից. «Արզնի գյուղի մոտ, ճանապարհի վրա, մենք տեսանք դազանակները ձեռնելուն հինգ գյուղացիների, որոնք մեր հարցին՝ թե ինչու են կանգնել այդտեղ, պատասխանեցին. «Մի քանի օր առաջ Արզնիում երևացած ավազակների պատճառով 20—25 հոգի կազակներ ու շափարներ են լցվել գյուղը ավազակներից պահպանելու համար, իսկ մեզ ամեն օր, տաս-տաս հոգի, դազանակները ձեռքներս տված ուղարկում են այստեղ, այս կողմից երևացած ավազակների առաջն առնելու: Մենք ի՞նչ կարող ենք անել այս դազանակով ոտից զուլս գինված ավազակին. և բացի այդ մեր քյասիբութիւնը մեզ հերիք չէ, մենք դեռ ստիպված ենք պահպանների դարդն էլ քաշել, հաց տալ, խոտ տալ...»¹⁷⁸:

Բնակչիմայական անբարենպաստ պայմանները, տարերային աղետները կատարյալ շարիք էին գյուղացիութեան համար: Փշանում էր գյուղացու բերքի մեծ մասը, իսկ եղածն էլ չէր բավականացնում զանազան հարկերի ու պարտքերի մարման համար: Սովի ճիրաններում հայտնված գյուղացու հայացքը կրկին ուղղվում էր վաշխառուի կողմը: Պարբերաբար կրկնվող սովը մեծապես խթանում էր գյուղացիութեան քայքայման պրոցեսը: Այն հետևանք էր սոցիալական խորը պարճառների, որն իրեն ավելի էր զգացնել տալիս հատկապես անբերրի տարիներին, որոնք բավականին հաճախ էին հյուր գալիս գյուղացուն: Միայն 1893—94 թթ. Երևանի նահանգում սովից մահացել է մի քանի հարյուր մարդ¹⁷⁹:

«Աբարանի, Նոր Բայազետի և Գարաշիշագի գյուղացիութիւնը,—գրում էր 1895 թվականին «Մշակ» թերթը,—վերջին տարիների անբերրիութեան պատճառով իր ունեցած շունեցածը վաճառելով, ահագին պարտքի տակ ընկնելով, նույնիսկ զարե հաց չունի իր տանը և տառապում է սովածութիւնից: Վերին Ախտա գյուղում Բարեգործական ընկերութեան վարչութեան անդամները, հետաքրքրվելով թշվառների դրութեամբ, մտնում են մի տուն, որտեղ բացի շորս պատից,

ոչինչ չեն գտնում: Նրանց ձայնին պատասխանում են թոնրի միջից, որտեղ ցրտից պատսպարված է լինում տանտիկինը իր երեխաներով»¹⁸⁰:

Նույն թերթին Զանգեզուրից գրում էին. «Զյունը, անձրևը և կարկուտը կամ հերթով հաջորդում էին իրար, կամ կարծեք չուրաքանչյուրը սրանցից աշխատում էր ցույց տալ մեզ իր ուժը: Հաքառու գետի ջուրը խիստ բարձրացավ, սակայն հեղեղները վերջանալուց հետո այն արագորեն իջնելով, թողեց ափերի վրա ահագին թվով ձկներ, որոնց գյուղացիք ժողովում և զրանցով կերակրում են շոր հացի կարոտ իրենց ընտանիքներին... Սա մի շտեմնված երևույթ էր մեզանում, այնպես որ, եթե Մովսեսի ժամանակներում կատարվեր, անկասկած, հրաշքների շարքը կդասվեր: Եթե եղանակներն այսպես շարունակվեն, հացի թանկությունը եկող աշնանը անխուսափելի կլինի»¹⁸¹:

Նոր Բայազետի գավառի Գարաշիշակի տեղամասի ոստիկանությունն պետք է 1893 թ. մարտին գավառապետին գրում էր. «Ամեն օր ինձ պաշարում են սոված ու սառած հարյուրավոր մարդիկ՝ օգնություն խնդրում ինձնից... սովամահությունը բազմաթիվ բնակիչների խրճիթների շեմին է: Մեզ հարկավոր է լրջորեն մտածել սովյալների գոյապահպանման միջոցների վերաբերյալ, որոնցից, ի հակառակ, մենք գանձում ենք 1885 թվականից հետո ընկած ժամանակահատվածի զանազան ապառքները, որպեսզի ղեկավարությունը մեզ ասի «Շնորհակալություն»¹⁸²:

Ցարական կառավարությունը ոչ միայն «լրջորեն» չէր մտածում, այլև գործնականում ոչինչ չէր անում գյուղացիական մասսաների տնտեսական պայմանների բարելավման ուղղությամբ: Փոխարենը լավագույն հիմքերի վրա էին դրված և շարունակ կատարելագործվում էին գյուղացիության ինտենսիվ շահագործման եղանակները: Ուստի, վերջինս ստիպված էր համառ պայքար մղել իր կենսական շահերի պաշտպանության համար:

Գ Լ ՈՒ Խ Ե Ե Բ Կ Բ ՈՐ Գ

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ

Արևելյան Հայաստանի գյուղացիությունը ստիպված էր համառ պայքար մղել իր ամենակենսական հարցի՝ հողի համար, դիմելով պայքարի մեծ մասամբ պասսիվ, երբեմն էլ ակտիվ ձևերի: Գյուղացիական խնդրագրերի ու բողոքագրերի պատասխանները իշխանության տեղական և բարձրագույն օրգաններում համառորեն ձգձգվում էին և պատահական շէ, որ գյուղացիական պայքարը նույնպես ձեռք է բերում համառ բնույթ:

Արդեն 80-ական թվականներին հայ գյուղում հողասակավությունն աննկարագրելի շափերի էր հասել: Դրան նըպաստում էին ինչպես բնակչության աճը, այնպես էլ ունևոր անձանց կողմից գյուղացիական հողաբաժինների զավթումները և ցարիզմի վերաբնակեցման գաղութային քաղաքականությունը: Գյուղացիներն անշափ տուժում էին նաև հողատիրության իրավունքի անորոշ վիճակից և այն դանդաղկոտությունից, որով ընթանում էին հողատիրության վերաբերյալ վեճերը դատարաններում և վարչական ատյաններում: 1886 թ. հունվարի մեկի տվյալներով Երևանի օկրուգային դատարանում կուտակվել էր ավելի քան 2000 չլուծված գործ, իսկ Կարսի մարզում նման գործերը չէին քննվել երկու տարի շարունակ¹:

Կրացուցիչ հողեր ստանալու նպատակով գյուղացիները դիմում էին տեղական ու բարձրագույն իշխանություններին, սակայն մեծ մասամբ ապարդյուն: Պատահում էր, որ բավարարվում էր նրանց խնդրանքը, բայց դա տարիներ էր տևում:

Սուրմալուի գավառի Գյուլուշա գյուղի բնակիչները լրացուցիչ հողով ապահովվելու նպատակով 1881 թ. սկսած բազմաթիվ խնդրագրեր են ուղարկել ամենատարրեր հասցեններով: Սովորական դարձած բաշքշուկը ձգվել է մինչև 1890 թվականը: Նույնիսկ գավառապետը իր ղեկուցագրերից մեկում ստիպված էր ընդունել Գյուլուշայի բնակիչների հողի ծայրահեղ կարիքը և միաժամանակ ավելացնել, որ դրա հետևանքով նրանք ի վիճակի չեն վճարել պետական հարկերը: Հողագործության և գյուղական արդյունաբերության ղեկարտամենտին ուղարկած գրույթյան մեջ Երևանի նահանգի պետական ունեցվածքների կառավարիչն անդրադարձնալով այս գործին, նույնպես նշում էր, որ Գյուլուշա գյուղին լրացուցիչ հողաբաժին հատկացնելը հնարավորություն կտա գյուղացիներին վճարել գանձարանին հասանելիք հարկերը: Այդ իսկ պատճառով նրանց խնդրանքն արժանի է բավարարման²: Այս օրինակը ցույց է տալիս, թե գյուղացիներին լրացուցիչ հողաբաժիններ տրամադրելու հարցին ինչ տեսանկյունով էին նայում իշխանության ներկայացուցիչները:

Բորչալուի գավառի պետական գյուղացիների տնտեսական կյանքն ուսումնասիրող Ալ. Երիցյանը նշում է, որ գավառում կատարած շրջագայությունների ընթացքում Լոռիի տեղամասի համարյա բոլոր գյուղերի բնակիչները բողոքներ են ներկայացրել սակավահողության, հողերի զավթման, կալվածատերերի ու անտառային տեսչության ճնշումների, ավազակության կապակցությամբ³: Լոռիի տեղամասի ոստիկանության պետի գրասենյակում 1885 թ. դեռևս լուծում չէին ստացել 1878—1884 թվականներին վերաբերող 476 գործ: Միայն 1885 թ. այստեղ ընդունվել էր 2676 գործ, իսկ գավառապետի գրասենյակում՝ 7552⁴: Պետք է ենթադրել, որ այս գործերի ճնշող մեծամասնությունը գյուղացիական խնդրագրեր ու բողոքագրեր էին:

1880 թվականին, երբ Թիֆլիսի նահանգապետը կարճ ժամանակամիջոցով գտնվում էր Ջալալօղլիում, Լոռիի տեղամասի գյուղական շատ հասարակություններ ներկայացուցիչներ են ուղարկում նրա մոտ հայտնելու համար իրենց վիշտն

ու ցավը: Խնդրանքներն ու բողոքներն հիմնականում պտրվում են սակավահողության շուրջը: Նահանգապետը խոստանում է զբաղվել այդ հարցով: Նա Կովկասի փոխարքային գրում է, որ լրացուցիչ հողեր ստանալու ակնկալությամբ Լոռիի տեղամասի բոլոր գյուղերի բնակիչների կողմից իր հասցեով անդադար ստացվում են նորանոր խնդրագրեր: Նման խնդրանքները մեկընդմիջ լուծելու համար նահանգապետը նպատակահարմար է գտնում կազմել հատուկ հանձնաժողով, որը պետք է զբաղվեր Լոռիի գյուղացիության հողային հարցերի քննարկմամբ և գյուղական հասարակությունների միջև հողի հավասար բաժանման վերաբերյալ նախագծի կազմմամբ:

1881 թ. Սղնախի գավառապետ կոմս Տիգենհաուգենի զլխավորությամբ ստեղծվում է նման հանձնաժողով: Արխիվային փաստաթուղթը վկայում է, որ հանձնաժողովը գործի անցավ միայն 1882 թ. կեսերից: Իսկ թե որքան գոյատևեց և ինչպիսի արդյունքների հասավ «Լոռիի հանձնաժողովը», այդ մասին տեղեկություններ չկան: Սակայն վերջինիս գործունեության իրական հանրագումարն ու գնահատականը փաստորեն կարելի է գտնել գյուղացիական այն բազում խնդրագրերում ու բողոքագրերում, որոնց հոսքը, ի հեճուկս փոխարքայի, հետագա տարիներին ամենևին էլ չպակասեց:

Հարևան գյուղերի հետ ունեցած հողային վեճերի կարգավորման և լրացուցիչ հողեր ստանալու նպատակով Բորչալուի գավառի Լոռի գյուղի բնակիչները 1880 թ. Թիֆլիսի նահանգապետին գրում են, որ իրենք արդեն երրորդ անգամ են դիմում, սակայն դրությունը շարունակում է մնալ նույնը: Նրանք չունեն այնքան հող, որպեսզի կարողանան պահպանել իրենց ընտանիքների գոյությունը և վճարեն պետական հարկերը: 1881 թ. նույն հասցեով գյուղացիներն ուղարկում են նաև չորրորդ խնդրագիրը, 1884 թվականին՝ հինգերորդը: Տարիներ շարունակ ձգձգվում էր հարցի լուծումը: 1900 թ. Լոռի գյուղի բնակիչները դիմում են արդեն Կովկասի կա-

աւարչապետին, սակայն նրանց խնդրանքը կրկին մնում է անհետեւանք⁷:

Ղազախի գավառի Հին Դիլիշան գյուղի բնակիչները 1868 թ. սկսած բողոքներ են ներկայացրել սակավահողութեան կապակցութեամբ: Սակայն դա չի մտահոգել իշխանութեանը: 1883 թ. դիլիշանցիները նույն հարցով դիմում են Կովկասի կառավարչապետին և վերստին մնում անպատասխան⁸: Իսկ նույն գավառի Բաշքենդ գյուղի բնակիչները պետական ունեցվածքների միխստրի Կովկասի լիազորին 1886 թ. գրում են, որ իրենց գյուղը այժմ ունի այնքան հող, որքան ուներ 1873 թվականին, սակայն ծխերի թիվը 70-ից հասել է 150-ի և որ իրենք հողի սահմանափակ քանակի հետեւանքով կրում են ահապոր զրկանքներ, հնարավորութեամբ շունեն պահել իրենց ընտանիքները, վճարել պետական հարկերը և այլն: Այդ պատճառով նրանք խնդրում են լրացուցիչ հողաբաժիններ հատկացնել իրենց⁹:

Լրացուցիչ հողաբաժիններ ձեռք բերելու նպատակով 1884—1886 թթ. կառավարչապետին խնդրամատուց են լինում նաև Ղազախի գավառի Թովուղչալա, Աղզիբարա, Աչասու, Թովուզբենդ, Քարվանսարա, Բաշքենդ, Խաշթառակ, Ճամբարակ¹⁰ և այլ գյուղերի բնակիչներ: Այդ խնդրանքները մերժվում են, չնայած, որ նույն թվականների տվյալների համաձայն Ղազախի գավառում պետական ազատ հողերը կազմում էին 5385 դեսյատին¹¹:

Ալեքսանդրապոլի գավառի Խաշաքիլիսա և Բաշգյուղ սակավհող գյուղերի 35 ընտանիքներ և Ղազախի գավառի Բաշքենդ գյուղի 18 ընտանիքներ ցանկանալով տեղափոխվել պետական ազատ հողերի վրա, 1894 թ. դիմում են պետական ունեցվածքների միխստրի Կովկասի լիազորին, սակայն վերջինս չի էլ բարեհաճում նրանց պատասխանել: Գյուղացիների երկրորդ փորձը նույնպես անպատասխան է մնում: Այս անգամ նրանք դիմում են Կովկասի կառավարչապետին և հողագործութեան ու պետական ունեցվածքների միխստրութեանը: Կրկին ոչ մի արդյունք: 1898 թ. գյուղացիները երկ-

րորդ անգամ դիմում կառավարչապետին, 1900 թվականին՝ երրորդ անգամ և երեք անգամ էլ մնում անպատասխան¹²:

Արխիվային նյութերից չի պարզվում գյուղացիների վերոհիշյալ խնդրանքի ճակատագիրը, սակայն ինքնին պերճախոս է այն փաստը, որ տարիներ շարունակ գյուղացիների կենսական խնդրանքը մատնվում էր անուշադրութեան: Իշխանութեանը երկար, շատ երկար էին սպասեցնել տալիս գյուղացիներին՝ նրանց խնդրագրերին և բողոքագրերին պատասխանելու համար: Սակայն անկոտրում էր և գյուղացիների համառութեամբ, որոնք իրենց մեջ ուժ էին գտնում տարիներ շարունակ հետամուտ լինելու իրենց արդարացի պահանջների բավարարմանը:

Այս առումով բավականին հետաքրքրութեամբ են ներկայացնում նաև Ղազախի գավառի Կողբ ու Բարանա գյուղերի բնակիչների խնդրագրերը, որոնք մի կողմից մերկացնում են ցարական իշխանութեանը, իսկ մյուս կողմից հանդիսանում գյուղացիների տարիների ընթացքում հասունացող համառութեան վկայումբ: Դեռևս 1875 թ. Կողբ և Բարանա գյուղերի բնակիչները դիմում են Կովկասի փոխարքային՝ խնդրելով թեթևացնել արոտատեղերից, անտառներից, վարելահողերից օգտվելու դիմաց իրենցից զանձվող հարկերը, որովհետև, ինչպես պարզաբանում են գյուղացիները, իրենք սակավահող են, եղած հողաբաժիններն էլ քարքարոտ են և ավազոտ: Նրանց խնդրանքը մերժվում է, սակայն գյուղացիները չեն հուսալքվում¹³: 1883 թ. Բարանայի բնակիչները հողագործութեան և պետական ունեցվածքների միխստրին խնդրում են լրացուցիչ հողաբաժիններ տրամադրել իրենց: Չստանալով որևէ պատասխան, նրանք մեկ տարի անց նոր խնդրագիր են հղում վերոհիշյալ միխստրին, որն այն հասցեագրում է Կովկասի իր լիազորին: Վերջինս խնդրում է Կովկասի պետական գյուղացիների կյանքը հետազոտող ճանաչված մասնագետներից մեկին՝ Ալ. Երիցյանին, որն, ի դեպ, զբաղվում էր Ղազախի գավառի պետական գյուղացիների կյանքի ուսումնասիրմամբ, իր կարծիքը հայտնել Բարանայի գյուղացիների խնդրանքի վերաբերյալ¹⁴: Երիցյանը չի

ուշացնում իր բավականին հիմնավոր կարծիքը: Նա գտնում է, որ բարանացիները անշափ տուժում են սակավահողութչու-նից և լրացուցիչ հողաբաժինների կարիք ունեն: Միաժամա-նակ նա նշում էր, որ Բարանայում յուրաքանչյուր ծուխ ու-նի 5,45 դեսյատին վարելահող, մեկ արական շնչին հասնում է 1,09 դեսյատին, երկու սեռի մեկ շնչին՝ 0,6 դեսյատին: Իսկ ընդհանրապես հող յուրաքանչյուր ծխին ընկնում էր 8,19 դեսյատին, առական շնչին՝ 1,64, իսկ երկու սեռի մեկ շնչին՝ 0,91 դեսյատին¹⁵: Ակնհերև է, որ բարանացիները հողի մեծ պակաս էին զգում: Եվ դա հասկանալի է. եթե 1873 թ. գյու-ղում կար 78 ծուխ, ապա 1885 թվականին՝ 101 ծուխ: Սակայն հասկանալի չէ, թե ինչու այդ բոլորը հաշվի առնելուց հետո անգամ, որոշվեց նրանց տրամադրել ընդամենը 50 դեսյա-տին լրացուցիչ հող¹⁶: Ուստի պատահական չէ, որ մի քանի տարի անց գյուղացիները նորից են բարձրացնում այդ հարցը¹⁷:

1894—1896 թվականների ընթացքում Ղազախի գավառի Հախում, Թաթլիքենդ, Թովուզքենդ, Վերին Ղզըլ-Բուլաղ, Ղրղի, Քարվանսարա, Խաշթառակ գյուղերի բնակիչները քա-նիցս դիմում են պետական ունեցվածքների Ելիզավետպոլի նահանգային վարչությանը՝ խնդրելով իրենց տրամադրու-թյան տակ թողնել Մուրղուզ սարի վրա գտնվող որոշ արո-տավայրեր¹⁸: 1896 թ. Վերին Ղզըլ-Բուլաղ, Թաղաքենդ, Ղրղի և Չորաթան գյուղերի բնակիչները նույն խնդրանքով համա-տեղ դիմում են պետական ունեցվածքների մինիստրի Կով-կասի լիազորին: Նրանք նշում են նաև, որ մնացած արոտա-վայրերն էլ Շամշադինի անտառապետը ինքնակամ վաճա-ռում է զանազան անձանց¹⁹: Ուշագրավն այստեղ խնդրագրի կողեկտիվ բնույթն է, մի բան, որին հազվադեպ կարելի է հան-դիպել արևելահայ գյուղացիական շարժումների պատմու-թյան էջերում:

Լրացուցիչ հողաբաժիններ ստանալու ակնկալությամբ պետական ունեցվածքների մինիստրին քանիցս դիմել են նոր Բայազետի գավառի Աղփարա գյուղի բնակիչները: 1891 թ. նրանք հեռագրում են մինիստրին. «Աղփարա գյուղը քայ-

քայվում է. գյուղացիները ցրվում են, աղաչում ենք շուտա-փուլի լուծել հարցը»²⁰: Նույն գավառի Քյասաման գյուղի բնակիչները նահանգային և Կովկասյան վարչութչուններին անօգուտ դիմելուց հետո՝ 1896 թ. գրում են վերոհիշյալ մի-նիստրին. «Մենք դեմ չենք պետական շահերի պահպանմա-նը, սակայն խնդրում ենք, որպեսզի ուշադրութչյան առնվեն նաև պետական գյուղացիների շահերը, որոնց բարեկեցու-թյունը կախված է հողից, նրա բերրութչյունից և բավարար հողաբաժնից»²¹:

90-ական թվականներին պետական ունեցվածքների մի-նիստրին համանման խնդրանքով դիմում են նաև Ալեքսանդ-րապոլի գավառի Տիտոյ-Խարաբա, Շիշթափա, Ղուրդբուլաղ, Մեծ Դուզքենդ, Ղազախի գավառի Բարանա, էջմիածնի գա-վառի Արալբի, Շարուր-Դարալագյաղի գավառի Խանլուխ-յար, Երևանի գավառի Թեջարաբաղ, Նոր Բայազետի գավառի Վերին Ախտա²² և բազմաթիվ այլ գյուղերից:

Նոր հողեր ձեռք բերելու նպատակով 1890—1900 թվա-կանների ընթացքում Բորչալուի գավառի Լոռի տեղամասի Հոբարձի գյուղի բնակիչները տասնյակ խնդրագրեր են ուղար-կում, բայց նրանց խնդրանքը միշտ էլ մերժվում է²³: Նույն-պիսի բախտի են արժանանում նաև 1885 թ.՝ Արճիս և Լիճքա-ձոր, 1889 թ.՝ Գյուլագարակ, 1894 թ.՝ Քուլագերան, 1895 թ.՝ Հայկական Գյառգյառ, 1896 թ.՝ Մղարթ և Հովանդարա, 1898 թ.՝ Հայկական Զալալոլի և այլ գյուղերի բնակիչ-ները²⁴:

Իրենց հողային պայմանները բարելավելու նպատակով Կովկասի կառավարչապետին խնդրամատուց են լինում նոր Բայազետի գավառի Շահրիզ, Օրդաքլու, Մաղկունք (1890 թ.), Քարվանսարա, Քաղսի (1895 թ.), Չրուչ (1897 թ.), Շարուր-Դարալագյաղի գավառի Թաղաքենդ, Ալիշար, Սալլու (1895 թ.), էջմիածնի գավառի Մուլլա-Բաղալ (1897 թ.), Ալեքսանդրապո-լի գավառի Հոռոմ, Սահրիար (1897 թ.), Կապս (1898 թ.)²⁵ և բազմաթիվ այլ գյուղերի բնակիչներ: Սակայն նրանց խընդ-րանքները մերժվում են, չնայած, որ, օրինակ, Նոր Բայազե-տի գավառում պետական ազատ հողատարածութչյունները

կազմում էին 11458 դեսյատին²⁶։ Ալեքսանդրապոլի գավառի Քոռ-Աղբյուր գյուղի բնակիչները նույն խնդրանքով միայն կառավարչապետին 1895—1900 թթ. ընթացքում դիմել են չորս անգամ և միշտ էլ մերժվել²⁷։ Իսկ Շահրիզ գյուղի բնակիչները 1895 և 1897 թթ. կառավարչապետից ստանում են շատ սովորական դարձած պատասխան՝ սույն հարցը կլուծվի ոչ հեռու ապագայում երկրամասի պետական գյուղացիության ընդհանուր հողակարգավորման ընթացքում²⁸։

Գյուղացիական բազում խնդրագրեր իշխանությունների կողմից մերժվում էին այն պատճառաբանությամբ, որ իբր շուտով կլինի ընդհանուր հողակարգավորում և տվյալ հարցն էլ կլուծվի ընդհանուր կարգով։ Լրացուցիչ հողեր ստանալու խնդրանքով 1884 թ. պետական ունեցվածքների մինիստրին են դիմում Բորչալուի գավառի ռուսական Գյառգյառ գյուղի բնակիչները։ Բավարարում չստանալով նրանք 1889 թ. նորից են դիմում մինիստրին և նշում, որ իրենք հոգնել են սպասելուց, իսկ թե երբ կլինի այդ ընդհանուր հողակարգավորումը՝ ոչ մեկին հայտնի չէ²⁹։

Արդեն 90-ական թվականներին Կարսի մարզի բնակչության հողային անապահովածությունը իրեն նույնպես զգացնել էր տալիս։ Կարսի նահանգապետը գրում էր, որ մարզում գյուղական համայնքներին հողաբաժիններ հատկացվեցին 1885 թ.՝ երբ նրա բնակչությունը բաղկացած էր ընդամենը 162.000 շնչից, ապա 1899 թ. այդ թիվը հասավ 240.000-ի։ Մի շարք վայրերում, որտեղ աճն ավելի բարձր էր, հողաբաժիններն անբավարար դուրս եկան, որի հետևանքով որոշ գյուղեր ընկան դժվարին կացության մեջ³⁰։

1893 թվականին Կարսի մարզի Քարավանք գյուղի բնակիչները լրացուցիչ հողեր ստանալու կապակցությամբ դիմում են Կարսի նահանգապետին³¹։ Համանման խնդրանքով 1894—1896 թթ. պետական ունեցվածքների մինիստրի Կովկասյան լիազորին են դիմում նաև Կարսի մարզի Աղատ, Գյուլլի-Բուլաղ և Ենիքյով գյուղի բնակիչները³²։ Պետական ունեցվածքների մինիստրին 1899 թ. նույնպիսի խնդրանք են ներկայացնում մարզի Արզլ-Չախչախ գյուղի բնակիչները³³։ Իսկ Գյու-

լանիփա գյուղի բնակիչները 1897—1900 թթ. ընթացքում մի քանի անգամ դիմում են վերոհիշյալ մինիստրին, սակայն լրացուցիչ հողեր ստանալու վերաբերյալ նրանց խնդրանքը մերժվում է³⁴։

Իշխանությունները երբեմն սակավահող որևէ գյուղի լրացուցիչ հողաբաժիններ էին տրամադրում ի հաշիվ հարևան նույնատիպ մի գյուղի հողաբաժնի։ Բորչալուի գավառի Վարդաբլուր գյուղի բնակիչները 1897 թ. դիմում են պետական ունեցվածքների մինիստրին և խնդրում իրենց տրամադրության տակ թողնել «Փոքբարաքար» կոչվող հողամասը։ Այդ հողերը՝ ընդամենը 40 դեսյատին, կենսական նշանակություն ունենին վարդաբլուրցիների համար։ 1896 թ. մեկ դեսյատինի համար գյուղացիները վճարել էին ավելի քան 5 ուրլի։ Պատասխան չստանալով, նրանք չորս ամսվա ընթացքում չորս հեռագիր են ուղարկում Պետերբուրգ։ Վերջապես ստացվում է պատասխանը՝ խնդրանքը մերժվում է։ 1897 թ. հուլիսին գյուղացիները նոր խնդրագիր են հղում պետական ունեցվածքների մինիստրին։ Դրան հետևում է նաև երրորդը, սակայն երկուսն էլ արժանանում են առաջինի բախտին։ Սացույց է տալիս, թե այդ հողերը որպիսի նշանակություն ունենին վարդաբլուրցիների համար և որպիսի համառություն էին ցուցաբերում գյուղացիները դրանք իրենց տրամադրության տակ թողնելու համար³⁵։

Համանման զեպը տեղի ունեցավ Շարուր-Դարալագյազի գավառում։ 1886 թ. մայիսի 27-ին Գյումուշխանա գյուղի բնակիչները դիմագրավեցին գավառապետի օգնականին և կտրականապես հայտարարեցին, որ պահանջվող հողամասերը ինքնակամ չեն զիջի, իսկ եթե իշխանություններն ուժ գործադրեն, ապա իրենք ևս կդիմեն ուժի։ «Տեսնելով գյումուշխանացիների զրգոված վիճակը, և միաժամանակ հաշվի առնելով, որ նրանք զինված են փայտերով, որոնցով կարող էին, իսկապես, սպանություն գործել, գավառապետի օգնականն իր դրությունն այնքան վտանգավոր համարեց, որ չհամարձակվեց դիմել վճռական որևէ միջոցների և հրաժարվեց կատարել իր ղեկավարության կարգադրությունը»³⁶։ Հաջորդ օրը

գավառապետի օգնականն ավելի ծանր կացութեան մեջ ընկալի նրա առջև հավաքվել էին Քերփ, Քարփ և Լեյլի-Ղաչան գյուղերի համարյա բոլոր բնակիչները՝ փախտերով զինված: Պատասխանը եղավ նույնը. «Ոչ մի հող մենք ձեզ չենք տա» ասելով գյուղացիները հարձակվեցին գավառապետի օգնականի և նրա ուղեկիցների վրա, որոնք փախուստի դիմեցին³⁷:

1893 թ. պետական ունեցվածքների մինիստրի Կովկասի լիազորին են դիմում նոր Բայազետի գավառի Այրիվանք գյուղի բնակիչները և խնդրում վերադարձնել տարիներ առաջ իրենցից վերցված պետական հողերը: Գոհացում չստանալով, նրանք 1899 թ. դիմում են անմիջապես մինիստրին: Չստանալով որևէ պատասխան գյուղացիները մարտին հեռագրում են մինիստրին, նշելով, որ տասնութերորդ տարին է, ինչ իրենք խնդրամատույց են չինում ու միաժամանակ խնդրում արագացնել պատասխանը, քանի որ մոտենում է վար ու ցանքի ժամանակը: Ապրիլին գյուղացիները նորից են հեռագրում: Նրանց խնդրանքը վերջապես արժանանում է ուշադրության՝ այն մերժվում է³⁸:

Ուշագրավ է նաև 1899 թ. պետական ունեցվածքների մինիստրին հասցեագրած Ալեքսանդրապոլի գավառի հայկական Գյուղալղարա գյուղի բնակիչների խնդրագիրը: Գյուղացիները գրում էին, որ 1884 թ. պետական ունեցվածքների վարչությունը իրենց հողաբաժնից կտրելով 81 դեսյատին, դարձրեց հասութարեր հողված ու հանձնեց վարձակալման: Արդյունքն այն եղավ, որ այդ հողերը վարձակալեցին մի քանի կուլակներ, որոնք ավելի բարձր գնով այն առաջարկեցին գյուղացիներին: Վերջիններիս բողոքից հետո պետական ունեցվածքների վարչությունը վարձակալման իրավունքը հանձնում է նրանց: Խնդրագրում նշվում է նաև, որ 1884 թ. հետո գյուղի բնակչությունը կրկնապատկվել է և հողային անբավարարվածությունն այլևս անհնար է դարձնում սպասել ընդհանուր հողաշինարարության աշխատանքների սկսվելուն: Գյուղացիները խնդրում են այդ 81 դեսյատինը, որպես լրացուցիչ հողաբաժիններ, տրամադրել իրենց կամ էլ պակասեցնել վարձակալման գինը, քանի որ ամենամյա առուծախ-

քի ժամանակ նրանք հաղիվ են կարողանում վարձակալման իրավունքը իրենց ձեռքում պահել, թույլ չտալ, որ այն անցնի ունեւոր անձանց ձեռքը: Իսկ դա իրենց վրա շատ թանկ է նրստում: Գյուղացիների այս խնդրանքը նույնպես մերժվում է³⁹:

Սակավահող գյուղացիները հաճախ էին հարց բարձրացնում թույլատրել իրենց տեղափոխվել պետական ազատ հողերի վրա, հիմնել նոր բնակավայրեր: Զանգեզուրի գավառի և, ընդհանրապես, Արևելյան Հայաստանի ամենամեծ գյուղի՝ Խնձորեսկի բնակիչները լրացուցիչ հողեր ստանալու նպատակով 1871 թ. դիմել են տարբեր հասցեներով: 1882—1884 թթ. այդ գյուղի 39 ընտանիքներ Կովկասի կառավարչապետից թույլտվություն են խնդրել տեղափոխվել պետական ազատ հողերի վրա ու հիմնել նոր բնակավայր՝ դրանով իսկ թեթևացնել թե իրենց և թե համագյուղացիների վիճակը⁴⁰: Լրացուցիչ հողաբաժիններ ձեռք բերելու խնդրանքով 1886 թ. պետական ունեցվածքների մինիստրի Կովկասի լիազորին են դիմում նույն գավառի Բազարչայ գյուղի բնակիչները⁴¹:

Ալեքսանդրապոլի գավառի Բայանդուր գյուղի բնակիչները 1892 թ. Կովկասի կառավարչապետին գրում են, որ երբեմնի 40 ծխի փոխարեն իրենց գյուղն այժմ ունի 123 ծուխ, որի հետևանքով հողաբաժինները այլևս չեն կարող կերակրել այդքան բնակչությանը: Գյուղացիները խնդրում են նոր բնակավայր հիմնելու համար իրենց գյուղի ծխերի որոշ մասին պետական ազատ հողեր տրամադրել, սակայն մերժվում են⁴²: Եվ դա այն դեպքում, երբ նույն գավառում պետական ազատ հողերը կազմում էին 16.921 դեսյատին⁴³: Նոր Բայազետի գավառի Նորադուզ գյուղի 51 ընտանիքներ 1898 թ. պետական ունեցվածքների մինիստրին գրում են, որ բնական աճի հետևանքով գյուղն անհամեմատ մեծացել է, սակայն հողաբանակը մնացել է անփոփոխ: Ուստի խնդրում են թույլատրել իրենց տեղափոխվելու պետական ազատ այլ հողերի վրա: Հետաքրքիրն այն է, որ նման հողատարածություններ գտնելու նպատակով գյուղացիները շրջել էին տարբեր վայրերում և գտել այդպիսիք Զանգեզուրի գավառում: Հնարավոր մեր-

ժուռից խուսափելու նպատակով նրանք այդ մասին կանխապես հիշատակում են իրենց խնդրագրում:

Պետական ազատ հողերի վրա տեղափոխվելու ակնկալությամբ Բորչալուի գավառի Ղըլլքիլիսա գյուղի 18 սակավահող ընտանիքներ 1891 թ. խնդրամատուց են լինում պետական ունեցվածքների մինիստրին: Գոհացում չստանալով, մեկ տարի անց նրանք խնդրագիրը հասցեագրում են անմիջապես Ալեքսանդր III-ին⁴⁴: Նույնպիսի խնդրանքով 1894 թ. Կովկասի կառավարչապետին են դիմում Աբորի գյուղի բնակիչները: 1898 թ. նրանց երկրորդ փորձը նույնպես մնում է անարդյունք⁴⁵: Նույն խնդրանքով 1896—1897 թթ. պետական ունեցվածքների մինիստրի Կովկասի լիազորին են դիմում և նույն բախտին արժանանում Ալեքսանդրապոլի գավառի Ղարալ և Ղոխդագիրման գյուղերի 85 ծխերի բնակիչներ⁴⁶:

Կալվածատիրական շահագործումից ազատվելու համար գյուղացիները երբեմն հարց էին բարձրացնում տեղափոխվել պետական ազատ հողերի վրա և դասվել պետական գյուղացիության շարքը: Նման խնդրանքով 1889 թ. Կովկասի կառավարչապետին ընդհանուր դիմում են ներկայացնում Երեվանի գավառի Բեկջղազլու, Բեյուկ-Դալուլար, Ղամարլու և Դարդալու գյուղերի բազմաթիվ գյուղացիներ: Պատասխան չստանալով, նրանք հեռագրում են Թիֆլիս: 1892 թ. Ղամարլու տեղափոխվել ցանկացող գյուղացիները կրկին դիմում են կառավարչապետին: Այս անգամ խնդրագիրը Թիֆլիս է տանում գյուղացիներից մեկը՝ հույսով, որ պատասխանն անմիջականորեն իրեն կհանձնվի⁴⁷:

Իրենց հողային վատթար պայմանների բարելավման համար ճարահատյալ գյուղացիները համառորեն խնդրագրեր ու բողոքագրեր էին ուղարկում ամենատարբեր հասցեներով, տարիներ շարունակ պայքարում իրենց ամենակենսական հարցի՝ հողային ապահովվածության համար: Սակայն լրացուցիչ հողաբաժիններ ձեռք բերելուց զատ, պետական շատ գյուղերում բնակչության մտահոգության առարկան էր եղած հողերը ունեոր անձանց ոտնձգություններից պահպանելը: Վերջիններս զանազան ճանապարհներով ձգտում էին տեղ

դառնալ գյուղացիական հողաբաժիններին և ինչպես նշում է ցարական հետադոտողը՝ դրան հասնելու համար միջոցների միջև ընտրություն չէին կատարում⁴⁸: Զորաթան գյուղի կալվածատերեր Մելիք-Քալանթարյանները թովուզթենդիներին (Ղազախի գավառ) պատկանող հողակտորն իրենց ձեռքը գցելու համար ապավինում են Ելիզավետապոլի օկրուգային դատարանին⁴⁹, իսկ նույն գավառի միայն Ղրղի գյուղի բնակիչներից զավթում են շուրջ 200 դեսյատին հող⁵⁰:

Գյուղացիական բողոքների մի զգալի մասն էլ ուղղված էր ունեոր անձանց կողմից կատարվող բռնագրավումների դեմ: Մասնավոր անձանց կողմից նման զավթումների կապակցությամբ 80—90-ական թթ. իշխանության օգնությանն են դիմում Բորչալուի գավառի Հայկական Զալալօղի, Օձուն, Խաչիգյուղ, Դսեղ, Զանգեզուրի գավառի Վաղաղին, Նոր Բայազետի գավառի Փոբր Մազրա, Երևանի գավառի Կաֆարլու, Ավշար⁵¹ և բազմաթիվ այլ գյուղերի բնակիչներ: 1870—1885 թթ. ընթացքում Ղազախի գավառի պետական գյուղացիները զրկվել են 2630 դեսյատին հողից: Պետական 22 գյուղերի բնակիչներ մասնավոր անձանց կողմից ենթարկվել են մոտ 40 զավթումների, այդ թվում՝ Ղարադաշը, Լալաբենդը, Աղզիրարան, Ղուլալին, Թազաբենդը, Ղալաչան, Կոթիբենդը, Զողաղը և այլն⁵²:

Ոստիկանության ղեկարտամենտին ուղղած Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետի զեկուցագրում կցկտուր տվյալներ կան գյուղացիական, հավանական է, մի վառ ըմբոստացման վերաբերյալ, որը տեղի է ունեցել 1884 թ. Երևանի գավառի Գյողաբլու գյուղում: Հողատեր Եղիազարյանի և գյուղացիների միջև ծագած հողային խոշոր վեճն ի վերջո հանգեցնում է լուրջ ընդհարման: Գյուղացիները շրջապատում են հողատիրոջ տունը: Վերջինիս ծառաները պատուհաններից կրակում են նրանց վրա, որի հետևանքով շորս մարդ սպանվում է: Եղիազարյանն ու նրա ծառաները ձերբակալվում են, սակայն 3000 ռուբլի գրավակախով Եղիազարյանը կարողանում է կալանքից ազատվել⁵³:

1879 թ. Ղազախի գավառի նավուր գյուղի բնակիչները տեղական իշխանություններին բողոքում են նահանգային քարտուղար Քումանովի ապօրինի գործողությունների դեմ, որը գրավել էր գյուղի վարելահողերից շորս տեղամաս: Սակայն նրանք ոչ մի արդյունքի չեն հասնում: Քումանովը դատական մարիններին կաշառելու միջոցով կարողանում է իր ձեռքում պահել այդ հողամասերը: Գյուղացիները 1886 թ. դիմում են պետական ունեցվածքների մինիստրությանը՝ խնդրելով իրենց կողմից օգտագործվող պետական հողերի վերաբաժանում կատարել⁵⁴: Նույն գավառի Ուզունթալա գյուղի բնակիչները 1889 թ. պետական ունեցվածքների մինիստրի կողմասի լիազորին տեղեկացնում են, որ հողատեր Բատիևը սեփականացրել է «Ուտի-հողեր» կոչվող պետական հողակտորը, որ այդ գրավման մասին իրենք տեղյակ են պահել Ղազախի բաժնի հաշտարար միջնորդին, Ելիզավետպոլի օկրուգային դատարանին, սակայն իրենց օրինական խնդրանքը կամ մնացել է անհետևանք, կամ էլ մերժվել⁵⁵:

Ավելի ակտիվ են հանդես եկել Ղազախի գավառի Բարանա գյուղի բնակիչները: Իշխանություններին դիմելու փոխարեն գյուղացիները ապավինել են իրենց համերաշխություն ու ուժին: Տարիներ շարունակ գյուղացիները հավասարապես օգտվում էին «Միսխանա» կոչված հողակտորից: Սակայն 1897 թ. ամռանը Բարանայի հարուստ բնակիչ Ամիրաղյանցը, առանց գյուղացիների համաձայնության, իր ծառաներին հրամայում է արածեցնել և հնձել «Միսխանայի» խոտը: Գյուղացիներն այդ իմանալով շտապում են դեպքի վայր՝ հեռացնելու Ամիրաղյանցի ծառաներին: Երկու կողմերի միջև ծագում է մեծ կռիվ, սկզբում փայտերով, ապա հրացաններով: Վիրավորվում են իննը հոգի, որոնցից երկուսը ծանր: Զգալով, որ գործը կարող է բարդանալ, Ամիրաղյանցը գյուղացիներին առաջարկում է հարյուր ուրլի, որպեսզի նրանք չբողոքեն իշխանությունը⁵⁶:

Երևանի գավառի Բեյուր-Վեդի գյուղի բնակիչները 1891 թ. դիմում են պետական ունեցվածքների մինիստրին և խնդրում գյուղական հասարակությունից վտարել համագյուղացի հա-

րուստ ու աղղեցիկ բեկերին, որոնք գյուղական տանուտերերի և դատավորների օգնությամբ մի քանի տարվա ընթացքում իրենցից զավթել էին մոտ 600 դեսյատին հող⁵⁷: 1896 թ. նույն գավառի Ղալադիբի, Վարմազիար և Բայբուրդ գյուղերի բնակիչները դիմում են պետական ունեցվածքների նահանգային վարչությանը՝ խնդրելով օգնել իրենց կրկին տեր դառնալու բեկերի զավթած իրենց նախկին հողաբաժիններին:

Իշխանությունների հովանավորությամբ կատարվող անհաշիվ կեղծիքներն ու կամայականությունները, երկարատև ժամկետով հողավերաբաժանման դադարումները կապիտալիստական հարաբերությունների զարգացման պայմաններում նպաստում էին հողերի համակենտրոնացմանը ունեոր անձանց ձեռքում: Իշխանությունները շարունակում էին արձանագրել հողատերերի և այլոց կողմից գյուղացիական հողաբաժինների զավթման նորանոր դեպքեր, բայց սահմանափակվում էին սոսկ արձանագրողի դերով:

1870 թ. մայիսի 14-ի կանոնադրության 9-րդ և 10-րդ հոդվածների համաձայն կալվածատիրական գյուղացիության մեկ ծխին ընկնող հողաբաժինը պետք է կազմեր 15 դեսյատին, իսկ արական մեկ շնչին՝ 5 դեսյատին: Կանոնադրության նման ձևակերպումը սակավահող գյուղացիությանը ավելի համարձակ էր դարձնում իր հողային պայմանների բարելավման համար մղած պայքարում: Այդ պայքարում կալվածատիրական գյուղացիության արդարացի պահանջներն ավելի հաճախակի էին հիմնավորվում և անմիջապես բխում կանոնադրության վերոհիշյալ հոդվածներից: Երևանի գավառի Քոխանշալու գյուղի բնակիչները 1880 թ. հաշտարար միջնորդին տեղեկացնում են, որ իրենք օգտվում են ընդամենը 216 դեսյատին հողից, մինչդեռ 15 տարին լրացած արական շնչերի թիվը գյուղում հասնում է 128-ի, այնպես որ, յուրաքանչյուր շնչին երկու դեսյատին էլ չի հասնում: Գյուղացիները խնդրում են հողատիրոջ ավելցուկ հողերի հաշվին լրացնել իրենց հողաբաժինները⁵⁸:

1887 թվականին նույնպիսի հարց են բարձրացնում նաև Երևանի գավառի Չիլախանլու գյուղի բնակիչները⁵⁹, իսկ

նույն գավառի Ղարաղամզալու գյուղի բնակիչները 1887 թ. հաշտարար միջնորդին գրում են. «Ղարաղամզալու գյուղում, հողի պակասի հետևանքով, շինական հողաբաժինը ոչ միայն չի համապատասխանում օրենքով սահմանված չափին՝ յուրաքանչյուր արական շնչին հինգ ղեսյատին, այլ նույնիսկ չի էլ հասնում մեկ քառորդ ղեսյատինի»⁶⁰: Ի դեպ, տեղական իշխանությունները ստիպված են լինում բավարարել Ղարաղամզալու գյուղի բնակիչների խնդրանքը: Հողատեր Եղիազարյանը այդ որոշումը սվիններով է դիմավորում: Նրա բողոքի ձայնը հասնում է անգամ Սենատ, սակայն գյուղացիների պահանջն այստեղ նույնպես համարվում է օրինական⁶¹: Իսկ էջմիածնի գավառի Աղջաղալա սակավահող գյուղի բնակիչները 1887 թ. ընդունում են համայնական վճիռ՝ վերցնելու հողատեր նավասարդյանի ազատ հողերը և բաժանել ըստ շնչերի: Վճիռը ստորագրում են ավելի քան 40 գյուղացիներ⁶²:

1890 թվականին նման հարց են բարձրացնում նաև Երևանի գավառի սակավահող Չիրզամլու գյուղի բնակիչները: Նրանք հաշտարար միջնորդին խնդրում են հողատեր Եղիազարյանի ավելցուկ հողաբաժինների հաշվին լրացնել իրենց հողաբաժինները⁶³: Իսկ էջմիածնի գավառի Կարխուն գյուղի բնակիչները լրացուցիչ հողաբաժիններ ստանալու խնդրանքով 1895 թ. դիմում են Սենատ: Կարխունցիների բաժնեհողերը այն աստիճան չէին համապատասխանում մայիսի 14-ի կանոնադրությամբ սահմանված չափերին և անօրինակությունն այնքան աղաղակող էր, որ Սենատը ստիպված էր արդարացի համարել գյուղացիների պահանջը՝ լրացնել նրանց հողաբաժինները կալվածատիրոջ ազատ հողատարածությունների հաշվին⁶⁴:

Հողային վատթար պայմանների բարելավման համար պայքարում էր նաև Արևելյան Հայաստանի վանքապատկան գյուղացիությունը: Վերջինս բողոքագրեր էր հղում ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր իշխանություններին: Զանգեզուրի գավառի 9 գյուղեր Տաթևի վանքի սեփականությունն էին⁶⁵: Զբավարարվելով եղածով, վերջինս ձգտում էր ավելի ընդարձակել իր տիրույթները: Նման պարագաներում վանքի և

Շխլար պետական գյուղի միջև առաջացավ հողային վեճ, որն այնքան բորբոքվեց, որ հասավ մինչև Սենատ⁶⁶:

Նման զավթումների դեմ ահազանգում են Երևանի գավառի Բաշ-Գառնի գյուղի բնակիչները: 1884 թ. նրանք իշխանություններին տեղեկացնում են, որ Գեղարդի վանքը շարունակ գրավում է իրենց հողաբաժինները⁶⁷: Ավելի կտրուկ քայլերի են դիմում Ալեքսանդրապոլի գավառի Արթիկ պետական գյուղի բնակիչները: Սակավահողության ճիրաններում գտնվող գյուղացիները (80-ական թթ. տվյալներով նրանց ծխին ընկնում էր ընդամենը 1,3 ղեսյատին հող⁶⁸) ստիպված էին սեփական ուժերով պաշտպանել իրենց կենսական շահերը: Երեվանի նահանգապետը Կովկասի կառավարչապետին տեղեկացնում է, որ 1884 թ. ապրիլին Արթիկ գյուղի բնակիչները ինքնակամ գրավել են Ղփշղղի վանքին պատկանող մի հողակտոր և վարել այն: Նրանք չեն ենթարկվել գյուղ ժամանած գավառապետի օգնականի պահանջին՝ անմիջապես վերջ դնել կամայականություններին՝ քարկոծել են նրան և ոստիկաններին: Սակայն շատ ջանք չի պահանջվել իշխանություններից ճնշելու այդ ելույթը: Առավել ակտիվություն հանդես բերած գյուղացիներից հինգ հոգի անմիջապես նետվում են բանտ⁶⁹:

Վանքապատկան Տաթև գյուղի 26 ընտանիքներ, որոնք գտնվում էին տնտեսական անմխիթար պայմաններում և անչափ տուժում հոգևորականների կամայականություններից, 1884 թ. դիմում են Կովկասի կառավարչապետին՝ խնդրելով թույլատրել իրենց տեղափոխվել պետական ազատ հողերի վրա և դասվել պետական գյուղացիության շարքը: Տաթևցիների հողային պայմաններն անհապաղ բարելավելու անհրաժեշտությունը ստիպված էր ընդունել անգամ Ելիզավետպոլի նահանգապետը, սակայն վերագաս օրդանների կողմից գյուղացիների խնդրանքը մերժվում է⁷⁰:

էջմիածնի վանքապատկան Վաղարշապատ, Մաստարա, Օշական, Մուղնի, Եղվարդ գյուղերի բնակիչները նույնպես գտնվում էին տնտեսական անապահով վիճակի մեջ: Էջմիածնի սինոդը Վաղարշապատում ունեցած իր հողերի որոշ մասը տրամադրում էր գյուղացիներին իբրև բաժնեհող, իսկ մյուս

մասը աճուրդի հանում և տալիս կարճատև վարձակալությանը: Գյուղացիները դժգոհում էին այդ պրակտիկայի դեմ: 1896 թ. վաղարշապատցիները էջմիածնի գավառապետին գրում են. «Զի կարելի թույլ տալ, որ վանքն ունենա Վաղարշապատի գյուղական հասարակությանը պատկանող հողերի հանդեպ այդչափ լայն իրավունքներ, իսկ գյուղի բնակիչները շունենան ոչ մի իրավունք... ինչպես պետական, այնպես էլ վանական ու տերունական գյուղերում հասարակական հողերի տնօրինման իրավունքը, առանց որևէ բացառության, պատկանում է գյուղական ժողովին»⁷¹: Գյուղացիները պահանջում են սինոդի տնօրինման տակ գտնվող հողերը ըստ շնչի բաժանել իրենց վրա: Գոհացում չստանալով, 1896 թ. գյուղացիները դիմում են Երեւմանի նահանգապետին, իսկ մեկ տարի անց՝ Ռուսաստանի ներքին գործերի մինիստրին: Վաղարշապատցիները գրում են, որ իրենց հողաբաժինների հաշվին ավելանում են առանձին անձանց հողաբաժինները, որոնք ոչ մի կապ չունեն գյուղի հետ, ավելանում են սինոդի ծառայողների, վանականների հարազատների ու ծանոթների հողերը: Մինչդեռ գյուղացիների տքնտեսական կյանքն ամենևին չի մտահոգում վանքին: Այս խընդրագիրը ստորագրել են 145 գյուղացիներ⁷²:

Կալվածատիրական գյուղացիները պայքարի պատասխով ձևերից երբեմն անցնում էին ակտիվ ձևերի: Նրանք ինքնակամ սկսում էին օգտվել (իմա՝ բռնագրավել—Վ. Հ.) հողատիրոջը պատկանող հողերից: Երևանի գավառի Զանջիրլու գյուղի հողատերերը 1896 թ. գանգատվում են նահանգապետին, որ գյուղացիները ութ տարի առաջ սկսել են բռնագրավել իրենց հողերը: Նրանք գրում են, որ արյունահեղությունից խուսափելու նպատակով իշխանությունները պարտավոր են դիմել վճռական միջոցների: 1897 թ. նահանգապետը կարգադրում է սահմանազատել վիճելի հողատարածությունները⁷³:

Գյուղացիների կողմից իրենց հողերի բռնագրավման կապակցությամբ 1897 թ. իշխանությունների օգնությանն են դիմում Երևանի գավառի Ահամազալու գյուղի հողատերերը: Չհասնելով ոչ մի արդյունքի, նրանք պահանջում են, որպեսզի այդ հողերի դիմաց գյուղացիներն իրենց լրացուցիչ մուլը վճա-

րեն: 1899 թ. նման խնդրագրով նրանք դիմում են հաշտարար միջնորդին⁷⁴:

Հողատերերի և գյուղացիների միջև հողային սահմանների վիճելիության կապակցությամբ միայն 1895—1900 թ. Սենատը բողոքներ է ստացել Շարուր-Գարալագյազի գավառի Զիվա, Նախիջևանի գավառի Խալխալ, Երևանի գավառի Ալփավա, Սուրմալուի գավառի Ներթին Զարուխչի, Ալիղամարլու⁷⁵ և այլ գյուղերի բնակիչներից:

Շարուր-Գարալագյազի գավառի Ամաղու գյուղի բնակիչների և հողատեր Եղիազարյանների միջև առաջացած հողային վեճը 1894 թ. քննարկման առարկա է դառնում Երևանի նահանգի շինական գործերի նահանգային ատյանի նիստերից մեկում: Մուլքադարներն ի վերջո գյուղացիներին են զիջում վիճելի հողակտորներից մեկը: Սակայն մի քանի օր անց նրանք բողոք են ուղարկում Սենատ, որում նշում են, որ իրենք իրականում ոչ մի հողակտոր չեն զիջել և որ դա տեղի է ունեցել գյուղացիների սպառնալիքների հետևանքով⁷⁶:

Հողային գավթումներին գյուղացիները պատասխանել են համերաշխ պայքարով: Միայն 1893—1895 թթ. ընթացքում Ռուսաստանի ամենաբարձրագույն ատյանը՝ Սենատը երեք անգամ քննության առարկա է դարձրել Զանգեզուրի գավառի Բեխ գյուղի հողատերերի և գյուղացիների միջև ծագած հողային վեճը⁷⁷:

Բավականին հետաքրքրություն է ներկայացնում նաև Բորչալուի գավառի Շնող գյուղի բնակիչների և իշխան Բարաթովի միջև ծավալված հողային վեճը: Դեռևս 1893 թ. Թիֆլիսի գատական ատյանը քննելով այդ վեճը, որոշում է անհիմն համարել Բարաթովի հավակնություններն այդ հողերի նկատմամբ և դրանք մնում են գյուղացիների օգտագործման տակ: Չցանկանալով հաշտվել իրողության հետ, Բարաթովը 1896 թ. մարտին ամենահպատակ խնդրագրով դիմում է Նիկոլայ II-ին: Հիշեցնելով իր նախնիների գահին մատուցած «հավատարիմ և անձնուրաց ծառայությունները», նա խնդրում է թագավորին պաշտպանել իր «իրավունքները»⁷⁸: Գործն անմիջապես վերանայման է ենթարկվում: Հողագործության և պետական ունեց-

վածքների մինիստրության լիազորը այդ կապակցությամբ լրացուցիչ տեղեկություններ է ուղարկում պետերրորդյան իր դեկավարությանը: Դրանցից պարզվում է, որ վիճելի հողերից, որոնք կազմում են 1543 դեսյատին (անտառ, վարելահող, խոտհարք և այլն), հնուց ի վեր օգտվել են մոտակա Շնոդ գյուղի բնակիչները: Թե որքանով են անհրաժեշտ այդ հողերը շնոդցիներին երևում է նրանից, նշում է լիազորը, որ 257 ծուխ ունեցող (2800 շունչ) գյուղն ունի ընդամենը 400 դեսյատին վարելահող, այսինքն՝ 1,5 դեսյատին ծխին⁷⁹: Հողագործության և պետական ունեցվածքների մինիստր նրմոլովը կայսերական գրասենյակին ուղղած իր զեկուցագրում նույնպես ընդունում է այդ հողերի կենսական նշանակությունը Շնոդ գյուղի բնակիչների համար: Միաժամանակ նա ուշադրություն է հրավիրում հետևյալ հանգամանքի վրա, «Իշխան Բարաթովը պատկանում է Քիֆլիսի նահանգի առավել խոշոր և ունևոր հողատերերի թվին»⁸⁰, այսինքն՝ ասել կուզե, որ հարցը գյուղացիների օգտին լուծելու դեպքում, Բարաթովի շահերին լուրջ վտանգ սպառնալ չի կարող, քանզի անհամեմատ փոքր է այդ հողերի էական նշանակությունը այդ մեծահարուստ կալվածատիրոջ համար:

1899 թ. պետական ունեցվածքների մինիստրին են դիմում Շարուր-Գարալագյազի գավառի Կարխուն գյուղի բնակիչները: Նրանք գրում են, որ հարևան Արալխ-բեկ գյուղի հողատերերը գատական օրգանների օգնությամբ իրենցից զավթել են մոտ 140 դեսյատին հող: «Ենթադրենք, որ վիճելի հողերը նրանցն է,— նշում էին գյուղացիները,— ապա ինչի՞ հիման վրա և հանուն ինչի 80 տարիների ընթացքում այդ հողերն առանց որևէ հարկման հողատերերը թողել էին մեր տրամադրության տակ»⁸¹:

Դեռևս 1874 թ. պետական հողակտորների կապակցությամբ վեճ է ծագում Բորչալուի գավառի Կուրթան գյուղի բնակիչների և հողատեր Խան-Աղովների միջև, որոնց հարստահարությունները հայտնի էին ողջ Լոռիում: Վերջիններս համոզման, ահաբեկման և կաշառքի միջոցով կեղծ վկաներ են ճարում և դատարանը հարցը լուծում է նրանց օգտին: Եվ կարծես

նման դեպքերը նկատի ունեն նույն գավառի հաշտարար միջնորդներից մեկը, որը ստիպված էր խոստովանել, որ օրենքների կիրառման պրակտիկան գյուղացիության շրջանում հանգեցնում է այն հետևության, որ իրավունքը թղթի վրա ու իրավունքն իրականության մեջ տարբեր բաներ են և դատարաններում արդար է դուրս գալիս ոչ թե նա, ով ճշմարիտ է, այլ ով ավելի ճարպիկ է ու ձեռներեց⁸²: Գյուղացիները չեն լուում, բողոքում են այնքան, մինչև որ Քիֆլիսի նահանգապետը 1881 թ. կարգադրում է նոր հետաքննություն նշանակել, որը ձգվում է մինչև 1886 թ.: Այն ոչ մի փոփոխություն չի մտցնում գործում: Ճարահատյալ գյուղացիները 1888 թ. դիմում են թագավորին: Նախնական կարծիքի համար գործն ուղարկվում է պետական ունեցվածքների մինիստրին, որն էլ առաջ է քաշում նոր հետաքննություն նշանակելու գաղափարը⁸³: Իսկ թե ընդհանրապես նշանակվեց այդ նոր, թվով արդեն երրորդ հետաքննությունը և ինչպիսի վախճան ունեցավ այն՝ այդ մասին փաստաթղթում տեղեկություններ չկան:

1884 թ. Բորչալուի գավառի Ուռուտ գյուղի բնակիչները Քիֆլիսի նահանգապետին գրում են, որ կալվածատեր Խան-Աղովը, որը շատ զժբախտություններ է պատճառել իրենց, զավթել է գյուղացիական հողաբաժինները և, ինչպես միշտ, շարունակում է մնալ անպատիժ: Գյուղացիները խնդրում են «մեկընդմիշտ ազատել իրենց այդ ազահ անձնավորությունից»⁸⁴: Նույնպիսի վրդովմունքով են գրում նաև Լոռիի տեղամասի Նովո-Ալեքսանդրովկա գյուղի բնակիչները: Նրանք նշում են, որ արդեն 20 տարի է, ինչ իրենք պայքար են մղում չինովնիկ Խան-Աղովի դեմ, որն իրենցից զավթել է 268 դեսյատին հող⁸⁵:

Հողատեր Խան-Աղովների հետ ունեցած հողային վեճերը բացահայտ պայքարի են վերածվում Բորչալուի գավառի Լոռիի տեղամասի Վարդաբլուր և Կուրթան գյուղերում: Այլ Երիցյանը նշում է, որ 1883 թ. դատարանի որոշմամբ Կուրթան գյուղի հողաբաժնից 180 դեսյատին անցավ Խան-Աղովին, որի հետևանքով գյուղացիներն այնպիսի դրության մեջ դրվեցին, որ որոշեցին հարևան վարդաբլուրցիների հետ մեկտեղ (նրանցից էլ Խան-Աղովը զավթել էր ավելի քան 109 դեսյատին հող)

գիմագրավել իշխանութուններին⁸⁶։ Այսպիսով, ընդդիմանալով Քիֆլիսի դատական ատյանի որոշմանը, համաձայն որի իրենց օգտագործման տակ գտնվող պետական հողերի որոշ մասը դառնում էր հողատեր Խան-Աղովի սեփականությունը, Կուրթան և Վարդաբլուր գյուղերի բնակիչները զինված զիմագրություն ցույց տվեցին իշխանության ներկայացուցիչներին⁸⁷։

1884 թ. ամռանը, երբ հողաշափր փորձում է սահմանագծել վիճելի հողերը, երկու գյուղերի բնակիչները շրջապատում են նրան և պահանջում դադարեցնել աշխատանքները՝ սպառնալով հակառակ դեպքում սպանել նրան։ Հողաշափր ստիպված աճապարում է Քիֆլիս։ Հույս ունենալով փոխել դատական ատյանի որոշումը, գյուղացիները խնդրարկության նպատակով Պետերբուրգ են ուղարկում իրենց ներկայացուցիչներին։ Մինչդեռ գյուղացիների ըմբոստացման լուրն իր վրա է հրավիրում իշխանությունների ուղադրությունը։ Քիֆլիսի նահանգապետի կարգադրությամբ հողաշափր սեպտեմբերի 18-ին նորից է հայտնվում սահմանագծման վայրում՝ կազակների և ոստիկանության աստիճանավորների ուղեկցությամբ։ Այստեղ նախապես հավաքված կուրթանցիներն ու վարդաբլուրցիները (մոտ 200 հոգի) խնդրում են առ ժամանակ՝ մինչև Պետերբուրգից իրենց համագյուղացիների վերադարձը, հետաձգել սահմանագծման աշխատանքները։ Մերժում ստանալով, նրանք հարձակվում են աստիճանավորների և կազակների վրա, ցած գցում ձիերից, աշխատում խլել զենքը։ Չկարողանալով զիմակայել քարերի ու փայտերի տարափին, իշխանության ներկայացուցիչները զիմում են փախուստի, որին զայրացած ամբոխը հետևում է այնքան, մինչև որ կազակները կրակում են հրացաններից⁸⁸։

Կուրթան և Վարդաբլուր գյուղերի բնակիչների ելույթը ձնշվում է։ Մի քանի շաբաթով 100 կազակներից բաղկացած էկզեկուցիա է նշանակվում այդ գյուղերում⁸⁹։ Քիֆլիսի նահանգապետը շտապում է զեկուցել կառավարչապետին, որ գրությունը խաղաղվել է և գործը հանձնվել հետաքննության, իսկ «անկարգության» գլխավոր մեղսակիցները ձերբակալվել են։ Կառավարչապետը Քիֆլիսի դատական ատյանի դատա-

խազին նկատել է տալիս, որ սույն գործին հատկացվի հատուկ ուղադրություն և որ «անկարգության» գլխավոր մեղսակիցները ընդունվեն ազատության մեջ⁹⁰։ Այդպես էլ լինում է։ 25 գյուղացիներ նստում են մեղադրյալի աթոռին⁹¹։

Կուրթան և Վարդաբլուր գյուղերի բնակիչների հողի համար մղվող պայքարը չի դադարում նաև հետագա տարիներին։ Խան-Աղովի հետ ունեցած վեճի կապակցությամբ 1888 թ. կուրթանցիները զիմում են Ալեքսանդր III-ին⁹²։ Իսկ ահա թե ինչ են գրում նրանք 1897 թ. Կովկասի կառավարչապետին. «Վիճելի հողերի վերաբերյալ թող հարցնեն շրջակա գյուղերի բնակիչներին, որոնց վրա Խան-Աղովները ոչ մի իրավունք չունեն, բացի ուժեղի իրավունքից»⁹³։

1893 թ. ապրիլին գյուղացիական լուրջ հուզումներ են տեղի ունենում Լոռիի տեղամասի Մեծ Ղարաքիլիսա գյուղում⁹⁴։ Մեծահարուստ կալվածատիրուհի Բագրատինոն-Մուխրանսկայան երկար տարիներ շարունակ իր հողերը վարձակալման էր հանձնում Մեծ Ղարաքիլիսա և Շիշթափա գյուղերի բնակիչներին։ Սակայն հողերի հետագա վարձակալման կապակցությամբ վերջիններիս հետ չհաշտվելով, Մուխրանսկայան ցանկանում է դրանք տրամադրել նովո-Միխայլովկա գյուղին։ 1893 թ. պետական ունեցվածքների միևնույնությունն այդ հողերի փոխարեն Մեծ Ղարաքիլիսա և Շիշթափա գյուղերին հող հատկացրեց Ալեքսանդրապոլի գավառում։ Գյուղացիները, որոնք ավելի քան 70 տարի ապրում էին այդ արգավանդ հողերի վրա, չցանկացան դրանք փոխարինել անմշակ հողերի հետ։ Նրանք հրաժարվեցին կատարել կալվածատիրոջ կամքը, հետևաբար և ճանաչել նրա սեփականատիրական իրավունքն այդ հողերի նկատմամբ ու կազմակերպված ոտքի կանգնեցին իրենց շահերի պաշտպանության համար։ Մեծ Ղարաքիլիսա և Շիշթափա գյուղերի բնակիչները համոզված էին, որ եթե թույլ չտան նովոմիխայլովցիներին օգտվել այդ հողերից, ապա Մուխրանսկայան ի վերջո ստիպված կլինի իրենց թողնել իր հողերի օգտագործման իրավունքը։

Հարցը կարգավորելու նպատակով նովո-Միխայլովկա է գալիս Լոռիի պրիստավը՝ իր մի խումբ ստորադրյալների ու-

զեկցությամբ: Նրա ներկայությամբ անգամ նովոմիխայլով-
ցիները չեն կարողանում մոտենալ Մեծ Ղարաքիլիսա գյուղի
հողերին, որովհետև այնտեղ նախապես հավաքված են լինում
ղարաքիլիսցիները՝ զինված ու ինչով կարող էր: Նկատելով
պրիստավին և հեծյալներին, գյուղացիները հարձակվում են
նրանց վրա և աշխատում ցած գցել ձիերից: Ցանկանալով ազ-
դել «կատաղած ամբոխի» վրա, հեծյալները մարտական պատ-
րաստության են բերում իրենց հրացանները: Երբ պրիստավը
հրամայում է ձերբակալել առավել ակտիվ գյուղացիներից
մեկին, ապա գյուղացիները գոչելով, որ իրենք բոլորն են
ապստամբում և ոչ թե միայն նա, վայրկենապես թափվում
են հեծյալների վրա և ազատում իրենց համագյուղացուն: Վեր-
ջինիս նորից են ձերբակալում և նույն տեսարանը կրկնվում է
նույն հաջողությամբ: Լոռիի պրիստավը Բորչալուի գավառա-
պետին գրում է. «Դա պատահական հավաք չէր, այլ համարյա
հրամանով գործող բավական կազմակերպված ամբոխ: Լուրեր
են պատվում, որ զարաքիլիսցիները նախապես միմյանց գրա-
վոր պարտավորություն էին տվել ոչ մի բանի առաջ չնահանջել
և ի հարկավ օգտագործել նույնիսկ զենք»⁹⁵:

Արևիվային նյութերը խոսում են հօգուտ գյուղացիների
համառության, որոնք պատրաստ էին իրենց կենսական հար-
ցերի հարցի՝ հողի համար «մորթոտվել մինչև վերջին մարդը,
ավելի շուտ ուտել այդ հողը, բայց չզրկվել գրանցից»⁹⁶: Այդ
նույն նյութերը սակայն, խոսում են և հօգուտ մեկ այլ համա-
ռության, այն համառության, որով իշխանությունները ձգտում
էին բավարարել Կովկասի հայտնի կալվածատերերից մեկի՝
Մուխրանսկայայի ցանկությունը: Գավառապետին ուղղած զե-
կուցագրում պրիստավը նշում է, որ առանց զինվորական
սուիդ օգնության հնարավոր չէ զարաքիլիսցիներին հնազան-
դեցնել և քանի որ ինքը հնարավորություն չունի մշտապես
գտնվել Շիշթափայում և Մեծ Ղարաքիլիսայում, ապա խնդրում
է վերոհիշյալ վայրերում կազակներ պահել՝ խուսափելու հա-
մար ուժեղ ընդհարումներից ու գյուղերի բնակիչներին հաս-
կացնել տալու, որ այդ հողերն իրենց համար առհավետ կու-
րած են⁹⁷:

Գյուղացիների ըմբոստացման լուրն անհանգստացնում է
նաև Թիֆլիսի նահանգապետին, որը շտապում է Կովկասի
կառավարչապետին տեղեկացնել, որ կարգ ու կանոնի վերա-
կանգնման և զլխավոր մեղավորների ձերբակալման նպատա-
կով Մեծ Ղարաքիլիսա է ուղարկվել 15 կազակ: Եվ առաջի-
կայում սպասվող լուրջ անկարգություններից խուսափելու
նպատակով նահանգապետը կառավարչապետից թույլտվու-
թյուն է խնդրում Թիֆլիսի Մետեխի բանտը նետել առավել ակ-
տիվ գյուղացիներին⁹⁸: Կառավարչապետն ավելի հեռու է գնում
և նահանգապետից պահանջում է հետևյալը. «Շաշվի առնելով
Շիշթափա և Մեծ Ղարաքիլիսա գյուղերի բնակիչների կողմից
հողերի բռնագրավումը, ոստիկանությանը համառ զիմադրու-
թյուն ցույց տալը, պաշտոնատար անձանց վիրավորելը, ես
անհրաժեշտ եմ համարում մեղավորներին օրինակելի պատժի
ենթարկել և դրա համար Մեծ Ղարաքիլիսա գյուղն էկզեկու-
ցիայի ենթարկել երկու շաբաթով, ուղարկելով այնտեղ կա-
զակների կես հարյուրակ (մթերքը բնակչության հաշվին):
Միաժամանակ բանտ նետել անկարգության զլխավոր մասնա-
կիցներին: Ի կատարումն սոցա կսպասեմ Ձեր զեկուցագրին»⁹⁹:
Կովկասի կառավարչապետը համաձայնում է էկզեկուցիա
նշանակել, որպեսզի, ինչպես ինքն է նշում, բնակչությանը
պարզ լինի «իր վարքագծի ողջ հանցանքը» և նկատել տալիս,
որ ապագայում ամենափոքրագույն անկարգության համար
իսկ կձեռնարկվեն ամենից կտրուկ վարչական խիստ միջոց-
ներ¹⁰⁰:

Առավել ակտիվություն ցուցաբերած տասը գյուղացիներ
նետվում են Մետեխի բանտը: Նրանք Թիֆլիսի նահանգապե-
տին գրում են, որ անարդարացի են համարում իրենց դեմ
ուղղած մեղադրանքը և խնդրում վերջինիս ճիշտ ընթացք տալ
գործին և օգնել իրենց, քանի որ բարոյական-ֆիզիկական
տանջանքի են ենթարկվում ոչ միայն իրենք, այլև իրենց
գժբախտ ընտանիքները, որոնք հանձնվել են բախտի քմա-
հաճույքին¹⁰¹: Շատ հասկանալի պատճառով նահանգապետը
մերժում է այդ խնդրանքը:

Արխիվային գործում այս էլույթի վերաբերյալ այլ տեղեկություններ չկան, սակայն հղածն էլ բավարար չափով հիմք է տալիս ասելու, որ հողի համար Մեծ Ղարաքիլիսա գյուղի բնակիչների պայքարը Արևելյան Հայաստանի XIX դարի վերջի գյուղացիական շարժումների առավել ուշագրավ էջերից մեկն է:

Մուխրանսկայայի հողերի փոխարեն Մեծ Ղարաքիլիսա և Շիշթափա գյուղերի բնակիչներին հատկացված հողաբաժինները հետո էին բավարար լինելուց թե՛ քանակապես և թե՛ որակապես: Այդ են վկայում վերոհիշյալ գյուղերի բնակիչների ստորագրությունները կրող բազմաթիվ խնդրագրերը: 1894 թ. Ղարաքիլիսացիները պետական ունեցվածքների մինիստրի Կովկասի լիազորին գրում են, որ Մուխրանսկայայի հողերից վտարվելուց հետո իրենց հատկացված հողակտորը պիտանի չէ վարելու համար և խնդրում են այլ հողակտոր տրամադրել: 1895 թ. և 1900 թ. նրանց նոր խնդրագրերը նույնպես մնում են անհետևանք¹⁰²:

1894 և 1896 թթ. նույն հասցեով դիմում են նաև Շիշթափա գյուղի բնակիչները և խնդրում հողաբաժիններ տրամադրել այլ վայրերում¹⁰³: 1896 թ. Կարսի մարզ տեղափոխվելու նպատակով նրանք դիմում են Կովկասի կառավարչապետին: Գյուղացիները հույս ունեին այստեղ ստանալ հողային ազատ տարածություններ: Սակայն նրանց խնդրանքը մերժվում է ընդհանուր կարգադրության համաձայն, որով քաղաքական նկատումներից ելնելով, հայերին արգելվում էր տեղափոխվել Կարսի մարզ¹⁰⁴: Լրուցուցիչ հողեր ձեռք բերելու նպատակով շիշթափացիները 1896 թ. դիմում են թագավորին, սակայն ապարդյուն¹⁰⁵: Դրանցից հետո էլ ամեն տարի գյուղացիները նույն հարցը ստիպված էին բարձրացնել կովկասյան իշխանությունների առջև¹⁰⁶:

Հողային սահմանների անորոշությունը լուրջ վեճեր էր ծնում նաև գյուղերի միջև: Հաճախ վեճը գնում էր անհամեմատ փոքր հողակտորների կապակցությամբ, որը նյութական լուրջ վնաս էր հասցնում գյուղացիներին: Օրինակ՝ հարևան գյուղերի հետ Աշասու գյուղի ունեցած հողային վեճը «լուծելու» հա-

մար հանդես են գալիս մի շարք անձնավորություններ, որոնք դառնալով աշատուցիների հավատարմատարները, շատ շանցած «իրենց շարժարանքների համար» գյուղական հասարակությանն են ներկայացնում 6000 ուրբու հաշիվ: Սակայն վեճն այդպես էլ չի լուծվում: Խեղճ գյուղացիները չգիտեին ինչպես ազատվել այդ պարտքերից¹⁰⁷:

1850-ական թթ. Ղազախի գավառի կալաքենդ և Ուզունթալա գյուղերի միջև վեճ է ծագում 35 դեսյատին հողի շուրջը, որն անընդմեջ ձգվում է շուրջ 30 տարի: Վիճելի հողամասերում հաճախ էին առաջանում ծեծկոտուքներ, որոնց մասնակցում էին անգամ կանայք ու երեխաները: Բանը հասնում էր նույնիսկ հրազենին: Հարցը կարգավորելու նպատակով քանիցս դեպքի վայրն են ժամանել գավառական իշխանավորները: Սակայն ոչ մի արդյունք: Հետաքրքիրն այն է, որ երկու գյուղերն էլ, որոնք հավասարապես զգում էին հողի սուր կարիք, փոխադարձաբար արգելում էին միմյանց օգտվելու վիճելի հողերից և երեսուն տարիների ընթացքում այդ 35 դեսյատինը երկու կողմերի համար մնաց անօգուտ մի հողակտոր: Վերջապես 1885 թ. լալաքենդցիներն ու ուզունթալցիները կնքում են համաձայնագիր՝ վերոհիշյալ հողերից հավասարապես օգտվելու վերաբերյալ¹⁰⁸:

1880—90-ական թթ. արևելահայ գյուղում պայքար էր գնում հողի վերաբաժանման համար: Երևանի նահանգում հողի վերաբաժանումները կատարվում էին մեծ ուշացումներով: Գյուղի ունեւոր տնտեսությունների համար այդ ձեռնտու էր, իսկ չքավոր գյուղացիները պայքարում էին համայնական հողերը բոլոր շնչի վերաբաժանման համար: Նման պահանջով 1888 թ. հանդես եկան Շարուր-Գարալագյաղի գավառի Խաչիկ գյուղի բնակիչները, սակայն գավառապետը այն մերժեց: 1892 թ. նրանք կրկին բարձրացրին այդ հարցը և նորից մերժվեցին: Իսկ 1894 թ., երբ նրանք վերջապես հասան իրենց նպատակին, պարզվեց, որ հողաբաժանարարները թույլ են տվել լուրջ շարաշահումներ: Նոր վերաբաժանում կատարելու խնդրանքով 1895 թ. գյուղացիները դիմեցին Կովկասի կառավարչապետին, իսկ 1896 թ. Երևանի նահանգապետին՝ պահանջելով «սահմա-

նել գյուղում կարգ ու լուսություն, այլապես այժմյան անկարգու-
թյունները կհասնեն արյունահեղության»¹⁰⁹։

1895 թ. փետրվարին հուղումներով է բռնկվում Ալեք-
սանդրապոլի գավառի Թապաղօլակ գյուղը։ Գյուղացիները շատ
էին տուժում սակավահողությունից։ Նրանք ցանկանում էին
հողի վերաբաժանում կատարել։ Սակայն գյուղի հոգևորակա-
նությունը, որը հողերի մեծ և լավ մասը իր ձեռքն էր գցել,
ձգտում էր պահպանել նախնական դրությունը։ Հիշյալ գյուղի
վեճը մեծանալով հասնում է գավառապետի ատյանը։ «Իշխա-
նությունը հարգելով գյուղացիների խնդրեր՝ հօգուտ հողա-
զուրկ գյուղացիների է վճռել, բայց հոգևորականությունը ամեն
տեսակ խարդախ միջոցներ է գործ դնում, որ հողը կրկին իր
ձեռքը մնա»¹¹⁰։

Բնակչության բնական աճը և երկարատև ընդմիջումներով
կատարվող հողավերաբաժանումները նպաստում էին հողա-
սակավության խորացմանը։ Ալ. Երիցյանը նշում է, որ Շամ-
շադինի տեղամասի հին գյուղերում այնքան վաղուց չեն եղել
վերաբաժանումներ, որ ներկա սերունդը չի հիշում այդպի-
սիք¹¹¹։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացման
պայմաններում այդ հանգամանքը նպաստում էր հողերի հա-
մակենտրոնացմանը ունևոր անձանց ձեռքում։ Պետական ու-
նեցվածքների միևնույն Կովկասյան լիազորը 1894 թ. վերին
Աղզան գյուղի առնչությամբ նշում էր, որ գյուղական առան-
ձին ծխերի միջև հողերը ծայրահեղ անհավասարաշափ են
բաշխված¹¹²։

Նույն գյուղից «Մշակ» թերթին գրում էին. «Հողային հար-
ցը ոչ միայն մեղանում, այլև շրջակա Քարվանսարա, Ուզուն-
թալա և այլ գյուղերում հերթական է դարձել։ Կյանքի պայման-
ները անհրաժեշտորեն առաջ են բերել հողը շնչի վրա բաժանե-
լու արդարացի սկզբունքը. այդ պատճառով խոշոր անհամա-
ձայնություններ են ծագում հողատեր և անհող գյուղացիների
միջև»¹¹³։

Երևանի նահանգի և Կարսի մարզի գյուղատնտեսությունն
ու գյուղացիների տնտեսական կյանքը լրջորեն ուսումնասիրած
Ս. Զավարյանը, խոսելով Երևանի նահանգի գյուղացիության

սակավահողության մասին, նշում էր, որ բնակչության աճի
հետ մեկտեղ ավելի ու ավելի են շատանում չբավոր գյուղա-
ցիների բողոքները ունևոր անձանց զավթումների դեմ, ծագում
են մեծ վեճեր, ընդհարումներ։ «Համարյա բոլոր գյուղերի
բնակչությունը բաժանվել է խիստ թշնամական խմբերի. հին
կարգի (համփաշարեջյան սիստեմի) համախոհների և ըստ
շնչերի վերաբաժանման կողմնակիցների։ Գործը հասել է ընդ-
հույզված ընդհարումների... Պայքարը շարունակվում է
այսօր էլ և գյուղերում բոլոր մյուս հարցերը դժգոնում են
վերաբաժանման հարցի առաջ»¹¹⁴։

Մայիսի 14-ի կանոնադրության համաձայն կանոնադիր
կազմելուց հետո կալվածատիրական գյուղում արգելվում էր
հողի պարբերական վերաբաժանումը և յուրաքանչյուր ծխի
ամրացվում էր որոշակի հողակտոր։ Սակայն հենց 70-ական
թվականներից կալվածատիրական գյուղում չբավոր և ունևոր
գյուղացիության միջև ծավալվում է սուր պայքար հողօգտա-
գործման այդ նոր պայմանների շուրջը։ Բնակչության բնական
աճի և կապիտալիստական հարաբերությունների զարգացման
պայմաններում տեղի էր ունենում հողերի համակենտրոնաց-
ման պրոցես, դրանք կենտրոնանում էին գյուղի ունևոր տար-
րերի ձեռքում։ Ուստի, չբավոր գյուղացիությունը պայքարում
էր ինչպես ըստ շնչի հողի վերաբաժանման համար, այնպես էլ
նման վերաբաժանման դեմ հանդես եկող գյուղական նորա-
ծին բուրժուազիայի դեմ։ Փաստորեն դա կալվածատիրական
գյուղում ընթացող սոցիալական երկրորդ պատերազմն էր։
Հողի վերաբաժանման համար մղվող պայքարում գյուղացինե-
րը մեծ դժվարությունների էին հանդիպում։ Նրանց ամեն ան-
գամ հիշեցնում էին մայիսի 14-ի Կանոնադրության համա-
պատասխան կետի մասին, այսինքն իշխանության ներկայա-
ցուցիչները օրենքի ուժով, փաստորեն, սրբազործում էին անօ-
րինականությունը։

Հողատերերի և գյուղացիների միջև առկա հողային բազ-
մապիսի վեճերը, հողային սահմանների անորոշությունը, հո-
ղի վերաբաժանումները, հողային զավթումները և այլն, գյու-
ղում ստեղծում էին մշտական լարվածության մթնոլորտ։ Ոս-

տիկանության ղեկարտամենտին ուղղած զեկուցագրում Երեւանի նահանգային ժանդարմական վարչության պետը նշում էր, որ 1884 թ. ընթացքում նահանգում տեղի ունեցած ղեկաբերից կառավարության ուշադրությանը կարող են արժանանալ հողային հարցերի հետ կապված այն «որոշ թյուրիմացությունները», որոնք ծագել են գյուղացիների և մուլքադարների միջև, սակայն շտապում է ավելացնել, որ տեղական իշխանությունների կողմից ժամանակին ձեռնարկված միջոցառումները շնորհիվ դրանք վերացվել են¹¹⁵:

Ցարիզմի ագրարային քաղաքականությունը ոչ միայն չէր նպաստում հողային բազմաբնույթ ու անհամար վեճերի լուծմանը, այլև օբյեկտիվ պայմաններ էր ստեղծում դրանց ավելացման համար: Վիճելի հողերը համընդհանուր տարածում ունեին: Պետական գյուղացիության տրամադրության տակ գտնվող հողերից Երեւանի գավառում վիճելի էր 7.520 դեսյատինը, Զանգեզուրի գավառում՝ 8.748 դեսյատինը, նոր Բայազետի գավառում՝ 8,878 դեսյատինը¹¹⁶ և այլն:

XIX դարի վերջերին հողի համար մղվող պայքարում ներգրավված էին արևելահայ թե՛ պետական, թե՛ կալվածատիրական և թե՛ վանքապատկան գյուղացիները: Գյուղացիական խնդրագրերը այդ պասսիվ պայքարի և արևելահայ գյուղում տիրող սակավահողության խոսուն վավերագրերն են:

1880—90-ական թվականներին իրենց հողային պայմանների բարելավման հարցը իշխանությունների առաջ բարձրացրել են Արևելյան Հայաստանի հարյուրավոր գյուղերի բնակիչները: Այդ են վկայում արխիվային բազմաթիվ գործերը, որոնց միայն վերնագրերի թվարկումը կզբաղեցնեն շատ ու շատ էջեր: Անշուշտ, գյուղացիական այդ բոլոր խնդրագրերին ու բողոքագրերին անդրադառնալ հնարավոր չէ և անհրաժեշտ էլ չէ, քանի որ դրանք ունեն համարյա նույն ձևն ու բովանդակությունը, ուստի շարժեր դրանք կրկնել: Մի բան պարզ է. այդ փաստաթղթերը արևելահայ գյուղում տեղի ունեցած ագրարային հուզումների լավագույն վկայումն են:

Գ Լ ՈՒ Ն Ե Ր Ր Ո Ր Գ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՑԱՐԻԶՄԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Ցարիզմի հարկային հարստահարման դեմ մղվող պայքարը արևելահայ գյուղացիության պայքարի հիմնական ուղղություններից մեկն էր: Այդ պայքարում ներգրավված էին գյուղացիության երեք կատեգորիաներն էլ, քանի որ այն ուղղված էր ինչպես պետական, այնպես էլ կալվածատիրական հարկերի ու պարհակների դեմ: Հարկային ծանր համակարգը, հարկահավաքման ընթացքում տեղի ունեցող շարաշահումներն ու բռնությունը նպաստում էին գյուղացիական հուզումների ծավալմանը:

Գյուղացիները հրաժարվում էին հարկերի վճարումից: Դրանք վեր էին ածվում ապառքների, որոնք տարիների ընթացքում կուտակվելով ծանր բեռ էին դառնում նրանց համար: Եթե 1885 թ. Երևանի նահանգում ապառքները կազմել են 370.875 ռուբլի, ապա 1890 թ. այդ գումարը կազմել է 914.150 ռուբլի¹: Զանգեզուրի գավառում այն համեմատաբար ավելի է աճել՝ 21.000-ից հասնելով մոտ 144.000 ռուբլու, իսկ միայն Ղազախի գավառում 1890 թ. ապառքները կազմել են մոտ 332.000 ռուբլի²: Կայսրին հասցեագրած 1890 թ. զեկուցագրում Երևանի նահանգապետը նշում էր, որ ապառքների գանձման համար տեղական ազմինիստրացիան զիմում է «օրինական միջոցները»³ (իմա՝ ոստիկանական ուժի—Վ. Հ.):

Տարիներ շարունակ գյուղացիները ցարական աստիճանավորների առջև հարց էին հարուցում իրենց հարկացուցակներից հանել կամ երկարաձգել ապառքների վճարման ժամ-

կեսները: 1888—1890 թթ. նման խնդրանքով Երևանի նահանգապետին են դիմում Նոր Բայազետի գավառի Գեմաշեն, Զարդիրի, Ղարաբուլաղ, Աղփարա, Էջմիածնի գավառի Սաֆիարագ, Կարբի⁴ և այլ գյուղերի բնակիչներ: Նոր Բայազետի գավառի Մաքրավանք գյուղի բնակիչները 1890 թ. դիմում են Ֆինանսների մինիստրությանը և խնդրում՝ հաշվի առնելով իրենց սակավահողությունը, հարկացուցակից հանել գոյացած ապառքները⁵: Ըստ 1886 թ. տվյալների մաքրավանքցիների յուրաքանչյուր ծխին հասնում էր 4,32 դեսյատին, իսկ յուրաքանչյուր շնչին՝ 0,62 դեսյատին հող: Ֆինանսների մինիստրությանն ուղարկած գրույթյան մեջ Երևանի նահանգապետը նշում էր, որ մաքրավանքցիներին խնդրանքն արժանի է ուշադրության, հակառակ դեպքում գյուղացիները վերջնականապես կզրկվեն հարկերի վճարողունակությունից: Պետական ունեցվածքների մինիստրությունում այս հանգամանքը նկատի ունենալով որոշվեց Մաքրավանք գյուղին հատկացնել լրացուցիչ հողաբաժին: Սակայն տրամադրվեցին ընդամենը 64 դեսյատին, այն դեպքում, երբ գյուղը սակավահող էր և ուներ 513 շունչ բնակչություն⁶:

Ապառքների դանձման ժամկետների երկարաձգման խնդրանքով 1894 թ. Ելիզավետպոլի նահանգապետին են դիմում Զանգեզուրի գավառի Բարթաղ գյուղի բնակիչները: Ֆինանսների մինիստրությանն ուղարկած գրույթյան մեջ Ելիզավետպոլի նահանգապետը նշում է, որ բարթաղցիները գոնվում են տրեստեսական անբարենպաստ պայմաններում, նրանց ցանքերն ամբողջովին փչացել են մորեխի և երաշտի պատճառով: Ապառքների վճարման ժամկետը որոշվում է երկարաձգել հինգ տարով⁷: Կովկասի կառավարչապետին համանման խնդրանքով դիմում են նաև նույն գավառի Ալիգարա և Արծվանիկ գյուղերի բնակիչները⁸:

Վերոհիշյալ խնդրանքով 1895 թ. Երևանի նահանգապետին միացյալ դիմում են ներկայացնում Ալեքսանդրապոլի գավառի Սարալի գյուղական հասարակությանը պատկանող 10 գյուղերի հայ և ադրբեջանցի գյուղացիները: Նրանց խնդրանքը մերժվում է⁹: 90-ական թվականներին նույնպիսի

բախտի են արժանանում նաև Նոր Բայազետի գավառի Նորագույլ, Երևանի գավառի Ռեհանլու, Չարբախ, Էջմիածնի գավառի Սալու, Դուրդուղուլի, Մազարչուք, Աղաբլի, Կարգսբազար¹⁰ և այլ գյուղերի բնակիչներ: Ֆինանսների մինիստրությունում հաշվի առնելով կարգաբազարցիների տնտեսական վատթար պայմանները, որոշում են երեք տարով երկարաձգել ապառքների վճարումը, որոնք կազմում էին ավելի քան 2800 ռուբլի¹¹: Իսկ նույն գավառի Փարուխ և Կիրաշլու գյուղերի բնակիչները երկարատև ու անարդյունք պայքարից հետո ստիպված դիմում են Նիկոլայ II կայսրին: Միայն զրանից հետո, 1897 թ. երկարաձգվեց նրանց ապառքների վճարման ժամկետները¹²:

Ցարիզմի հարկային քաղաքականությունը նպաստում էր ապառքների գոյացմանն ու ավելացմանը: Երբ գյուղացիները հարց էին բարձրացնում երկարաձգել զրանց գանձման ժամկետները, ապա իշխանությունները երբեմն բավարարում էին նման բովանդակության խնդրագրերը: Եվ դա ոչ այնպատե՛ստաբար, որ անհնար էր շանսալ գյուղացիական մասսաների ձայնին: Ինչ-ինչ, դա նրանց մոտ լավ էր ստացվում: Նման զիջումներով ցարիզմը լուրջ մի նպատակ էր հետապնդում. պահպանել գյուղացու վճարողունակությունը, հակառակ դեպքում հարվածի տակ էին զրվում գանձարանի շահերը:

Արխիվային փաստաթղթերում երբեմն հանդիպում ենք գյուղացիական այնպիսի խնդրագրերի, որոնց հեղինակներն ավելի առաջ էին գնում՝ ապառքների դանձման ժամկետների երկարաձգման խնդրանքից զատ գյուղացիներն առաջ էին քաշում պետական հարկերի պակասեցման հարցը: Սակայն նման խնդրագրերը, ինչ խոսք, չէին կարող ունենալ երկու պատասխան՝ որպես կանոն զրանք մերժվում էին: Հիշարժան են Նոր Բայազետի գավառի Յահջի գյուղի բնակիչների խնդրագրերը (1882 թ.), Էջմիածնի գավառի Բաշ-Ապարանի գյուղական հասարակության 376 գյուղացիների ստորագրությունները կրող խնդրագրերը (1891 թ.), Ալեքսանդրապոլի գավառի Ալիխան, Սարիբաշ (1892 թ.), Նոր Բայազետի գավառի Շահրիգ, Ռնդամալ (1895 թ.)¹³ և այլ գյուղերի բնակիչների խնդրագրե-

րը: 1893 թ. մերժվում է նաև Ալեքսանդրապոլի գավառի Զա-
ջուռ, Հաջինազար-Ղուլի, Մեծ Դուզքենդ, Ղոնախողան, Հախ-
քիլիսա, Մեծ Սահրիար, Արիխվալի գյուղերի բնակիչների
միացյալ խնդրագիրը, որը ստորագրված էր անհամեմատ մեծ
թվով՝ 519 գյուղացիների կողմից¹⁴:

Ոչ մի տեղից չստանալով որևէ օգնություն ու կորցնելով
դրա նկատմամբ ամեն մի հույս հարկային հարստահարման
ճիրաններում գտնվող գյուղացիները ստիպված էին իրենց
կենսական շահերը պաշտպանել սեփական ուժերով: Նրանք
հրաժարվում էին վճարել հարկերն ու կուտակված ապառք-
ները:

Հարկերը վճարելուց գյուղացիների հրաժարման վառ օրի-
նակ է էջմիածնի գավառի հաթունարխ գյուղի բնակիչների
1894 թ. դեկտեմբերի 23-ի ելույթը: Վերջիններս ըմբոստանում
են գյուղ ժամանած իշխանության ներկայացուցիչների դեմ և
հրաժարվում վճարել պետական հարկերն ու գոյացած ա-
պառքները: Գյուղացիները ծեծում և գյուղից վճնդում են հար-
կահավաքներին, իսկ գյուղի տանուտերը սաստիկ ծեծի հեռե-
վանքով երկու օր անց մահանում է: էջմիածնի գավառապետն
անմիջապես հաթունարխ է ուղարկում հեծյալ կազակների
խումբ՝ գյուղում «կարգը վերականգնելու» համար: Գյուղացի-
ների հարկերի ու պարտքերի դիմաց բռնագրավվում են նրանց
անասունները, կահկարասին և այլն: Չբրբակավում և Երևա-
նի բանտն են նետվում առավել ակտիվություն ցուցաբերած
գյուղացիներից իննը հոգի¹⁵:

Հաթունարխ գյուղի ելույթի մասին Երևանի նահանգապե-
տը շտապում է իրազեկ դարձնել ոստիկանության ղեկարտա-
մենտին: Իր ղեկուցագրում նահանգապետը նշում էր. «Չնա-
յած վերևում նկարագրված անկարգությունները կատարել են
միայն հաթունարխ գյուղի բնակիչները, բայց այնուամենայ-
նիվ տվյալ ղեկաբին ես տալիս եմ խիստ կարևոր նշանակու-
թյուն: Վերջին տարիների ընթացքում, հանդեպ իշխանույթյա-
նը, մի քանի ակնհայտ և հանդուգն ղեկաբեր են եղել և այդ բո-
լոր ղեկաբերը տեղի են ունեցել հայկական գյուղերում: Ընդհա-
նուր կարգով ընթացք տրված այդպիսի գործերին դատավա-

րությունը տվել է խիստ տխուր արդյունքներ. կաշառված կամ
այլ դրդապատճառներով բացահայտ կերպով մեղադրյալների
կողմը պահող վկաների ցուցմունքների հիման վրա գործերը
վերջանում էին կամ մեղադրյալների լրիվ արդարացումով,
կամ մի քանիսին թեթև պատժի ենթարկելով:

Մեղավորների այդպիսի անպատիժ մնալը խիստ վնա-
սակար ազդեցություն թողեց ժողովրդի վրա, որի մասին վկա-
յում է, բացի այլ նկատառումներից և այն հանգամանքը, որ
վերջին ժամանակները իշխանությունը դիմադրելու ղեկաբերը
հաճախակի են դարձել»¹⁶:

Երևանի օկրուգային դատարանն ամեն ինչ արեց խուսա-
փելու համար նահանգապետի ակնարկած «տխուր արդյունք-
ներից»: Դրանք այս անգամ ստացվեցին «խիստ զոհացուցիչ»՝
իննը հաթունարխցիներ դատապարտվեցին 3—6 տարվա տա-
ժանակիր աքսորի: Թիֆլիսի դատական ատյանը չհասպաղեց
հաստատել Երևանի օկրուգային դատարանի կայացրած վճի-
որը: Մեղադրյալ գյուղացիները դիմեցին Սենատ, սակայն վեր-
ջինս նրանց բողոքը թողեց անհետևանք¹⁷:

Ուշագրավ են Երևանի նահանգապետի վերոհիշյալ այն
խոսքերը, որոնցից պարզվում է, որ 90-ական թվականների
սկզբներին Երևանի նահանգի հայկական գյուղերում տեղի
են ունեցել իշխանության դեմ ուղղված «մի քանի ակնհայտ և
հանդուգն ղեկաբեր»: Յավոք, մենք դեռևս չգիտենք, թե որոնք
են այդ ղեկաբերը և զույգ հնարավոր էլ չլինի այդ պարզել:
Սակայն կարևորն այստեղ փաստն է՝ եղել են գյուղացիական
աչքի բնկնող մի շարք ելույթներ, որոնք լուրջ մտահոգություն
են պատճառել անգամ նահանգի ցարական ամենաբարձրա-
տիճան իշխանավորին:

Գյուղացիներն ընդդիմանում էին նաև ակցիզային հար-
կերի դեմ, որոնք գնալով աճում էին: Երևանի նահանգում
1875 թ. ակցիզային հարկերը կազմել են 67.330 ռուբլի, իսկ
1899 թ.՝ 205.213 ռուբլի 91 կոպեկ¹⁸: Գինու-օղու պատրաստ-
ման, ծխախոտի մշակման և գյուղատնտեսության մի շարք
այլ ճյուղերով զբաղվելու համար գյուղացիները պարտավոր
էին վճարել ակցիզային հարկեր, որոնք ազդում էին ինչպես

գյուղացու տնտեսական դրության, այնպես էլ գյուղատնտեսության համապատասխան ճյուղի հետագա զարգացման վրա: Գյուղացիները հաճախ փոխում էին տվյալ զբաղմունքը, իսկ երբեմն էլ դիմագրավում ակցիզային աշխատողներին, հրաժարվում նրանց որևէ հարկ վճարել:

Ոստիկանության ղեկավարամենտի գրությունից տեղեկանում ենք, որ Երևանի գավառի Այասլու գյուղի մի խումբ գյուղացիներ 1885 թ. դեկտեմբերին զինված դիմադրություն են ցույց տվել ակցիզային վերակացուին և ոստիկանությանը, ընդ որում վերակացուն սպանվել է¹⁹: Անմիջապես ղեկավարվալուն են ժամանել Երևանի նահանգապետը, գավառապետը և պաշտոնատար այլ անձինք: Նահանգապետը կովկասի կառավարչապետին խնդրել է մեղավորներին խստագույն պատժի ենթարկել և դատել ռազմական ժամանակների օրենքներով, որպեսզի բնակչությունն այդուհետ «պատշաճ հարգանքով» վերաբերվի «օրենքին և դրա կենսագործողներին»²⁰: Այասլու գյուղը զրկվում է տանուտեր ընտրելու իրավունքից: Ներքին գործերի մինիստրը կառավարչապետին տեղեկացնում է, որ Արևքսանդր III կայսրը թույլատրել է մեղավոր այասլուցիներին հանձնել ռազմական դատարանին²¹:

Էջմիածնի գավառի Պիրագան գյուղի բնակիչները 1886 թ. դեկտեմբերին դիմադրավել են ակցիզային վարչության աստիճանավորներին, որի հետևանքով վերջիններս ստացել են մարմնական վնասվածքներ²²: Նույնպիսի դիմադրություն պիրագանցիները ցույց են տվել նաև 1888 թ. նոյեմբերին: Ակցիզային վարչության վերակացուն ցանկացել է զենք բանեցնել, որով ավելի է զրգռել ամբոխին և հազիվ կարողացել փրկվել մահից: Ակցիզային վարչության ղեկավարությունը Երևանի նահանգապետին առաջարկում է պատժել «Ինքնագլուխ» գյուղացիներին՝ նշանակել Պիրագանում էկզեկուցիա, կամ էլ կառավարչական տանուտեր²³: Մի քանի տարի անց պիրագանցիները նորից են ըմբոստանում՝ 1892 թ. մարտին նրանք զինված դիմադրություն են ցույց տալիս ակցիզային վերակացուներին²⁴: Պատահական չէ, որ երկրամասի ակցիզային վարչության ղեկավարներից մեկը այս վերջին ելույթի

կապակցությամբ Երևանի նահանգապետին գրում էր. «Պիրագանի բնակիչները ընդհանրապես աչքի են ընկնում ծայրահեղ անհնազանդությամբ, սանձարձակ ու հանդուգն վարքով...»²⁵:

1890 թ. փետրվարին ակցիզային վարչության վերակացուին և նրա օգնականին նույնպիսի դիմադրություն են ցույց տալիս նաև էջմիածնի գավառի Օշական գյուղի բնակիչները: Նրանք աստիճանավորներին զանակոծում ու վռնդում են գյուղից: Երևանի նահանգապետը կառավարչապետին գրում էր, որ իշխանության ներկայացուցիչներին շնայած դիմադրություն է ցույց տվել գյուղացիական ամբոխը, սակայն այդ գործով, ցավոք, մեղադրվում են և արժանի պատիժ կստանան միայն երկու հոգի: Ուստի նա նպատակահարմար է գտնում դրամական տուգանքի ենթարկել բոլոր օշականցիներին՝ յուրաքանչյուր ծխից զանձելով երկուական ռուբլի (գյուղն ուներ 270 ծուխ) ու այդ գումարը տրամադրել բարեգործակալ նպատակների համար... «Հոգալ աղքատ շինուլնիկների թաղման ծախսերը»²⁶:

1893 թ. մարտի 12-ին Նոր Բայազետի գավառի Բասարգեշար գյուղի բնակիչները զինված դիմադրություն են ցույց տալիս իշխանության ներկայացուցիչներին՝ ակցիզային վարչության աստիճանավորներին, նրանց օգնության եկած պրիստավին, հեծյալներին: Չկարողանալով կոտրել գյուղացիների համառությունը նրանք հեռանում են գյուղից: Հաշվի առնելով, որ բասարգեշարցիները մի անգամ չէ, որ դիմագրավում են իշխանության ներկայացուցիչներին, Նոր Բայազետի գավառապետը Երևանի նահանգապետին խնդրում է 50 կազակներից բազկացած էկզեկուցիա նշանակել Բասարգեշարում: Կառավարչապետին ուղղած գրության մեջ Երևանի նահանգապետը գյուղացիական այս ելույթը որակում է որպես «նշանավոր իրագործություն» և ավելացնում, որ եթե դրա գլխավոր հանցավորները չբռնվեն, ապա գյուղը կենթարկվի էկզեկուցիայի: Սակայն գործը չի հասնում դրան՝ շատ շանցած բանտ են նետվում 11 գյուղացիներ²⁷:

Ակցիզային աստիճանավորների հետ գյուղացիական լուրջ ընդհարումներ են տեղի ունենում նաև էջմիածնի գավառի

Իլանչալան (1889 թ.), Նախիջևանի գավառի Պարագոզ (1896 թ.), Երևանի գավառի Վարձազիար (1896 թ.) գյուղերում²⁸: 1898 թ. մարտին նման դեպք է տեղի ունենում նաև Երևանի գավառի Բաշ-Գառնի գյուղում: Հարկահավաքները դիմում են զենքի, գյուղացիներից երկուսը սպանվում են, իսկ երկուսն էլ ծանր վիրավորվում²⁹:

Երևանի նահանգապետը կառավարչապետին տեղեկացնում է, որ 1898 թ. փետրվարի 8-ին էջմիածնի գավառի Ղզըլ-Թամուր գյուղի բնակիչները զինված դիմադրություն են ցույց տվել ակցիզային վարչության աստիճանավորներին: Գյուղացիները քարկոծել են նրանց, ապա դիմել զենքի: Աստիճանավորները հասցրել են թաքնվել և մուխն ընկնելուն պես հեռացել գյուղից³⁰: Այս կապակցությամբ երկրամասի ակցիզային հարկերի վարչության պետը կառավարչապետին գրում է, որ մոտ 200 գյուղացիներ կրակելով ու քարկոծելով ավելի քան երկու ժամ շրջապատել էին այն մարազը, որտեղ պատասպարվել էին աստիճանավորները: Վերջիններս խնդրել են բաց թողնել իրենց՝ խոստանալով չկազմել որևէ արձանագրություն սույն դեպքի մասին: Վարչության պետը նշում է, որ աստիճանավորները ծանր հարվածներ են ստացել և ժամանակավորապես գրկվել աշխատունակությունից: Նահանգապետի ուշադրությունը նա հրավիրում է այն բանի վրա, որ Երևանի նահանգում ակցիզային աստիճանավորների կյանքը հաճախ է ենթարկվում նման և ավելի մեծ վտանգի: Նա միաժամանակ ավելացնում է, որ աստիճանավորներին գյուղացիները միշտ դիմադրում են բազմություններ: Հաշվի առնելով վերոհիշյալը և այն, որ անպատիժ թողնելը խախտում է օրինական իշխանությունից հեղինակությունը, վարչության պետը կառավարչապետին խնդրում է Ղզըլ-Թամուր գյուղի բոլոր բնակիչների նկատմամբ անհապաղ կիրառել ամենախիստ վարչական միջոցառումներ³¹:

Գյուղացիական մասսաները պայքարում էին նաև հարկահավաքների շարաշահումների դեմ: Հարկահավաքման ընթացքում թույլ տված անօրինակությունների ու կեղծիքի կապակցությամբ Երևանի նահանգապետին բողոք են ներկայաց-

նում Երևանի գավառի ներքին Ղուլասար (1892 թ.), Նոր Բայազետի գավառի Դոմաշեն (1896 թ.), Շարուր-Դարալագյազի գավառի Քեշիշքենդ (1897 թ.)³² և այլ գյուղերի բնակիչներ: Իսկ Ալեքսանդրապոլի գավառի Ղլըշ-Յաշար գյուղի բնակիչները 1897 թ. դիմում են ներքին գործերի մինիստրին: Պատասխան շտանալով, նրանք հեռագրում են նույն հասցեով³³: Նման անօրինականությունների դեմ 1900 թ. բողոքի ձայն են բարձրացնում նաև Նոր Բայազետի գավառի Վերին Ախտա գյուղի 100 բնակիչներ: «Մ'բռեղ է ճշմարտությունը»,— հարցնում էին նրանք Երևանի նահանգապետին հասցեագրած խընդրագրում³⁴:

Բազմապիսի ծանր հարկերից բացի, գյուղացու ուսերին ընկած էր նաև զանազան պարհակների կատարման հոգսը, ինչպես, օրինակ, ճանապարհների վերանորոգման աշխատանքները: Անդրկովկասի հարկային համակարգն ուսումնասիրող ցարական հետազոտողներից մեկը նշում էր, որ «Չկա մի անկյուն, չկա մի գավառ ուր ճանապարհային պարհակը զժգոհություն և տազնապ շահարուցի գյուղական բնակչության մեջ»³⁵: 1895 թ. նոյեմբերին Սուրմալուի գավառի Ալիդամարլու գյուղի բնակիչները հրաժարվեցին իրենց հատկացված ճանապարհի վերանորոգման աշխատանքների կատարումից: Նրանք զինված դիմադրություն ցույց տվեցին ոստիկանական աստիճանավորներին³⁶: Գավառամասի ոստիկանության պետը գյուղական համայնքի ավագին հրամայում է իր մոտ բերել ըմբոստացման գլխավոր մասնակիցներին: Գյուղացիները շեն ենթարկվում այդ հրամանին, ծեծում են ավագին, խլում նրա մոտ եղած զենքը: Անմիջապես գյուղ է շտապում գավառամասի ոստիկանության պետը, որն արժանանում է նույն բախտին և ստանում մարմնական ծանր վնասվածք: Երևանի նահանգապետը Կովկասի կառավարչապետին գրում է. «Նման դեպքերի կռկնման հնարավորությունից խուսափելու նպատակով, ես կարգադրեցի Ալիդամարլու գյուղում անմիջապես բացել 15 կազակներից բաղկացած պահստորդական կետ՝ կարգ ու կանոնի և հանգստություն պահպանման համար»³⁷:

Նման դեպք տեղի ունեցավ նաև Զանգեզուրի գավառում:

ներքին գործերի մինիստրին հղած Ելիզավետպոլի նահանգապետի գրույթունից տեղեկանում ենք, որ 1899 թ. դեկտեմբերին Զանգեզուրի գավառի Գորիս գյուղի քնակիչները հրաժարվել են իրենց պարտականությունների կատարումից՝ ճանապարհների վերանորոգման աշխատանքներից: Ի դեպ, մոտ 70 գյուղացիներ լուրջ դիմադրություն են ցույց տվել Զանգեզուրի գավառապետին³⁸:

Կալվածատիրական հարկերի ու պարհակների կատարման դեմ ուղղված պայքարը Արևելյան Հայաստանի կալվածատիրական գյուղացիության պայքարի ամենաբնորոշ գիծն էր: Գյուղացիները մասնակիորեն կամ ամբողջովին հրաժարվում էին հողատիրոջ հանդեպ ունեցած որոշակի պարտականություններից, որը կատարվում էր ինչպես գյուղացիների խմբի, այնպես էլ ամբողջ գյուղի կողմից: Տարածված էր մուլքադարների հասույթը զանազան ճանապարհներով պակասեցնելու պրակտիկան: Գյուղացիները բերքի որոշ մասը թաքցնում էին հարկահավաքներից, հրաժարվում այն նախապես կենտրոնացնել կալատեղերում: Նրանք հրաժարվում էին նաև մուլք վճարել կալվածատիրոջը, որը օգնության համար շտապում էր դիմել իշխանությունների աջակցությանը: Ի դեպ, այն երբեք չէր ուշանում: Գյուղացիներն ըմբոստանում էին, դիմում պայքարի թե՛ պասսիվ և թե՛ ակտիվ ձևերի: Այդ պայքարը հաճախ երկարատև ու համառ բնույթ էր կրում:

Ուշագրավ է էջմիածնի գավառի Զանֆիդա գյուղի բնակիչների պայքարը: Այն շարունակվեց ավելի քան 12 տարի: 1872 թ. գյուղացիներն ըմբոստացան կանոնագիր կազմելու նպատակով գյուղում հաշտարար միջնորդի հայտնվելու կապակցությամբ: Զանֆիդացիներն իրենց համարում էին պետական գյուղացիներ և չէին ցանկանում կանոնագիր կազմել իրենց գյուղի համար: Սակայն հաշտարար միջնորդը կարողանում է իրեն վստահված գործը գլուխ բերել: Դա չի վշտացնում գյուղացիներին: Նրանք հրաժարվում են հողատիրոջը մուլք վճարել: Մահակներով և փայտերով զինված մոտ 200 ջանֆիդացիներ գյուղից դուրս են վռնդում նահանգապետի հրամանով այստեղ հայտնված կազակներին և հեծյալներին³⁹:

Տարիների ընթացքում ավելի են սրվում հողատիրոջ և գյուղացիների միջև առկա հակամարտությունները: 1884 թ. նահանգային շինական գործերի առաջին նրանք գրում են. «Ողջ դեկավարությամբ հայտնի է, որ բոլոր մուլքադարները, այդ թվում նաև Աղաբեկ Մահմեդբեկովը, մշտապես նեղել և այժմ էլ նեղում են մեզ»⁴⁰: Գյուղացիները խնդրում են կայուն կարգ սահմանել մուլքի տեղափոխման կապակցությամբ, որը կազատեր նրանց հետագա ընդհարումներից ու բողոքներից:

Մուլքի գանձման և տեղափոխման կապակցությամբ 70-ական թվականներից սկսած վեճեր են ծագում նաև Երևանի գավառի Յուվա գյուղում: 1881 թ. հաշտարար միջնորդին ուղղած գրույթան մեջ Յուվա գյուղի մուլքադար Մելիք-Աղամալովը փորձում էր «զրկվածի» դերն իրեն վերապահել: Նա պահանջում էր պատժել անհնազանդ գյուղացիներին, որոնք «ցանկանում էին վերջնականապես քայքայել իրեն»⁴¹: Պարզվում է, որ գյուղացիները գիշերվա ընթացքում ցորենը կայատեղերից տեղափոխել էին իրենց տները և հրաժարվում նրան մուլք առանձնացնել:

Էջմիածնի գավառի հաշտարար միջնորդներից մեկը գյուղացիական շարժումներից մտահոգված 1879 թ. գավառի մի շարք մուլքադարական գյուղերի տանտերերին հրահանգավորում է. «Նկատի ունենալով իմ խնամքին հանձնված հաշտարար բաժնի կալվածատիրական գյուղերում հողի բերքերի հնձելու և կալսելու ժամկետի վրա հասնելը և ուշադրության առնելով այն հանգամանքը, որ շինական Կանոնադրության 88-րդ հոդվածի հիման վրա հողատիրոջը հասնող պարհակները գանձվում են նույնպիսի խստությամբ, ինչպես որ պետական հարկերը, կարգադրում եմ ձեզ շթուլացող հսկողություն ունենալ, որպեսզի հողատիրոջ օգտին գեղջուկներից հասանելիք մալահաթը կամ բահրան նրանց կողմից մուծվեն հողատերերին կամ նրանց հավատարմատարներին դրա համար սահմանված ժամկետներում, հարկավոր ձևով ու ամբողջությամբ»⁴²: Վ. Ռշտունին իրավացիորեն նշում է, որ ցարական այս աստիճանավորի մտահոգությունը վկայում է ետեմֆորմյան կալվածատիրական գյուղի անհանգստության և 1870 թ. մայիսի

14-ի Կանոնադրության դեմ գյուղացիութեան շարունակ ըմբոստանալու իրողութեան մասին⁴³:

Գյուղացիական պայքարին զուգընթաց նման հրահանգների թիվն ավելանում էր: 1889 թ. էջմիածնի գավառի 17 գյուղական հասարակութունների տանուտերեր հաշտարար բաժնի կողմից կարգադրութուն են ստանում խստորեն հսկել շինականներին, որպեսզի բերքահավաքի ընթացքում նրանք ճշտորեն կատարեն հողատերերի հանդեպ ունեցած պարտականութունները⁴⁴:

էջմիածնի գավառի Կարխուն գյուղի բնակիչների պայքարը, որը սկսվել էր 70-ական թվականներին շարունակվում է նաև 80-ական թվականներին: Հիմնականում վեճը գնում էր մուլքի գանձման եղանակների շուրջը: Գյուղացիների երկարամյա դիմադրութունը ստիպում է Երևանի նահանգապետին 1886 թ. շեղյալ հայտարարել հաշտարար միջնորդի վճիռը (ըստ որի, հացահատիկային բույսերից մուլքի առանձնացումը թույլատրվում էր միայն մանգաղով քաղած և խորձեր կապած վիճակում) և թույլատրել գյուղացիներին մուլք վճարել գերանդիով հնձած, կալում խոտի և առվույտի նման հավաքած խորձերից: 1888 թ. գյուղացիները նահանգապետին գրում են, որ հաշտարար միջնորդն իրենցից հինգ հարյուր ոտբլի է վերցրել և փոխարենը խոստացել նրանց ազատել խոտի և առվույտի մուլքի վճարումից, բայց խոստումը չի կատարել⁴⁵:

Կարխունցիների և հողատերերի միջև վեճ է ծագում նաև այգիներից և բոստաններից մուլք վճարելու հարցի շուրջը: Վալվաձատերերը բազմիցս դիմում են հաշտարար միջնորդին, որպեսզի գյուղացիներից գանձվի սոխի մուլքը՝ բերքի 7/30 չափով: Այդ առթիվ 1889 և 1891 թթ. գյուղացիները բողոք են ուղարկում Սենատ, բայց երկու անգամն էլ մերժվում են⁴⁶: Մուլքի գանձման կապակցությամբ գյուղացիները նույն հասցեով դիմում են նաև 1895 թվականին⁴⁷:

Ուշագրավ են 1880 թ. Նախիջևանի գավառի մուլքագրական նորս, Գժաձոր, Գոմեր, Գեչրլու, Մահմուդաբազ և Մեծոփ գյուղերի բնակիչների (մոտ 300 ծուխ) Կովկասի փոխարքային և Երևանի նահանգապետին հասցեագրած միացյալ

խնդրագրերը, որոնք հետամուտ էին հողատերերի կողմից գանձվող բահրայի չափը պակասեցնելու⁴⁸: Գյուղացիները նկարագրում են իրենց անտանելի դրութունը, նշում, որ զրկված են հանապազօրյա հացից, ու խնդրում իրենց անհապաղ օգնել: Նրանք համատեղ հարց են տալիս. մուլքագրաները, որոնք ապրում են լոկ գյուղացիների աշխատանքով, պարտավոր չե՞ն արդյոք նման պարագաներում օգնել իրենց հացով կամ դրամով և կամ թե չիջնեն ընթացիկ տարվա բահրան: Նրանք խնդրում են փոխարքային ազդել մուլքագրաների վրա: Սակայն գյուղացիները ստանում են միայն հետևյալ պարզունակ պատասխանը. «Մուլքագրաների օգնութունը անմիջականորեն կախված է նրանց բարի կամքից և անձնական հայեցողութունից»⁴⁹: Իհարկե, գյուղացիներին այդ քաջ հայտնի էր, այդ պատճառով էլ նրանք դիմել էին ոչ թե հողատերերին, այլ երկրամասի ամենահեղինակավոր աստիճանավորին: Սակայն կովկասյան իշխանութունները փաստորեն շղակացան դառնվել գյուղացիների դրության բարեխաղամբ, որպիսի «հոգսը» թողնվեց հողատերերի «բարի կամքից» կախված:

1880 թ. Կովկասի փոխարքային են դիմում նաև Նախիջևանի գավառի Աղնաբլուրտ գյուղի բնակիչները: Նրանք խնդրում են ուշադրութուն դարձնել իրենց թշվառ վիճակի վրա և մուլքագրաների օգտին գանձել միայն բահրայի կեսը, քանի որ, ինչպես միամտորեն գրում էին նրանք, «մուլքագրան առանց այդ էլ հարուստ մարդ է»⁵⁰: 1881 թ. նույնպիսի խնդրանքով և հասցեով դիմում են նաև նույն գավառի Ղրնա գյուղի բնակիչները: Նրանք նշում են, որ հողատերերի օգտին կատարվող պարհակները հյուծել են իրենց և այդպես շարունակել նրանք այլևս չեն կարող: Գյուղացիները խնդրում են բերքի 7/30 մասի փոխարեն իրենցից գանձել 3/30 մասը⁵¹:

1875 թ. սկսած Երևանի գավառի Նովրուզու գյուղի բնակիչները սիստեմատիկաբար հրաժարվել են մուլք վճարել իրենց հողատերերին: Նրանք չեն հնազանդվել մուլքագրաներին օգնության եկած հաշտարար միջնորդի կարգադրութուններին: Ավելին, 1877 թ. գյուղացիները Նովրուզուից վճռում են հողատերերի սարքյարին (հարկահավաքին): 1880 և 1882 թթ.

մուլքի բռնագանձման խնդրանքով մուլքադարները կրկին դիմում են հաշտարար միջնորդին: Թույլ հսկողութայն համար և, միաժամանակ, գյուղացիների վրա ազդելու նպատակով Երեվանի նահանգային վարչութունը վեցօրյա բանտարկութայն է ենթարկում գյուղական տանուտերին: Իսկ մի քանի որ անց հաշտարար միջնորդը վերջինիս նախազգուշացնում է, որ 10 օրվա ընթացքում մուլքը ամբողջովին չգանձելու դեպքում նա կղրկվի իր զբաղեցրած պաշտոնից: 1883 թ. հաշտարար միջնորդին ուղարկած գրութայն մեջ իրենց հերթին գյուղացիները բողոքում են մուլքադարների և նրանց սարքայարների կողմից մշտապես թույլ տրվող շարաշահումների դեմ⁵²: Իշխանութայն ներկայացուցիչներն անգամ ստիպված էին արձանագրել ոչ քիչ թվով նման փաստեր: 1884 թ. Երևանի նահանգապետը Կովկասի կառավարչապետին գրում էր, որ հողատերերն ու նրանց սարքայարները շահագործում են գյուղացիներին՝ նրանցից երբեմն ավելին պահանջում⁵³: 1883 թ. նման հարց են բարձրացնում Նախիջևանի գավառի Կյուկի գյուղի բնակիչները (1885 թ. այդ հարցով նրանք դիմում են Սենատ), 1886 թ.՝ Երևանի գավառի Նեջրու, 1890 թ.՝ Սուրմալուի գավառի Սուլթանաբադ⁵⁴ և այլ գյուղերի բնակիչներ:

Հետագա տարիների ընթացքում ևս նովրուզլուի գյուղացիների և մուլքադարների միջև շարունակվում է մուլքի շուրջը ծագած վեճը: Օրինակ, Երևանի նահանգապետի գրությունից տեղեկանում ենք, որ նովրուզլուի հողատերերից մեկը դիմել էր նրան, գյուղացիներից 1886—1890 թթ. մուլքը գանձելու խնդրանքով: Համանման խնդրանքով մուլքադարները իշխանութայն աշակցութայնն են ապավինում նաև 1891 թվականին⁵⁵: Գյուղացիները 1897 թ. տեղեկացնում են նահանգային շինական գործերի ատյանին, որ մուլքի գանձման ժամանակ շարունակվում են զանազան անօրինականութայնները, այն գանձվում է կրկնակի շափով: Մեկ տարի անց նույնպիսի բովանդակությամբ խնդրագիր գյուղացիները ուղարկում են Սենատ⁵⁶:

Ուշագրավ է նաև մուլքադարների և տեղական իշխանութայն դեմ Երևանի գավառի Գյոզաբլու և Դալուլար գյուղերի

պայքարը: Գյոզաբլու գյուղի բնակիչները, որոնք հաճախ էին հրաժարվում կալվածատիրոջ հանդեպ ունեցած պարտականութայնների կատարումից, 1883 թ. մուլքի գանձման ժամանակ լուրջ դիմադրութայն են ցույց տալիս պաշտոնատար անձանց⁵⁷: Հաշտարար միջնորդի հորդորներին Գյոզաբլու և Դալուլար գյուղերի բնակիչները պատասխանում են, որ իրենց գյուղերը պետական են և որ ոչ մի հողատեր իրենք չեն ճանաչում, ավելի շուտ նրանք պատրաստ են բանտ ընկնել և Սիրիբ աքսորվել, քան հողատերերին որևէ բան վճարել⁵⁸: Մուլքի գանձման համար իր տրամադրութայն տակ շունենալով անհրաժեշտ միջոցներ, հաշտարար միջնորդը Երևանի գավառապետին և նահանգապետին տեղեկացնում է, որ ամենից կրտսե գյուղացիների «բունտը», քանզի անպատիժ մնացած նման աբարքը կարող է վարակիչ լինել հարևան գյուղերի համար: «Գյուղացիների այս ելույթը տարածվել ու տարածվում է մյուս գյուղերում՝ Նեջրու, Ղամարլու, Զոհրաբլու, Գվին և այլն... Այս անկարգութայնները տարափոխիկ հիվանդութայն նման տարածվում են մյուս գյուղերում և կարող են բռնել ամբողջ շրջանը»⁵⁹:

Հաշտարար միջնորդի մտավախութայնն անտեղի չէր: 1886 թ. Գյոզաբլու և Դալուլար գյուղերի օրինակին են հետևում նաև հարևան Նովրուզլու, Զիլախանլու և Օղուբեբլու գյուղերը: Այս գյուղերի մուլքադարները 1886 թ. հաշտարար միջնորդին խնդրում են գյուղացիներից գանձել բամբակի բերքի իրենց հասանելի բաժինը: Վերջինս գյուղական այս հասարակութայնների տանուտերերին «խստագույնս» կարգադրում է անմիջապես և լիովին բավարարել հողատերերին: Միաժամանակ նա զգուշացնում է շինականներին, որ իր «օրինական հրամանը» չկատարողները կենթարկվեն քրեական պատասխանատվութայն⁶⁰:

Երևանի գավառի Բաշնալու գյուղի բնակիչները 1883 թ. հաշտարար միջնորդին գրում են, որ իրենց վրա ծանրացած են թե պետական գյուղացիներից գանձվող հարկերը և թե մուլք վճարելու հոգսը: Նրանք խնդրում են ազատել իրենց մեկից

կամ թե մյուսից⁶¹։ Այդ խնդրանքը, ինչ խոսք, չի հարգվում։ Ուստի գյուղացիները հրաժարվում են մուլքատիրոջ հանդեպ ունեցած պարտականություններից։ 1885 թ. հաշտարար միջնորդը գյուղական հասարակության տանուտերին կարգադրում է անմիջապես կազմակերպել մուլքի վճարումը։ Վերջինս ժամանում է Բաշնալու և այդ գյուղի իր օգնականի հետ ձեռնամուխ է լինում գործի։ Սակայն գյուղացիներն անպատվում ու ծեծում են նրանց և հայտարարում, որ ոչինչ չեն տա⁶²։ Մեկ ամիս անց՝ 1885 թ. օգոստոսի 5-ին վերոհիշյալ տանուտերը նույնպիսի իրավիճակի մեջ է ընկնում նաև Ղարաղամզալու գյուղում։ Նա պահանջում է վճարել հողատերերի հասանելիքը, բայց գյուղացիները չեն հնազանդվում այդ պահանջին և լուրջ դիմադրություն են ցույց տալիս նրան։ Փայտերով զինված նրանք հարձակվում են տանուտերի վրա, զցում են դետին, պոկում տանուտերական նշանները և պատռում հաշտարար միջնորդի հրամանը։ Տանուտերի հետ եկած մարդիկ մի կերպ փրկում են նրան մահից։ Վերջինս դիմում է հաշտարար միջնորդի օգնությանը. «Այդպես շարունակվելու դեպքում էլ չեմ կարող պաշտոնս կատարել, եթե ամեն տեղ նման բուռնտ լինի»⁶³։

1877 թ. Երևանի գավառի էյլար գյուղի բնակիչները շահագործելով մուլքադար Մելիք-Աղամալուլի կամայականությունները, բողոք են ներկայացնում Կովկասի փոխարքային։ Մուլքադարը հնարավորություն չէր տալիս գյուղացիներին կալսած հացահատիկը տեղափոխել տները։ Եւրջ 25 օր այն գտնվում էր կալատեղում, բաց երկնքի տակ։ Աղամալուլը գյուղացիներից պահանջում էր բերքի 7/30 մասը։ Վերջիններս համառում էին դրա դեմ. «Մեր ձեռքում է կանոնագրի պատճենը, — գրում են գյուղացիները, — որից պարզ երևում է, որ շինական հասարակության համար պարտադիր է հողատիրոջ օգտին մուծել հացահատիկի բերքից ոչ թե 7, այլ միայն 4/30 մասը»⁶⁴։ 1880 թ. էյլարցիները այդ հարցը նորից են բարձրացնում փոխարքայի առաջ։ Պարզվում է, որ գյուղացիները Աղամալուլին պարտավոր էին վճարել ինչպես բերքի 4/30 մասը՝ որպես թիուլ, այնպես էլ 3/30 մասը՝ որպես մուլք⁶⁵։ Դա շատ ծանր

կացության մեջ էր դնում գյուղացիներին։ Եվ պատահական չէ, որ մուլքադար-թիուլդարը գյուղացիներից իր բաժինը ստանալու համար շարունակ դիմում էր հաշտարար միջնորդի օգնությանը։ Հողատիրոջը միաժամանակ մուլք և թիուլ վճարելու դժվարությունների կապակցությամբ էյլարցիները 1900 թ. խնդրամատույց են լինում Երևանի նահանգապետին, սակայն վերջինս այն թողնում է անհետևանք, քանզի գյուղացիները «պարտավոր են ժամանակին և լիովին կատարել հողատիրոջը հասանելիք բնամթերային և դրամական վճարումները»⁶⁶։

Գյուղացիներից մուլքի գանձումը ապահովելու նպատակով 1879—1883 թթ. քանիցս հաշտարար միջնորդի օգնությանն է դիմել Երևանի գավառի Թայթան գյուղի հողատեր Սուլեյմանբեկովը⁶⁷։ 1880 թ. այդ հարցն են բարձրացնում նաև էջմիածնի գավառի Հաջի-Բայրամ, Թակիա, Երևանի գավառի Շխլար, Բեկջղազլու, 1881—1884 թվականներին՝ նույն գավառի Թոխանշալու, Շիղու, Զառ, Քամալ, Մասուվու, Օղորբեբլու, Մեհրաբլու, Թորփախղալա, Ղամարլու և բազմաթիվ այլ գյուղերի հողատերեր⁶⁸։

Կալվածատիրական շահագործման դեմ արևելահայ գյուղացիության պայքարը գնալով նոր թափ էր ստանում։ Դա լուրջ մտահոգություն էր պատճառում մուլքադարներին և թիուլգարներին։ Ներկան, առավել ևս ապագան, ոչ մի լավ բան չէր խոստանում նրանց։ Պատահական չէ, որ հողատերերը ավելի ու ավելի հաճախ էին դիմում իշխանությունների օգնության։ Ուշագրավ է 1884 թ. Կովկասի կառավարչապետի զրասենյակում հայտնված բազմաթիվ բողոքագրերից հատկապես մեկը, որի հեղինակներն են Երևանի նահանգի ամենաազդեցիկ հողատերերը՝ թվով մոտ 50 հոգի։ Նրանք կառավարչապետին գրում են, որ քիչ չեն դեպքերը, երբ տարիներ անընդմեջ հողատերերի օգտին կատարվող պարհակներից հրաժարվում են ոչ միայն գյուղական առանձին ծխեր, այլև ամբողջ հասարակություններ և որ շինականների մոտ թուլացել է հարգանքը օրենքների ու իշխանության հանդեպ։ «Նրանք գյուղերից վոնդում են տերերին և նրանց հավատարմատարներին, հրաժարվում են կատարել շինական հաստատությունների

կարգադրութիւնները և նույնիսկ համարձակվում հաշտարար միջնորդին ընդհանրապես չթողնել իրենց գյուղ⁶⁹...»։ Որպես օրինակ բերվում են Երևանի գավառի Նեջրլու, Պտղնի, Ղամարլու, Դոնգուզյան, Շորլու-Դեմուրշի, Շարուր-Ռարալագյազի գավառի Ախբենգ, Նախիջևանի գավառի Բաղամլու, Գժաձոր, Շաքարաբազ, Բաշ-Անգուր և այլ գյուղեր⁷⁰։ Հողատերերը նշում են, որ գյուղացիները միշտ խորամանկում են ու իրենց պահում բերքի զգալի մասը։ Նրանք միաժամանակ իրենց մտավախութիւնն են հայտնում, որպեսզի գյուղացիների նման արարքները նահանգում չվերածվեն «ազրարային հանցագործութիւններին» և համընդհանուր ելույթների, որոնց հետ «56 տարվա ընթացքում» նրանք ծանոթ չեն եղել⁷¹։

Երևանի նահանգի կալվածատերերի նմանօրինակ կոլեկտիվ «ելույթը» խոսում է կալվածատիրական գյուղի անհանգըստութիւն, նահանգում հակակալվածատիրական պայքարի սրութիւնն ու համատարած բնույթի մասին։

Երևանի գավառի Ձոհրարլու գյուղի բնակիչները 1884 թ. դիմում են Երևանի նահանգապետին և խնդրում ազատել իրենց հողատեր Ջալալովի պատճառած տանջանքներից։ Նույն հարցով նրանք դիմում են նաև Սենատ։ Գոհացում չստանալով, գյուղացիները հրաժարվում են կալվածատիրոջ հանդեպ ունեցած պարտականութիւնների կատարումից⁷²։

1895 թ. Երևանի գավառի Ալի-Մահմեդ-Ղշլաղ գյուղի բնակիչները հրաժարվում են մուլք վճարել հողատիրոջը, չեն ցանկանում ճանաչել նրա սեփականատիրական իրավունքները լրացուցիչ հողաբաժինների նկատմամբ, որոնց համար պետք է նոր պարհակների հողսի տակ ընկնէին։ Համոզվելով, որ գյուղացիները երբեք ինքնակամ ոչինչ չեն վճարի, հաշտարար միջնորդը դիմում է տեղամասային ոստիկանութիւնի աջակցութեանը, սակայն չհասնելով ցանկալի արդշունքի, նա դիմում է նաև Երևանի գավառի ոստիկանապետի օգնութեանը⁷³։

1896 թ. Կովկասի կառավարչապետը Ձանգեղուրի գավառի Ալավուրտ գյուղից ստանում է մի խնդրագիր, որում գյուղացիները նկարագրում էին այն անլուր տանջանքները,

որոնց ենթարկվում էին կալվածատեր Մելիք-Կարակոզովի կողմից⁷⁴։ 1896 թ. ֆեոդալական հարստահարման դեմ ըմբոստանում են նաև Երևանի գավառի Վերին Ղուլասար, 1900 թ.՝ նույն գավառի Ոխչաբերդ⁷⁵ և այլ գյուղերի բնակիչներ։

Գյուղացիական պայքարի հետաքրքիր էջեր են գրել Երևանի գավառի Պտղնի գյուղի բնակիչները⁷⁶։ Տարիներ շարունակ նրանք պայքարել են թիուլային կալվածութիւնից ազատվելու համար։ Նրանց համախմբվածութիւնն ու տոկունութիւնը ի վերջո հաղթող են դուրս եկել այդ պայքարում։

Պտղնի գյուղի բնակիչները, իրենց թիուլդար, իշխանուհի Ճավճավաձեի մահից հետո (1880 թ.), որոշում են չճանաչել ոմն Մելիք-Կարակոզովի թիուլային իրավունքները իրենց գյուղի նկատմամբ, համարելով այդ անօրինական այն պատճառով, որ թիուլային իրավունքը չէր կարող փոխանցվել կամ ժառանգաբար անցնել մեկ ուրիշի։ 1881 թ. հուլիսին ներքանք որոշում են գյուղից հեռացնել Մելիք-Կարակոզովին և չկատարել ոչ մի պարհակ։ Տեղի տալով վիրավորանքներին և սպառնալիքներին, վերջինս մեկնում է Երևան և դիմում իշխանութիւն օգնութեանը։ Անմիջապես Պտղնիի ճանապարհն է բռնում Երևանի բաժնի հաշտարար միջնորդը, որին գյուղացիները լուրջ դիմադրութիւն են ցույց տալիս։ Իր զեկուցագրում հաշտարար միջնորդը գյուղացիների ըմբոստացումը որակում է որպես «ընդհանուր բունտ»⁷⁷։ Ձգալով, որ առանց ոստիկանական միջամտութիւն գործը կարող է տխուր վախճան ունենալ, հաշտարար միջնորդը օգնութեան համար դիմում է Երևանի նահանգապետին։ Հուլիսի 26-ին հաշտարար միջնորդը գավառական աստիճանավորների և կազակների ուղեկցութեամբ կրկին հայտնվում է Պտղնիում, սակայն գյուղացիները, այդ թվում կանայք և երեխաները, քարերով ու փայտերով են դիմավորում նրանց։ Հաշտարար միջնորդը դիմում է Երևանի գավառապետին՝ խնդրելով բահրայի գանձումը հանձնարարել գավառական ժանդարմական վարչութեանը⁷⁸։

Գյուղացիները նույնպես շեն լուում: Նրանք դիմում են Երևանի նահանգապետին, Կովկասի կառավարչապետին և այլուր: Սակայն համառորեն պայքարում է նաև կեղծ ճանապարհներով թիուլային իրավունքը իր ձեռքը գցած հողատերը: Իսկ երբ կովկասյան իշխանությունները փորձում են հարցը լուծել գյուղացիների օգտին, նա շտապում է ապավինել Ռուսաստանի ամենախոշոր հողատիրոջ՝ թագավորի աջակցությանն ու ստանում այն: 1885 թ. Մելիք-Կարակոզովը մի բավականին մեծ խնդրագրով դիմում է Ալեքսանդր III-ին: Նա գրում է, որ «գյուղական խաժամուժը» համառորեն ձգտում է շճանաչել Պտղնի գյուղում ունեցած իր իրավունքները, բռնի գործողությունների է դիմել ոչ միայն իր, այլև ոստիկանական և զավառական այլ իշխանությունների նկատմամբ⁷⁹: Կայսեր կարգադրությամբ Սենատը որոշում է բեկանել հողատիրոջ իրավունքներն անտեսող Կովկասի կառավարչապետի խորհրդի կայացրած վճիռը⁸⁰:

1894 թ. Երևանի նահանգապետը ստանում է Մելիք-Կարակոզովի նոր բողոքի կապակցությամբ Սենատի կայացրած որոշումը (քանի որ գյուղացիները շարունակում էին շճանաչել վերջինիս թիուլային իրավունքը), որում նշվում էր, որ շնայած թիուլային իրավունքը ցմահ է, սակայն լինում են դեպքեր, երբ այն անցնում է ժառանգաբար, դառնում քաղաքացիական գործարքների առարկա և հանձնվում մեկ ուրիշի: Սենատը, կարծես թե, հուշում էր ավելացնել նման գործարքների թիվը: Եվ պատահական չէ, որ երկու ամիս անց՝ 1894 թ. դեկտեմբերին վերականգնվում է Մելիք-Կարակոզովի թիուլային իրավունքը Պտղնի գյուղի նկատմամբ⁸¹:

Գյուղացիները շեն լուում: Նրանք որոշում են բողոքարկել Սենատ, սակայն Երևանի նահանգային շինական գործերի ատյանը երկու անգամ ետ է վերադարձնում նրանց բողոքը՝ պատճառաբանությամբ, որ գյուղացիների ստորագրությունները հայերեն լեզվով էին: Իր հերթին, հաշտարար միջնորդը հրաժարվում է թարգմանել ստորագրությունները: Գործն այնքան է ձգձգվում, մինչև որ բողոքարկման սահ-

մանված ժամկետն անցնում է ու այդ պատրվակով էլ 1895 թ. Սենատը մերժում է գյուղացիների դիմումը⁸²: Համոզվելով, որ միայն իրենք կարող են պաշտպանել սեփական շահերը, գյուղացիները հաշվի չնստելով կառավարական վճիռների հետ, որոշում են շճանաչել Մելիք-Կարակոզովի իրավունքները և ստիպում նրան տարիներ շարունակ բախել վերադաս օրգանների դռները: Գյուղացիների համառությունը ի վերջո ստիպում է իշխանություններին 1899 թ. վերացնել նրանց թիուլային պարտականությունները⁸³:

Կարվածատիրական շահագործումից ազատվելու համար պտղնեցիների մղած մոտ քսանամյա համերաշխ պայքարը պսակվում է հաջողությամբ: Այդ պայքարը կազմում է արեվելահայ գյուղացիական շարժումների պատմության ամենաուշագրավ էջերից մեկը:

Հետաքրքիր է նաև Շարուր-Պարալագյազի գավառի Այնաղուր գյուղի բնակիչների տարիներ տևած համառ պայքարը: 1893 թ. նրանք դիմում են Սենատ և խնդրում ճշտել իրենցից գանձվող բահրայի չափը: 1897 և 1898 թթ. գյուղացիները նորից են դիմում ու փորձում ապացուցել, որ այդ գործում թույլ են տրվում մի շարք անօրինականություններ: 1899 թ. նրանք շորորդ անգամ են դիմում Սենատ, որը վերջապես բարեհաճում է ընդունել գյուղացիների իրավացիությունը⁸⁴:

1897 թ. մուլքի գանձման կապակցությամբ Սենատ են դիմում էջմիածնի գավառի Մուլա-Գուրսուն գյուղի բնակիչները: Պարզվում է, որ իրենց նախկին մուլքադարին նրանք այդիներից ու բոստաններից մուլք չեն վճարել, իսկ հողատեր Գեղամովը, որը 1887 թ. գնել էր այդ հողերը, պահանջում է այդ անել: Գյուղացիները նշում են, որ Գեղամովը պարտավոր էր ղեկավարվել նախորդ մուլքադարի օրոք հաստատված կանոններով⁸⁵: Սա ցույց է տալիս, որ իրենց կենսական շահերի պաշտպանության նպատակով գյուղացիները երբեմն ստիպված էին իշխանություններին բացատրել վերջիններիս իսկ հաստատած օրենքների էությունը, պարզաբանել, որ ընդունած որոշումն այսինչ օրենքի, այսինչ հողվածի ոգուն

հակասում է: Իշխանությունն անկախացուցիչները վատատեղ-
յակ շէին այդ օրենքներին, այլ միայն ցանկանում էին հար-
մարեցնել դրանք իրենց շահերին:

Գյուղացիական պայքարի վերաբերյալ մենք հետաքրք-
րիր տեղեկություններ ենք ստանում նաև մեկ այլ կարգի
խնդրագրերից, որոնց հեղինակները հողատերեր էին: Երևանի
գավառի Չիբղամյու գյուղի մուլքագար Գ. Եղիազարյանը
1883—86 թթ. բազմիցս դիմում է հաշտարար միջնորդին՝
խնդրելով գյուղացիներից գանձել բերքի իրեն հասանելի
բաժինը⁸⁶: Նման խնդրագրեր Գ. Եղիազարյանը ստիպված է
լինում գրել նաև 90-ական թվականներին⁸⁷:

Նույն գավառի Նեջրլու գյուղի հողատերերը 1883 թ.
հաշտարար միջնորդին խնդրում են անմիջապես ժամանել
գյուղ և անձամբ ղեկավարել մուլքի առանձնացման և վճար-
ման աշխատանքները⁸⁸: Հաշտարար միջնորդը գյուղական
հասարակության տանուտերերին կարգադրում է հողատերերին
հասանելի բերքամասը գանձել ժամանակին, ամբողջովին և
այնպիսի խստությամբ, ինչպես գանձվում են պետական
հարկերը: Սակայն տանուտերերին գյուղացիները կտրակա-
նապես հայտարարում են, որ հողատերերին ոչինչ չեն վճա-
րի, քանի որ իրենց գյուղը համարում են ոչ թե մասնատի-
րական, այլ պետական: Նրանք հարձակվում են տանուտե-
րի վրա, մի լավ ծեծում ու սպառնում, որ եթե այդ նպատա-
կով կրկին փորձի հայտնվել գյուղում, ապա կսպանեն նրան:
Տանուտերը շտապում է հաշտարար միջնորդին տեղեկացնել,
որ գյուղացիները նախապես համաձայնություն էին եկել և որ
դա, անկասկած, կազմակերպված ելույթ էր⁸⁹:

Գյուղացիության պասսիվ պայքարը ակտիվ բնույթ է
ստանում նաև Երևանի գավառի Դվին գյուղում: 1884 թ.
հողատերերը հաշտարար միջնորդին գրում են, որ տանուտե-
րի գործադրած միջոցառումները ոչ մի արդյունք չեն տվել,
այնինչ գյուղացիները շարունակում են հրաժարվել մուլք
վճարելուց ու անշափ գրգռված են իրենց դեմ: Նրանք ան-
հրաժեշտ են համարում հաշտարար միջնորդի ներկայությունը
մուլքի գանձման ժամանակ: Ի դեպ, դվինցիները 1884 թ.

ամբողջ գյուղով դիմագրավում են այստեղ ուղարկված ոստի-
կանական ուժերին⁹⁰: Դվին գյուղի հայ և աղբրեջանցի գյու-
ղացիները ցույց են տալիս համերաշխ պայքարի օրինակ:

Իրենց պարտականությունների կատարման մեջ թերացող
գյուղացիներին «կարգի հրավիրելու» նպատակով, 1880-ա-
կան թվականներից իշխանությունների օգնությանն են դի-
մում նաև Երևանի գավառի Գյուլքիլիսա և Ելղովան գյուղերի
հողատեր Գեղամյանները: Միաժամանակ իշխանությունների
օգնությանն են դիմում նաև գյուղացիները: Ելղովան գյուղի
բնակիչները 1885 թ. Երևանի նահանգապետին գրում են, որ
իրենք մատնված են ծայր աղքատության և շուտով կզրկվեն
անգամ գոյության միջոցներից, որովհետև գյուղի մուլքա-
դարները շարունակում են իրենցից խլել գյուղի լավագույն
հողակտորները: Իսկ Գյուլքիլիսա գյուղի բնակիչները 1894 թ.
դիմում են հաշտարար միջնորդին և խնդրում ազատել իրենց
մուլքագարների մշտական շարաշահումներից: Նրանք նշում
են, որ տասը տարուց ավել է, ինչ մուլքագարներն իրենցից
մուլք են գանձում անհամեմատ ավել, քան սահմանված է
կանոնագրով: Երբեմն նույն տարվա մուլքը փորձում են
գանձել երեք անգամ, որը նրանց հասցրել է վերջնական քայ-
քայման եզրին: Գյուղացիները գրում են, որ իրենք ստիպված
կլինեն թողնել սեփական բնակարաններն ու հեռանալ գյու-
ղից, եթե վերջ չդրվեն մուլքագարների կամայականությու-
ններին⁹¹:

Տարիներ շարունակ ձգձգվում է այդ վեճը: Գյուղացինե-
րը հաճախ են խուսանալում հողատերերի պահանջները բա-
վարարելուց: Վերջիններս 1900 թ. դիմում են հաշտարար
միջնորդին խնդրելով գանձել հացահատիկի իրենց հասանե-
լիք բաժինը⁹²: Իսկ հողատեր Մ. Գեղամյանը նույն թվին
Կովկասի կառավարչապետին գրում է, որ ինքը չի կարողա-
նում օգտվել Գյուլքիլիսա և Ելղովան գյուղերի՝ օրենքով
իրեն հասնող եկամուտներից: Նա ստիպված է եղել ամեն ան-
գամ դիմել հաշտարար միջնորդին, նահանգապետին, խրնդ-
րել է վերացնել այդ անկարգությունները, գանձել մուլքը,

սակայն շոշափելի որևէ արդյունքի չի հասել: Գեղամյանը նույն բանը խնդրում է նաև կառավարչապետից:

Մուլքի գանձման, վիճելի հողերն իրենց տրամադրության տակ թողնելու, անհնազանդ գյուղացիներին պատժելու և այլ խնդրանքներով, կալվածատերերն ավելի ու ավելի հաճախ էին դիմում իշխանությունների օգնությանը: Միայն 1894—1898 թթ. ընթացքում Սենատը նման խնդրագրեր է ստացել Շարուր-Դարալագյազի գավառի Այնազուր, Համզալի Դիզա, Օրթլու-Թաղաբենդ, Արփա, Սիաղուտ, Չիվա, էջմիածնի գավառի Սամաղար, Թուրքմենլու, Վերին Այլանլու, Սուրմալուի գավառի Ամարաթ, Մալաբլու, Ներքին Չարուխի և այլ գյուղերի հողատերերից: Վերջիններիս կողմից նման օգնություն հայցելը սովյալ վայրերում գյուղացիական պայքարի առկայության վկայումն էր:

Արևելահայ գյուղում մղվող դասակարգային պայքարում հայ գյուղացիության հետ մեկտեղ ակտիվորեն ներգրավվել էր նաև ազդեցական գյուղացիությունը: Ուշագրավ է հատկապես այն գյուղերի բնակիչների պայքարը, որտեղ կողք-կողքի, հաշտ ու խաղաղ ապրում էին հայ և աղբյուրացի շինականները: Իրենց ընդհանուր շահերի պաշտպանության համար նրանք իշխանություններին հաճախ էին կանգնեցնում համատեղ պայքարի փաստի առջև: Նշենք, օրինակ, Երևանի գավառի Դվին գյուղի բնակիչների վերոհիշյալ ելույթը:

Սուրմալուի գավառի Ղզըլ-Չաքիր գյուղի հայ և աղբյուրացիական բնակչությունը 1883 թ. մուլքի գանձման կապակցությամբ դիմում է Սենատ⁹⁴: Գյուղացիները գրում են, որ իրենցից անհիմն կերպով մուլք են պահանջում մարդիկ, որոնք դրա համար օրինական ոչ մի իրավունք չունեն: 1884 թ. նրանք նոր խնդրագիր են ուղարկում Սենատ, որը նույնպես մերժվում է⁹⁵: Իսկ նույն գավառի Իգդիր-Մովա գյուղի հայ և աղբյուրացի գյուղացիները լրացուցիչ հողեր ստանալու ակընկալությամբ 1897 թ. դիմում են Կովկասի կառավարչապետին⁹⁶:

Երևանի գավառի Ահամզալու գյուղի բնակիչները հրա-

ժարվում են հողատիրոջը մուլք վճարել վիճելի հողերի դիմաց: Հայ և աղբյուրացի գյուղացիների համերաշխ գործողությունները ստիպում են վերջինիս օգնություն խնդրել հաշտարար միջնորդից⁹⁷: Կարելի է հիշատակել նման բաղմաթիվ գեպքեր, որոնք տեղի են ունեցել ազգային խառը բնակչություն ունեցող համարյա բոլոր գյուղերում:

Նոր Բայազետի գավառի Մեծ Մազրա, Զոզ, Ղզըլ-Բուլաղ և Սուլթան-Ալի - Ղշլաղ աղալարական գյուղերի բնակիչները դեռևս XIX դարի 40-ական թվականներից համատեղ ու համառ պայքար են մղել աղալարական կալվածությունից ազատագրվելու համար: 1870 թ. ռեֆորմը չէր տարածվել նրանց վրա: Վերոհիշյալ գյուղերի թե՛ բնակիչները և թե՛ աղալարները ապրում էին պետական հողերի վրա: Ի տարբերություն Ելիզավետպոլի նահանգի աղալարների, նոր Բայազետի գավառի աղալարները հողի սեփականատեր չէին և նրանց նման գյուղացիներից չէին ստանում բերքի 1/10-րդ մասը: Սակայն գյուղացիները աղալարների համար կատարում էին մի շարք պարահակներ՝ տալիս էին մշակներ, ծառայողներ, հողագործական գործիքներ, փոխադրական միջոցներ, նրանց համար խոտ, վառելիք բերում և այլն: Չնայած դրան, գյուղացիները միաժամանակ վճարում էին պետական գյուղացիների վրա դրված բոլոր հարկերը⁹⁸:

Գյուղացիները հաճախ են հրաժարվել աղալարների համար որևէ պարհակ կատարելուց, տարիներ շարունակ իրենց գրությունները վրա հրավիրել իշխանությունների ուշադրությունը: Տասնամյակներ տևած գյուղացիական համառ պայքարը անգրկովկասյան աստիճանավորներին ստիպել է մտածել աղալարական շորս գյուղերի բնակիչների «ազատագրման» մասին: Նման հարց կովկասյան իշխանությունները բարձրացրել են դեռևս 1877 թ., սակայն այն վերջնական լուծում է ստացել միայն 1899 թվականին: Շուրջ 22 տարի տևած քաջքուկից հետո գյուղացիները կարողացան թոթափել աղալարական լուծը:

Պետական հողային ունեցվածքների դեպարտամենտին ուղարկած գրության մեջ Երևանի նահանգի պետական ունեց-

վածքների կառավարիչը նշում էր, որ աղալարները ստացան արդարացի վարձատրություն և լիովին ապահովվեցին հողով: Աղալարական յուրաքանչյուր ծուխ ստացավ ավելի քան 150 դեսյատին հող: Իսկ ինչ վերաբերում է գյուղացիներին, ապա կառավարիչը ստիպված էր ընդունել, որ աղալարներին իրրև սեփականություն հող հատկացնելը անշափ նեղեց բնակչությանը, որը զրկվեց լավագույն հողերից և շափազանց տուժեց հաստատված շերտընդմիջությունից, քանի որ աղալարներին հատկացված հողամասերը գտնվում էին ավելի քան քառասուն տարբեր վայրերում⁹⁹: Ուստի պատահական չէ, որ շատ շանցած գյուղացիները բողոքեցին նման շերտընդմիջությունից, որը նպաստավոր պայմաններ էր ստեղծում հողային վեճերի առաջացման համար: Ղզըլ-Բուլաղ գյուղի բնակիչները 1900 թ. Երևանի նահանգապետին խնդրում են կարգի հրավիրել իրենց նախկին աղալարին, որը շարունակում էր գավթել գյուղացիների հողաբաժինները¹⁰⁰:

Այդպիսին էին նոր Բայազետի գավառի աղալարական շորս գյուղերի բնակիչներին աղալարական կախումից ազատելու հետևանքները: Ամեն ինչ արվեց աղալարների համար լավագույն պայմաններ ստեղծելու համար, սակայն դա կատարվեց ի հաշիվ գյուղացիների: Այնուհանդերձ, վատ թե լավ, գյուղացիներն ազատվեցին աղալարական շահագործումից, նրանց երկարատև պայքարն իզուր չանցավ:

Վանքապատկան գյուղերի բնակիչները նույնպես հրաժարվում էին իրենց պարտականությունների կատարումից: Հոգևորականներին մուլք շտալու հետաքրքիր միջոցի են դիմում Գեղարդի վանքին պատկանող Մեհրաբ-Քուրդքենդ, Մեհրաբ-Թափաբաշ և Մեհրաբուր գյուղերի բնակիչները: 1898 թ. նրանք իրենց վարելահողերը վեր են ածում այգիներին: Գյուղացիները հույս ունեին մինչև այգիները շափելը և դրա հիման վրա վանքի եկամուտները որոշելը, ազատ մնալ տուրքերից¹⁰¹:

Նոր Բայազետի գավառի Յամաքաբերդ և Գոմաձոր գյուղերը, որոնք Սևանի վանքի սեփականությունն էին, 1899 թ. հրաժարվում են վանքին հասանելիք մուլքը վճարելուց: Պարզվում է, որ գործին ոստիկանության տեղամասի պետի միջա-

մտելուց հետո անգամ, գյուղացիները չեն ցանկանում այն վճարել: Նրանք նույնիսկ ծեծում են վանահոր օգնականին և վանքի սպասավորներին: Սևանի վանահայրը դիմում է Երևանի նահանգապետի օգնությանը, բռնազանձելու մուլքը և պատժելու անհնազանդ գյուղացիներին¹⁰²:

Էջմիածնի վանքապատկան Մաստարա գյուղի բնակիչները միաձայն որոշում են ընդունում շտալ նախորդ տարվա պարտքերը, իսկ ընթացիկ՝ 1900 թ. համար Սինոդին որպես բահրա հատկացնել փչացած ցորեն: Վանքի հարկահավաք-հոգևորականները զգալով իրենց անզորությունը, խնդրում են սինոդին անհապաղ օգնություն ցույց տալ, գյուղ ուղարկել թեկուզ և մեկ ոստիկան, իսկ եթե գերագույն հոգևոր խորհուրդը ցույց չտա անհրաժեշտ օգնություն, գրում էին նրանք, ապա գյուղացիներից վանքին հասանելիք բահրայի գանձման ամեն մի հույս կորած կլինի¹⁰³:

Գյուղացիական խնդրագրերը իրենց ճնշող մեծամասնությամբ մնում էին անհետևանք: Միայն այն դեպքում էին դրանք բավարարվում, երբ գանձարանի շահերին մազաշափ անգամ վնաս էր սպասվում և երբ հնարավոր չէր լինում կոտորել գյուղացիների համառությունն ու ցարական աստիճանավորներն էլ ստիպված էին լինում սովորության հակառակ հաշվի նստել ռեալ իրականության հետ: Նման «բախտի» արժանացածներից էր նաև Նախիջևանի գավառի Բայ-Ահմեդ գյուղի բնակիչների խնդրագիրը: Վերջիններս 1891 թ. Սենատին հասցեագրած խնդրագրում նշում են, որ իրենց հողերը պետական են և մասնավոր անձինք դրանցից բահրա պահանջելու ոչ մի իրավունք չունեն: Պետական ունեցվածքների մինիստրության եզրակացության մեջ ընդգծվում էր, որ գյուղացիական գործերով զբաղվող կովկասյան հիմնարկները պետական գյուղացիներից բահրա ստանալու իրավունքը հաճախ անհիմն կերպով վերապահում են առանձին հողատերերի, ինչպես Բայ-Ահմեդ գյուղում: «Լավ կլիներ այս մասին տեղյակ պահել պարոն ներքին գործերի մինիստրին, խնդրելով նրան դիմել միջոցների՝ այդ հիմնարկների ավելի ճիշտ վերաբերվելուն գանձարանի շահերին»¹⁰⁴: Այո, հետաքրքրության կենտրոնը

գանձարանի, այլ ոչ թե գյուղացիների շահերն էին:

Մասնատիրական գյուղացիության ուսերին ծանրացել էին ինչպես կալվածատիրական պարճակները, այնպես էլ պետական հարկերը: Ուստի կալվածատիրական գյուղացիության պայքարի սլաքներից մեկն էլ ուղված էր պետական հարկերի գանձման դեմ:

Սուրմալուի գավառի Սուլթանաբադ գյուղի բնակիչները 1882 թ. Երևանի նահանգապետին գրում են, որ իրենց գյուղը մուլքադարական է, սակայն իրենցից գանձում են նույնչափ պետական հարկ, ինչ պետական գյուղացիներից: 1883 թ. գյուղացիները վերստին բարձրացնում են այդ հարցը¹⁰⁵:

Միայն 1885 թ. Երևանի նահանգի մուլքադարական 40 գյուղերի բնակիչներ դիմել են նահանգապետին և խնդրել պակասեցնել իրենցից գանձվող պետական հարկերը: Սակայն բոլորն էլ մերժվել են: 1894—1895 թթ. մերժում են ստացել նաև Սուրմալուի գավառի ներքին Չարուխչի, Արաթան, էմինջա, Ղարաբաղու, Արալըխ-Բաշքենդ, էջմիածնի գավառի Շահավուրտ և այլ գյուղերի բնակիչների համանման խնդրագրերը¹⁰⁷:

Գյուղացիական շարժումներից լրջորեն մտահոգված ներքին գործերի մինիստր Գորեմիկինը 1898 թ. նահանգապետերին ուղղած շրջաբերականում նշում էր, որ գյուղացիական «անկարգությունները» հողատերերի մոտ վերացնում են անձի և գույքի անվտանգության վերաբերյալ եղած վստահությունը: Նա տեղական իշխանությունների հրատապ խնդիրն է համարում ամենից կտրուկ միջոցներով «վերջ դնել հողատերերի և նրանց ունեցվածքի հանդեպ գյուղական բնակչության այնքան անցանկալի կամայականությունը»¹⁰⁸: Սակայն վարչական պատժիչ միջոցառումներով հնարավոր չէր կտրել գյուղացիական պայքարի թափը, ընդհակառակը, դրանք նպաստում էին նորանոր հուզումների ծավալմանը:

Անդրկովկասի ոստիկանության ցանցում ծառայած ցարական աստիճանավորներից մեկը ցինիկաբար գրում էր, որ անդրկովկասյան գյուղացու հետ «մարդկային վերաբերմունքը» և կառավարության կողմից «շնորհված զանազան զեղ-

չերը» գյուղացիները շեն զնահատում և իրենց տգիտությունը արտահայտում են յուրաքանչյուր քայլում: Նույնիսկ բարենպաստ պայմաններում, իրենց «սոցիալական պարտականությունների կատարման գործում» նրանք երբեք չեն ցուցաբերում ճշտապահ լինելու անգամ ցանկություն: Հեղինակի կարծիքով ամենուր, միշտ և ամեն ինչում անդրկովկասյան գյուղացիները կառավարությունից սպասում են նորանոր զեղչեր, որի հետևանքով տեղական իշխանությունները ստիպված են լինում դիմել հարկադրական և առավել վճռական տարբեր միջոցների: Ցարական աստիճանավորը միաժամանակ նշում էր, որ «մարդկային վերաբերմունքով» անդրկովկասյան գյուղացու մոտ դժվար է առաջ բերել արթնացման և ինքնագիտակցման զգացում, քանի որ նրա մոտ այդ զգացումը հնարավոր կլիներ արթնացնել թերևս 200 տարի անց¹⁰⁹: Տիպիկ ոստիկանական մտածելակերպ:

Սակայն երբեմն լսվում էին նաև իրականությանն ավելի հարազատ ձայներ: XX դարասկզբին Կովկասի փոխարքա Վորոնցով-Պաշկովը ստիպված էր ընդունել, որ երկրամասի գյուղական բնակչությունը ներքին նահանգների հետ համեմատած, տնտեսական շատ ավելի ծանր պայմանների մեջ է գտնվում, որը հողատերերի համար կատարվող զանազան պարճակների ծանրության հետևանք է: «...Հօգուտ կալվածատերերի գանձվող պարտույթների չափերի անորոշությունը պատճառ է դարձել անվերջ վեճերի գյուղացիների ու կալվածատերերի, նրանց կառավարիչների միջև: Առանձին դժվարություններ են ծագել այն գյուղերում, որոնք մի քանի տերեր ունեն...»

40 տարվա ընթացքում չի հրապարակվել գյուղացիների դրույթները բարելավող և ոչ մի օրենք: Այսպիսի պայմաններում գյուղացիները լուրջ աչք միակ գիտակցությունը կարող են գալ, որ կառավարությունն իրենց մասին ոչ մի հոգացողություն չունի»¹¹⁰:

Ցարիզմի հարկային քաղաքականությունը նպաստում էր գյուղացիական մասսաների քայքայման խորացմանը: Այն հաշվի չէր նստում տեղական պայմանների ու հնարավորու-

թյունների, գյուղացիության տնտեսական կացության հետ: Այդ քաղաքականության միակ բարձրագույն նպատակը պետական եկամուտների ավելացումն էր: Պետական ու կալվածատիրական բազմաթիվ հարկերի ու պարհակների դեմ ուղղված գյուղացիական պայքարը XX դարի վերջերին Արևելյան Հայաստանում ձեռք էր բերել մասսայական բնույթի: Գյուղացիներն այդ պայքարում հաճախ էին ցուցադրում համառության ու համերաշխության ուշագրավ օրինակներ:

Գ Լ Ո Ւ Խ Չ Ո Ր Ր Ո Ր Կ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՄ

Աշխատության նախորդ գլուխներում օգտագործված փաստերը վկայում են, որ իրենց կենսական շահերի պաշտպանության համար գյուղացիական մասսաները ստիպված էին պայքար մղել ոչ միայն իրենց անմիջական շահագործողների, այլև վերջիններիս օգնության շտապող ու հովանավորող տեղական աղմինիստրացիայի դեմ: Գյուղացիության պայքարի սլաքներից մեկն էլ անմիջականորեն ուղղված էր տեղական աղմինիստրացիայի կամայականությունների ու շարաշահումների դեմ: Տանուտերերից սկսած մինչև զավառապետերը, հարկահավաքները, հողաշահիներն ու ջրբաշխները, ցարական վերին ու ստորին բազմապիսի աստիճանավորները գանձարանի շահերից բացի, չէին մոռանում նաև սեփական գրպանի մասին: Ֆ. էնգելսը նշում է, որ Ռուսաստանի պաշտոնական բոլոր դասերը ապրում էին գյուղացիներից վերջին հյուսիսը քամելու հաշվին¹:

Ամենուր տիրող բռնության ու կեղծիքի, կաշառակերության, գյուղացու մարդկային արժանապատվության ոտնահարման, ավելորդ վարչարարության ու անհոգ բյուրոկրատիզմի դեմ օրըստօրե աճում էր գյուղացիական մասսաների պայքարը: Տեղական իշխանությունները ամենևին չէին մտահոգվում գյուղացիների դրության բարելավմամբ: «Մըշակ» թերթը գրում էր, որ իրենց հանձնված գավառները բարվոքելու փոխարեն գավառապետները «մեծի մասամբ լուկ պտիցիականներ են հանդիսանում»²: Ահա մի օրինակ.

1882 թ. Սուրմալուի գավառի Իզդիր գյուղի մի խումբ բնակիչներ ցանկանում են Երևանի նահանգապետին իրազեկ դարձնել Սուրմալուի գավառապետի կատարած կեղծիքներին: Իմանալով այդ, դայրացած գավառապետը կանչել է տալիս «հանդուգն» գյուղացիներին իր մոտ և կազակների օգնությամբ նրանց գրպաններից հանում պատրաստի բողոքագրերը, իսկ գյուղացիներին ենթարկում խիստ ծեծի և տանջանքների: «Պառկած մահանում ենք, օգնեցեք»³, հեռագրում են վերոհիշյալ գյուղացիները Երևանի նահանգի ժանդարմական վարչության պետին:

Պտտոնական դիրքի շարաշահմամբ, կամայականությամբ, կաշառակերությամբ Սուրմալուի գավառապետից ետ չէր մնում նաև Շարուր-Դարալագյազի գավառապետը⁴: Իսկ Կարսի մարզի Շորագյալի օկրուգի բնակիչները 1897 թ. Կովկասի կառավարչապետին գրում են, որ մարզի պաշտոնատար անձանց կողմից իրենք ենթարկվում են շահագործման, իրենցից հավաքում են ինչ ասես, համարյա կողոպտում: Գյուղացիները խնդրում են վերջ տալ այդ անարդարություններին և քննել մարզի աղմինիստրացիայի գործերը⁵:

Երևանի նահանգում տեղական աղմինիստրացիայի կողմից թույլ տրվող անօրինականությունների ու կամայականությունների մասին է խոսվում անգամ երկրամասի պաշտոնական «Կովկաս» թերթի 1895 թ. համարներից մեկում: Հոգվածի հեղինակը⁶ նշում էր, որ Երևանի նահանգում գաժան բռնությունները դարձել են կանոն. «Ես իմացա,— գրում էր նա, որ մտրակի հովանավորներ են հանդիսանում ոչ միայն ոստիկանության աստիճանավորները (չապարները, պրիստավները և հաճախ գավառապետները), այլև մյուս զերատեսչությունների ներկայացուցիչները»⁷:

Արևելահայ գյուղում հողի համար մղվող պայքարն ավելի էր թեժանում հողաբաժանարարների շարաշահումների հետևանքով: Գյուղացիները երբեմն ըմբոստանում էին հողաբաժանման գործը տնօրինող պաշտոնատար անձանց դեմ: 1885 թ. Նոր Բայազետի գավառի Օրդաբլու գյուղի բնա-

կիչները դիմագրավում են հողաշափին, մեղադրելով կաշառակերության մեջ, սպառնում են սպանել նրան⁸: 1899 թ. նույնպիսի դիմադրություն են ցույց տալիս Ղազախի գավառի Բաշքենդ գյուղի բնակիչները: Փայտերով զինված գյուղացիները հարձակվում են իրենց հողային սահմանները «ճշգրտելու» նպատակով այդտեղ ժամանած աստիճանավորների վրա և վռնդում գյուղից⁹:

Երևանի գավառի Բաշգյուղ գյուղի բնակիչները 1889 թ. Երևանի նահանգապետին բողոքում են հողաշափների կամայականությունների կապակցությամբ, որոնք հասարակական հողը «բաժանում են օրենքին և խղճին հակառակ»¹⁰: Հողաբաժանարարների թույլ տված սխալների մասին 90-ական թվականներին իշխանություններին տեղյակ են պահում նաև Ալեքսանդրապոլի գավառի Դարբանդ, Ավդիբեկ, Նորաշեն, Շարուր-Դարալագյազի գավառի Ելփին, Փաշալու, Ջանգեղուրի գավառի Մահմուդլու, Գորիս, էջմիածնի գավառի Ալիբուշակ, Գյուրդալի, Շիրաղալա և այլ գյուղերի բնակիչները¹¹:

Ալեքսանդրապոլի գավառի Թոմարտաշ գյուղի բնակիչները 1895—96 թթ. ընթացքում մի շարք բողոքագրեր են ուղարկում Երևանի նահանգապետին և պետական ունեցվածքների նահանգային վարչությանը, որոնցում նշում են հողաբաժանարարների թույլ տված շարաշահումների մասին և խնդրում իրենց աղատել հողաբաժանարար «նիկոլայ Գասպարովի ավերիչ ճիրաններից, որը մեր գյուղի բնակչությանը այնպես է տիրում, ինչպես Նորին կայսերական մեծությունը ամբողջ Ռուսաստանում»¹²:

Երևանի նահանգապետ Ֆրեզեն 1891 թ. ստիպված էր խոստովանել, որ նահանգի պետական ունեցվածքների վարչության գործակալների մեղքով և առանձին անձանց կողմից պետական հողերի զավթումների հետևանքով հսկայական հողաբաժիններ անցել են հողատերերի ձեռքը, որն, անկասկած, ազդում է ինչպես պետական եկամուտների, այնպես էլ բնակչության տնտեսական կյանքի վրա: Նահանգապետը նույնիսկ օրինակ է բերում, թե Սուրմալուի և Նախիջևանի գավառներում հողաբաժանման ժամանակ մի քանի կալվա-

ծատերեր ինչպես են պետական ունեցվածքների վարչության աստիճանավորների շնորհիվ զավթել մոտ 7000 դեսյատին հող¹³։

Այս կապակցությամբ նահանգապետը քննադատության էր ենթարկում նաև Երևանի օկրուգային դատարանին։ «Փողովուրդը գիտակցում է այդ բոլորը և, որքանով ես կարող եմ համոզվել, անբավարար վստահության մեջ է վերաբերում արդարադատությանը, համոզված լինելով այն բանում, որ զավթողը բարձրացնելով պետական հողի յուրացման գործը, հաստատապես կշահի այն դատարանում։ Սահմանափակվելով լուկ ձևականություններով, դատարանն ամրապնդում է պետական հողերի անցումը մասնավոր անձանց, իր որոշումներով սրբագործում զավթումները»¹⁴։ Եթե նման անկեղծության էր դիմում անգամ նահանգապետը, ապա պարզ է, թե բանն ուր էր հասել։ Հարկավ, Ֆրեզեն ելնում էր «օրինականությունը» պահպանելու սկզբունքից և ոչ բնավ գյուղացիներին պաշտպանելու մտահոգությունից։ Ի դեպ, Ֆրեզեն նոր էր նշանակվել նահանգապետի պոստում և ազատորեն քննադատում էր իր նախորդի բացթողումները, հայտնաբերում թերություններ ամենուր, բնավ չենթադրելով, որ տարիներ անց նույնպիսի քննադատության արժանիորեն կարող է ենթարկվել նաև ինքը։

Արևելահայ գյուղում ջրասակավության հետևանքով գյուղացիների վատթարացած վիճակն ավելի էր բարդանում ջրաբաշխման գործը տնօրինող պաշտոնատար անձանց կողմից թույլ տրվող շարաշահումների և ունևոր տարրերի կողմից ոռոգման ջրի զավթման կապակցությամբ։ Երևանի նահանգի ոստիկանապետն իր ղեկավարությանն ուղարկած զեկուցագրերից մեկում տեղեկություններ է հաղորդում էջմիածնի գավառում ծագած գյուղացիական հուզումների մասին և փաստորեն հանգում այն մտքին, որ դրանք գավառապետ Խան-Աղովի գործունեության անմիջական հետևանքն են։ Էջմիածնի գավառի միրաբներից մեկը՝ Ներսեսովը, որը տնօրինում էր Կարբի գետի ջրաբաշխման աշխատանքները, իր գործունեությամբ արժանացել էր աշխատավոր գյուղացիու-

թյան ատելությունը և ստացել կաշառակերի համագավառական համբավ։ Գյուղացիների համառ բողոքներից հետո, 1886 թ. Ներսեսովը հեռացվում է գրաված պաշտոնից։ Սակայն 1888 թ. սկզբներին գավառապետի աջակցությամբ նա փորձում է կրկին ձեռք բերել այդ պաշտոնը։ Դա մեծ վրդովմունք և բացահայտ դժգոհություն է առաջ բերում գավառի բնակչության մեջ¹⁵։

Վերոհիշյալ գավառապետից իրենց դժգոհությունն են հայտնում նաև նույն գավառի Զեյվա գյուղի բնակիչները։ 1890 թ. Երևանի նահանգապետին են դիմում 181 ծուխ զեյվացիներ և խնդրում պատժել միրաբին ու որոշակի կարգ սահմանել ջրաբաշխման գործում։ Նրանք նշում են, որ էջմիածնի գավառապետը այդ հարցի կապակցությամբ նրանց արած բոլոր խնդրանքներն ու բողոքները անհետևանք է թողնում։ Շատ շանցած գյուղացիները նահանգապետին տեղեկացնում են, որ վերջինիս կարգադրությունից հետո անգամ գավառապետը չի ցանկանում ղբաղվել այդ հարցով¹⁶։ 1897 թ. Զեյվա գյուղի բնակիչները նորից են բարձրացնում այդ հարցը¹⁷։

1892 թվականին Երևանի նահանգապետին հասցեագրած միացյալ խնդրագրում Երևանի գավառի Օղուրբեջու, Զիբղամլու, Թոխանշալու, Ներքին Ղուլլասար և Ղամարլու գյուղերի բնակիչները Գառնի գետի ջրաբաշխման համար անցկացված միրաբի ընտրությունները համարում են անօրինական։ Նրանք գրում են, որ իրենց ցանկությանը հակառակ Երևանի գավառապետի օգնականը ներկայացրել է նախկին միրաբի թեկնածությունը, որը հայտնի էր իր անաղնվությամբ ու կամայականությամբ և վայելում էր գավառական իշխանավորների հովանավորությունն ու աջակցությունը։ Գյուղացիները նշում են, որ ընտրություններն անց են կացվել կեղծիքի, կաշառակերության և ահաբեկման մթնոլորտում։ Եվ երբ նրանք փորձել են դժգոհել, ապա պրիստավի զլխավորությամբ անմիջապես գործի են անցել կազակները։ Նրանցից շատերին զրկել են ընտրություններին մասնակցելու իրավունքից։ Գյուղացիները խնդրում են նշանակել նոր ընտրություններ։

հնդրագիրը ստորագրված է շուրջ 700 հայ և աղբրեջանցի գյուղացիների կողմից¹⁸։

Իշխանության ներկայացուցիչների կողմից ջրաբաշխման գործում թույլ տրվող անարդարությունների կապակցությամբ 1892 թ. Երևանի նահանգապետին բողոք են ներկայացնում Երևանի գավառի Ներքին և Վերին Ջանախչի, 1893 թվականին՝ Բելուք-Վեդի, Դալուլար, Գյոդաբլու, Օղուրբեքլու և այլ գյուղերի բնակիչներ¹⁹։

Ջրաբաշխման աշխատանքներում տիրող կամայականությունների ու շարաշահումների ուշագրավ օրինակ է նախիջևանի գավառի Թմբուլ գյուղի դեպքը։ Գյուղի տանուտերը երկու օր ու գիշեր, ինքնակամ, գյուղացիներին հասանելիք ողջ ջուրը հանձնում է գյուղի կալվածատերերին, որոնք դրա օգտագործման իրավունքը շունչին։ Ջրաբաժնից այնուհետև օգտվում է նաև ինքը։ Գյուղացիները գրավոր բողոք են ներկայացնում ոստիկանությանը, գավառի ջրաբաժան ինժեներին և Կովկասի ջրերի տեսուչին։ Գալով Թմբուլ, ինժեներն ականատես է լինում հակադիր երկու պատկերի. տանուտերի ցանքսերը, որ համարյա հավասար էին ամբողջ գյուղի ցանքսերին, կանաչին էին տալիս, իսկ գյուղացիների բամբակի արտերը սկսել էին շորանալ։ Թե ինչպիսի միջոցառումներ ձեռնարկվեցին տանուտերի նկատմամբ, հայտնի չեն։ Փոխարենը հայտնի է նրա ձեռնարկած «միջոցառումներից» հետևյալը. իր ողջ բարկությունը թափելով գանգատավոր գյուղացիներից մեկի վրա, մտրակի հարվածներով տանուտերը պատռում է նրա գլուխը, որի համար գյուղացիները գրավոր նոր բողոք են ներկայացնում գավառապետին²⁰։

Գյուղացիներն ըմբոստանում էին նաև անտառային վարչության աստիճանավորների կամայականությունների և ճընշումների դեմ։ Վերջիններս հեշտությամբ կարող էին գյուղացուն զրկել շինափայտից, վառելափայտից, արոտատեղերից, նշանակել անտեղի տուգանքներ և այլն։ 1885 թվականին Երևանի գավառի Գյուլ գյուղի բնակիչները Երևանի նահանգապետին բողոքում են վերոհիշյալ աստիճանավորների թույլ տված սխալների կապակցությամբ²¹։ 1891 թ. համա-

նման բողոք են ներկայացնում նաև նույն գավառի Բաշ Գառնի գյուղի բնակիչները²²։

Ելիսզավետպոլի նահանգապետը 1898 թ. կառավարչապետին տեղեկացնում է, որ Ջանգեզուրի գավառի Ջանախչի գյուղի մոտ գտնվող անտառամասում մոտ 150 գյուղացիներ զինված դիմադրություն էին ցույց տվել Ջանգեզուրի անտառապետին և անտառային պահակախմբին²³։ 1896 թ. անտառային պահակախմբին դիմագրավել են նաև Նոր Բայազետի գավառի Թոխուջա գյուղի բնակիչները, որի մասին անմիջապես զեկուցվել է արդարադատության մինիստրին²⁴։

Դիլիջանի անտառապետի կաշառակերության ու ճնշումների կապակցությամբ 1897 թ. Կովկասի կառավարչապետին են դիմում Ղազախի գավառի Նոր Դիլիջան գյուղի բնակիչները²⁵։ «Մշակ» թերթի 1898 թ. համարներից մեկում խոսվում է նույն անտառապետի ստորագրյալների կողմից թույլ տրվող շարաշահումների մասին։ Վերջիններս օգտվելով իրենց ընձեռնված հնարավորությունից և գյուղացիների սակավահողությունից մի քանի անգամ ավելի թանկ գնով վաճառում էին անտառային հողակտորներից օգտվելու իրավունքը։ Ահա թե ինչու նույն թվականին Հին Դիլիջան գյուղի բնակիչները բողոք են ներկայացնում անտառային դեպարտամենտի դիրեկտորին²⁶։

90-ական թվականներին Մեծ Ղարաքիլիսա գյուղի բնակիչները բաղմիցս բողոքել են Ալեքսանդրապոլի անտառապետության աստիճանավորների կողմից թույլ տրվող ապօրինությունների ու բռնությունների կապակցությամբ։ 1896 թվականին, երբ Երևանի նահանգապետ Տիգենհաուզենը ժամանում է Մեծ Ղարաքիլիսա, գյուղացիները մի շարք կենսական, բայց անտեսված հարցերի՝ այդ թվում անտառապետի կամայականությունների վերաբերյալ դիմում են նրան։ «Անտառից վերև սարի լանջերը և սարահարթերը կազմում են Ղարաքիլիսայի արոտատեղիները ու մասամբ խոտհարք անհիշատակ ժամանակներից ի վեր։ Գյուղացիները և նրանց նախնիները մինչև օրս անց ու դարձ են անում անտառի միջով անցնող ճանապարհով։ Սակայն այժմ անտառապետը

առանձին տուրք է պահանջում դրա համար և ահագին դժվարութիւնների հետ է կապել անտառային ճանապարհով տալար անցկացնելը, սարերից խոտ բերելը»²⁷։ Նահանգապետը խոստանում է հարգել գյուղացիների խնդրանքը։ Սակայն ղարաքիլիսցիների դրութիւնը ոչնչով չի փոխվում։ Տարիներ անց նույն նահանգապետը Կովկասի կառավարչապետին գրում էր, որ անտառապետի դեմ նման մեղադրանքներ են հարուցել նաև այլ գյուղերի բնակիչներ, և ըստ երևութիւն, դրանք մեծ մասամբ պետք է համարել իրականութիւնը համապատասխան։ «Հարկ է ասել,— նշում էր նահանգապետը, որ անտառային վարչութիւնը երևան է բերել ավելորդ եռանդ և իրոք ճնշում է տեղական բնակչութիւնը»²⁸։ Ի վերջոյ բավարարվեցին գյուղացիները և պատժվեց արդոյք անտառապետը՝ այդ մասին ուրիշ տեղեկութիւններ չկան։

Գնալով աճում էր գյուղացիական մասսաների դժգոհութիւնը հաշտարար միջնորդների գործունեութիւնից։ Օրինակ, Նախիջևանի գավառի Արալսա, Կյուկի, Բաշ-Անդուր գյուղերի բնակիչները 1881—1882 թթ. երևանի նահանգային շինական գործերի ատյանի առջև հարց են բարձրացնում՝ քննել հաշտարար միջնորդների գործերն ու կարգի հրավիրել նրանց²⁹։ Ժամանակակիցներից մեկն անդրադառնալով հաշտարար միջնորդների գործունեութիւնը նշում էր. «Մեծամասամբ դրանք տեղական սովորութիւնների, շահերի, լեզվի վերաբերյալ ոչ մի պատկերացում չունեցող մարդիկ են։ Միջնորդներից նրանք են համարվում իրենց գործի միակ գիտակները, ովքեր իրենց պաշտոնին են անցել ոստիկանութիւն ստորին գործակալներից, սակայն այս վերջին հանգամանքն էլ բավական է, որպեսզի հասկանալ, ինչպես են նրանք օգտագործում տեղական կյանքի իրենց գիտելիքները և ինչպիսի հաշտարար միջնորդ կարող են լինել...»³⁰։

Երևանի նահանգային ժանդարմական վարչութիւնն պետք ոստիկանութիւնն ղեկարտամենտին ուղղած գրութիւն մեջ նշում է մի հետաքրքիր մասնավոր գործարքի մասին, որը տեղի է ունեցել 1883 թ. Շարուր-Գարալագյազի գավառի մուլքադարական մի շարք գյուղերի բնակիչների և հողատեր

Ս. Եղիազարյանի միջև։ Այլևս հույս չգնելով հաշտարար միջնորդի վրա, գյուղացիները համաձայնութիւն են գալիս հողատիրոջ հետ և պարտավորվում վերջինիս մուլք վճարել միայն այն դեպքում, երբ գավառում ունեցած իր ազդեցութիւնով նա կարողանա նպաստել ջրաբաշխման գործում տեղ գտած թերութիւնների վերացմանը³¹։

Գյուղացիների և կալվածատերերի փոխհարաբերութիւնների կարգավորումը ընկած էր հաշտարար միջնորդների վրա։ Սակայն վերջիններիս ապաշնորհութիւնը ստիպում էր գյուղացիներին մեծ կամ փոքր յուրաքանչյուր հարցի կապակցութիւնով դիմել շինական գործերի երևանի նահանգային ատյանին, որին անմիջապես ենթարկվում էին հաշտարար միջնորդները։ Սակայն այդ ատյանում, որի գլուխ կանգնած էր նահանգապետը, գործերի վիճակը նույնպես անմխիթար էր։ Այնտեղ կուտակվում էին հարյուրավոր գործեր, ձգձգվում էին գյուղացիների համար կենսական նշանակութիւն ունեցող հարցերի լուծումները և պատահական չէր որ գյուղացիներն ավելի հաճախ էին այդ ատյանի կայացրած որոշումներին դեմ բողոքարկում իշխանութիւնն բարձրագույն օրգաններին և ամենից հաճախ՝ Սենատ։ Եվ իսկապես, Կովկասի շինական գործերի նահանգային ատյանները բացառապես բյուրոկրատական հիմնարկութիւններ էին, որոնք երբեք չէին բարձրացնում և լուծում իրենց տնօրինութիւնը հանձնված և ոչ մի կարևոր հարց³²։

Մուլքի և բահրայի գանձման, լրացուցիչ հողաբաժիններ ստանալու կապակցութիւնով երևանի նահանգային շինական գործերի ատյանի կայացրած վճիռների դեմ 1893—1900 թթ. ընթացքում Սենատ են բողոքարկել Նախիջևանի գավառի Դոստի, Լակաթաղ-Բաբալի, Ջահրի, Թեյվազ, Սուրմալուի գավառի Սուկի, էջմիածնի գավառի Ղամարլու, Կարգաբազար, Երևանի գավառի Նովրուզլու, Դոխկուզ³ և բազմաթիվ այլ գյուղերի բնակիչներ։ Այդ փաստաթղթերը դարավերջի արևելահայ գյուղում առկա դասակարգային խոր ներհակութիւնների լավագույն ապացույցն են։

Գյուղացիները հաճախ էին ծառանում իրենց տանուտե-

րերի ապօրինի գործողությունների դեմ, առաջվա նման լուռ ու հնազանդ չէին ընդունում նրանց վճիռները: Աշտարակից «Մշակի» թղթակիցը գրում էր, որ գյուղացիների հաշիվ պահանջելուց հետո պարզվում է, որ տանուտերի կողմից չուրացվել է ավելի քան 2000 ուրբլի հասարակական գումար: Թղթակիցը նշում է, որ գյուղացիներն այլևս հեշտությամբ չեն հնազանդվում աղաների հրամաններին, համարձակվում են քննադատել նրանց կատարած գործերը և հրապարակավ հաշիվ պահանջել նրանցից³⁴: Իրենց տանուտերերի կամայականությունների, շարաշահումների դեմ իշխանություններին բողոք են ներկայացնում Երևանի գավառի Արզաքենդ (1883 թ.), Արամուս (1900 թ.)³⁵ և Զանգեզուրի գավառի Ալիլու (1888 թ.), Էջմիածնի գավառի Չոբանքյարա (1891 թ.), Սուրմալուի գավառի Բլուր (1894 թ.), Նոր Բայազետի գավառի Ներքին Ախտա (1896 թ.)³⁵ և բազմաթիվ այլ գյուղերի բնակիչներ:

Ժամանակակիցներից մեկն անդրադառնալով արեւելահայ, մասնավորապես Ղարաբաղի և Սյունիքի գյուղացիության տնտեսական դրությունը նշում էր. «Մի սարսուռ ես զգում, երբ մոտիկից ծանոթանում ես գյուղացիների դատաստանական գործերի հետ, որքան զրկանք, որքան շարշարանք ու տանջանք, որքան անիրավություններ գյուղի տանուտերի կամ գյուղական դատավորի կողմից...»³⁶, Ալ. Երիցյանը գրում էր, որ Ղազախի գավառում գյուղական տանուտերերի պաշտոնում ընտրվելու համար թեկնածուները դիմում են ամեն միջոցի, սակայն հետագայում չեն վայելում ոչ մի հարգանք: Գյուղացիները չեն հնազանդվում նրանց հրամաններին, հաճախ են մերկացնում կաշառակերության և այլ անօրինակությունների մեջ³⁷:

Ղազախի գավառի Քարվանսարա գյուղի բնակիչները հաշիվ են պահանջում իրենց տանուտերերից և ապա նրան հանելու համար խնդրամատուց են լինում Ելիզավետպոլի նահանգապետին: Այդ օրինակին են հետևում նաև վերին Աղզան գյուղի բնակիչները³⁸: Նման ելույթներն ավելի մեծ մասշտաբ են ընդունում և գյուղացիական բացահայտ պայքարի վերած-

վում նույն գավառի Կողբ գյուղում³⁹: Իրենց տանուտերերին չեն հնազանդվել, դիմադրել ու գանակոծել են Նոր Բայազետի գավառի Բասարգեշար (1888 թ.), Ալեքսանդրապոլի գավառի Դուղաթ (1888 թ.), Էջմիածնի գավառի Քեշիշքենդ (1888 թ.), Շարուր-Գարալագյաղի գավառի Արզեզ (1888 թ.), Ղուշի-Գեմուրչի (1896 թ.) գյուղերի բնակիչները⁴⁰:

Ոստիկանության ղեկարտամենտին ուղղած Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետի զեկուցագրում նշվում է, որ Էջմիածնի գավառի Վաղարշապատ գյուղում առաջացած գյուղացիական դժգոհությունների առիթը տանուտեր Ղարբեյանի կամայականություններն ու շարաշահումներն էին: Գյուղացիները հաճախ են բողոքել, որ հասարակական գումարը բաշխելիս տանուտերը նկատի է ունենում ամեն ինչ, բացի գյուղի իրական կարիքներից և հաշվի չի նստում գյուղական հասարակության կողմից ընտրված ներկայացուցիչների հետ: Տանուտերի տարեկան ծախսած հասարակական գումարը 500—600 ուրբլու փոխարեն հասնում է 3000 ուրբլու, նա գործում է միայնակ՝ գավառապետ Խան-Աղոլի անմիջական ցուցումներով⁴¹: 1888 թվականին գրված այս զեկուցագրից հետո անգամ իշխանությունները չեն բարեհաճում զբաղվել վաղարշապատցիների դրության բարելավմամբ: Այդ է վկայում մեկ այլ փաստաթուղթ, որ կյանքի է կոչվել դրանից ուղիղ մեկ տասնամյակ անց: Վաղարշապատի գյուղական հասարակության 132 գյուղացիների 1898 թ. խնդրագիրն է ուղղված Երևանի նահանգապետին: Նրանք գրում են, որ գյուղական պաշտոնատար անձանց կողմից վերջին հինգ տարիների ընթացքում չուրացվել է շուրջ 4000 ուրբլի հասարակական գումար: 1870 թվականից սկսած նման չուրացումների կապակցությամբ համարյա միշտ հետաքննություն է կատարվել, սակայն տանուտերերը ոչ միայն չեն պատժվել, այլև կրկին զբաղեցրել են այդ պաշտոնը: Գյուղացիները խնդրում են տանուտերական նոր ընտրություններ նշանակել և թույլատրել ընտրելու իրենց ցանկացած թեկնածուին⁴²: Նման ընտրություններ անց են կացվում, սակայն գավառապետի ցանկության և պրիստավի աջակցության

շնորհիվ նախկին տանուտեր Ղարիբջանը կարողանում է մնալ իր պաշտոնում: Այդ անօրինականության դեմ 1898 թ. գյուղացիները կրկին բողոքում են Երևանի նահանգապետին⁴³: Այդ նույն հասցեով 1898—99 թթ. գյուղացիները տասնյակ դիմումներ են հղում՝ խնդրելով հեռացնել Ղարիբջանին զբաղեցրած պաշտոնից: Սակայն արդարության ձգտող գյուղացիները չեն հասնում որևէ արդյունքի⁴⁴:

Պատահական չէր, որ տանուտերական ընտրությունների ժամանակ գյուղերը հուզումներով էին բռնկվում: 1881 թվականին նախիջևանի գավառի Բիլավ, Բեղրուտ, Քյարիմ Ղուլի-Գիլգա և Յահչի գյուղերի բնակիչները գյուղական պաշտոնատար անձանց ընտրությունների ժամանակ հաշտարար միջնորդի թույլ տված անօրինականությունների կապակցությամբ բողոք են ներկայացնում Երևանի նահանգապետին: Նրանք նշում են, որ հաշտարար միջնորդը շարաշահելով իր դիրքը, առանց քվեարկության տանուտերի պաշտոնում է նշանակել «իր մարդուն» և դիմել այլ կամայականությունների: Այդ պատճառով գյուղացիների մի մասն ընդհանրապես հրաժարվել է մասնակցել ընտրություններին⁴⁵: Բիլավ գյուղի բնակիչների Երևանի նահանգապետին հասցեագրած հեռագրում կարդում ենք. «Մեր գյուղի մուլքադար Մահմեդ Խանը ժամանեց գյուղ և հայտարարեց, որ Մելիք-Մուրադովը (հաշտարար միջնորդը—Վ. Հ.) գնում է Երևան, բոլոր գործերը կշտկվեն: Ձերդ պայծառափայլություն, ասածո սիրուն ազատեք մեզ Մուրադովի և Մահմեդ Խանի արարքներից»⁴⁶:

Երևանի նահանգապետը Կովկասի կառավարչապետին տեղեկացնում է, որ 1884 թ. մարտին Ալեքսանդրապոլի գավառի Քավթարուլի գյուղական հասարակության պաշտոնատար անձանց ընտրությունների ժամանակ գյուղացիները չեն ցանկացել քվեարկել նախկին տանուտերի օգտին: Նրանք դիմագրավել են գավառապետի օգնականին, գանակոծել նրա ուղեկիցներին և հեծյալներին⁴⁷: Իսկ Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետը ոստիկանության ղեկարտամենտին տեղեկացնում է, որ էջմիածնի գավառի Օշական գյուղում, 1886 թ. վերջերին, տանուտերական ընտրությունների ժա-

մանակ գյուղացիները հրաժարվել են քվեարկել գավառապետ Խան-Աղովի առաջադրած թեկնածուի օգտին, քանզի վերջինս գողերին ու թալանչիներին հովանավորելու մեծ փորձ ուներ: Գավառապետը տարիուկես ձղձգել է նոր ընտրությունները և 1888 թ. ընտրությունների ժամանակ կրկին առաջ է քաշել այդ նույն թեկնածուները: Գյուղացիների շրջանում դա նոր հուզումների տեղիք է տվել⁴⁸:

Գյուղական պաշտոնատար անձանց ընտրությունների ժամանակ գավառապետների, նրանց օգնականների թույլ տված սխալների, ավելորդ վարչարարության և կեղծիքների մասին վերագաս օրգաններին բողոքում են բաղմաթիվ գյուղերի բնակիչներ, այդ թվում՝ նոր Բայազետի գավառի Չիրուխլու (1886 թ.), Երևանի գավառի Բեյութ-Վեղի (1887 թ.), Իմանշալու (1898 թ.), էջմիածնի գավառի Ղարաքիլիսա, Սալլու, Մոլլա-Ղասում, Թամշլու, Ղարաբուլաղ (1887 թ.) գյուղերի, նույն գավառի Թալինի (1890 թ.), Կարխունի 1896 թ.), Ներքին Աղջաղալայի (1896 թ.), Եղվարդի (1898 թ.), Երևանի գավառի Շորլու-Դեմուրչիի (1898 թ.), Դավալուի (1895 թ.) գյուղական հասարակությունների բնակիչները⁴⁹:

Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետի օգնականի ոստիկանության ղեկարտամենտին հասցեագրած զեկուցագրից տեղեկանում ենք Ալեքսանդրապոլի գավառի Տավշանդշլաղի գյուղական հասարակության տանուտերական ընտրությունների ժամանակ առաջացած գյուղացիական լուրջ հուզումների մասին: 1892 թ. դեկտեմբերի 16-ին գյուղական տանուտերի պաշտոնում ընտրվելու համար տեղամասային պրիստավ Վասիլը քվեարկման է դնում չորս թեկնածուներ: Գյուղացիների ձայների մեծ մասը ստանում է թեկնածուներից մեկը: Թվում էր, թե ընտրություններն այլալիտով պետք է ավարտվեին: Սակայն դա պրիստավի սրտովը չէր: Ձգտելով տանուտերի պաշտոնը հանձնել իր կողմնակցին, որից, ի դեպ, 600 ռուբլի կաշառք էր ստացել, Վասիլը շեղյալ է հայտարարում վերոհիշյալ ընտրության արդյունքները: Դա առաջ է բերում գյուղացիների արդարացի զայրույթը: Պրիստավը նորից է քվեարկման դնում թեկնածուները և նույն թեկնածուն

կրկին ստանում է ձայների մեծամասնությունը՝ 270 ձայն, իսկ իր կողմնակիցը՝ 96: Սակայն հանդուգն պրիստավը չի ցանկանում նահանջել ու շեղյալ է հայտարարում ընտրությունները նաև երկրորդ անգամ: Տեսնելով, որ անհնար է կոտրել գյուղացիների համերաշխ կամքը, վերջինս համոզման և ահարեկման միջոցով փորձում է ազդել առանձին գյուղացիների վրա, սակայն անօգուտ: Վասիլը դիմում է նաև բացահայտ կեղծիքի, քվեարկման արդյունքների մեջ ինքնազուլս «ուղղումներ» և լրացումներ կատարելուց հետո, հաջորդ օրը նա հայտարարում է իր կողմնակից թեկնածուի հաղթանակը: Գյուղացիներն ըմբոստանում են այդ կամայականության դեմ, փորձում գանակոծել պրիստավին, սակայն վերջինս կարողանում է ճողպարել: Այդ անօրինական ընտրությունների կապակցությամբ գյուղացիները բողոք են ներկայացնում Ալեքսանդրապոլի գավառապետին⁵⁰:

1896 թվականի սեպտեմբերի 12-ին գյուղական պաշտոնատար անձանց ընտրությունների ժամանակ էջմիածնի գավառի Սարգարապատ գյուղի բնակչությունը դիմադրություն է ցույց տալիս իշխանության ներկայացուցիչներին: Գյուղացիները չեն ցանկանում ենթարկվել վերջիններիս կարգադրություններին և քվեարկել իրենց նախկին տանուտերի թեկնածույան օգտին: Նրանք հարձակվում են գավառապետի օգնականի պաշտոնատար այլ անձանց և նրանց հետ գյուղ ժամանած հեծյալների վրա, ծեծում նրանց: Այնուհետև կազմակերպված ձևով նրանք թողնում են հավաքատեղին ու այգպիսով բոյկոտի ենթարկում ընտրությունները⁵¹:

Անհնազանդ գյուղացիներին պատժելու համար իշխանությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցառումներ: Յոթը սարգարապատցիներ նետվում են բանտ: Սակայն նրանք Թիֆլիսի դատական ատյանին բողոքարկում են Երևանի օկրուգային դատարանի կայացրած վճիռը: «Այդ դատավճիռը մենք ընդունում ենք սխալ ու վերացման ենթակա, — գրում էին գյուղացիները: Ընտրական իրավունքը՝ իրավունք է և ոչ պարտավորություն, և, եթե որևէ մեկը չի ուզում մասնակցել հավաքին, ապա չկա որևիցե հիմք ուժով հարկադրելու նրան իրա-

զործել իր ընտրական իրավունքները, հետևաբար, եթե տեղի էլ են ունեցել ինչ որ «անկարգություններ», ապա դրանք նախ և առաջ ոստիկանության կողմից իշխանության շարաշահման հետևանք են հանդիսանում»⁵²:

Գյուղական պաշտոնատար անձանց ընտրությունների առարգարության կապակցությամբ ըմբոստանում են նաև Երեվանի գավառի Սաղարակ (1889 թ.), Ալեքսանդրապոլի գավառի Քափանակ (1890 թ.), Ղփչաղ (1890 թ.), էջմիածնի գավառի Ապարանի տեղամասի մի շարք գյուղերի (1890 թ.), նույն գավառի Մուլա-Բայազետ (1896 թ.), Ղարաքիլիսա (1898 թ.)⁵³ և այլ գյուղերի բնակիչներ: Նման ելույթները չէին կարող շահահանգստացնել իշխանություններին: 1898 թ. Երևանի նահանգապետը գավառապետերին կարգադրում է գյուղական պաշտոնատար անձանց ընտրությունների ժամանակ ոստիկանության տեղամասային պետերին անպայման ուղարկել գյուղերը՝ «հավաքների ժամանակ անհրաժեշտ կարգ ու կանոնի և հանգրստության պահպանման շահերից ելնելով, որովհետև ընտրությունների ժամանակ հաճախ են տեղի ունենում անկարգություններ»⁵⁴:

Նոր Բայազետի գավառի տեղամասային պրիստավներից մեկը 1892 թ. գավառապետին գրում էր. «Մազրայի հասարակության բնակչությունն այնքան է երես առել, որ իր վրա ոչ մի իշխանություն չի ճանաչում և ինքնին երևակայում է, որ ողջ իշխանությունն իր ձեռքում է, այսինքն ձգտում է նրան, որպեսզի իշխանությունն անի այն, ինչ ինքն է ցանկանում... այդամբողջ բնակչությունը բաղկացած է բացառապես ավազակներից և զրպարտիչներից»⁵⁵: Ոստիկանական ցինիզմով հագեցած այս խոսքերը, անշուշտ, Արևելյան Հայաստանի ամենախուլ անկյուններից մեկի գյուղացիության ինքնագիտակցման ու կազմակերպման, դասակարգային որոշակի հասունացման անմիջական արդյունք են:

Անդրկովկասում, այդ թվում նաև Արևելյան Հայաստանում որևէ գյուղում «կարգ ու կանոնը վերականգնելու» և «անհնազանդ» գյուղացիներին պատժելու նպատակով իշխանությունները առժամանակ զրկում էին վերջիններիս իրենց միջից տա-

նուտեր ընտրելու իրավունքից: Այդպիսի գյուղերում նշանակվում էր «կառավարչական» տանուտեր, որն իր տրամադրության տակ հաճախ ունենում էր երկու հեծյալ: Նրանց պահելու ողջ հոգսը ընկնում էր գյուղացիների վրա: 1886 թ. Բորչալուի գավառապետը Քիֆլիսի նահանգապետին գրում էր, որ Գսեղ և Շահալի գյուղերի բնակիչները թաքցնում են ինչ-որ հանցագործի (ղաշաղի⁵⁶—Վ. Հ.) և խնդրում պատժել իշխանություններին շաջակցող այդ գյուղերին՝ զրկելով տանուտեր ընտրելու իրավունքից: Միաժամանակ նա անհրաժեշտ է համարում էկզեկուցիայի ենթարկել Գսեղ և Շահալի գյուղերը՝ չուրաքանչյուրում նշանակելով 50-ական կազակ կամ հարյուրական զինվոր, այնքան ժամանակ, քանի դեռ բնակիչները չեն փոխել իրենց վարքագիծը: «Դա լավ օրինակ կծառայի մնացյալ բոլոր գյուղերի համար»⁵⁷,— գրում էր գավառապետը: Նույն թվականին ու նույնպիսի մեղադրանքի հիման վրա «կառավարչական» տանուտերեր են նշանակվում նաև Կուրթան և Ուզունլար գյուղերում⁵⁸:

1897 թվականի սովյալներով, տանուտեր ընտրելու իրավունքից զրկված էին Երևանի գավառի Վեղիշայ, Ալեքսանդրապոլի գավառի Զաչուռ, Փոքր Ղարաքիլիսա, Արթիկ, Նախիջևանի գավառի Ղաղանչի և մի շարք այլ գյուղեր: Զանգեզուրի գավառում նման գյուղերի թիվը ութն էր, իսկ Կարսի մարզում՝ տասնչորսը⁵⁹:

Տեղական իշխանությունների ներկայացուցիչների ղգալի մասը հանդես էր գալիս գյուղացիության անմիջական շահագործողի դերում: Նրանցից շատերը միաժամանակ հողատերեր էին, վաշխառուներ, գյուղական նորածին բուրժուազիայի կազրեր: Ուստի արևելահայ գյուղում ընթացող սոցիալական երկրորդ պատերազմը ուղղված էր նաև տեղական իշխանությունների ներկայացուցիչների դեմ: Նշանավոր գյուղագիր Հ. Ճուղուրյանի հերոսներից մեկը բողոքում է. «...ով վեր ա կենըմ տեղից, մեր ջանն ա ուտըմ, ո՞ր մի՛նի անըմը տամ, որ մեկէլինը թողամ, քոխվա, գզիր, քյաղխուդա, հարուստ, ձիավոր, յասաուլ, գեղի ու դրսի դատավորնին...»⁶⁰: Երևանի գավառի Ղամարլուի գյուղական հասարակության 200-ից ավելի

գյուղացիներ 1895 թ. իրենց տանուտերի վրա բողոք են ներկայացնում նահանգապետին: Նրանք գրում են, որ տանուտերը ցանկանում է, որպեսզի «ողջ բնակչությունը պարի իր դուռուկի տակ», որի համար նա ունի հիանալի միջոց՝ պարտամուրհակները: Գյուղացիները խնդրում են իրենց ազատել այդ վաշխառու տանուտերից⁶¹:

Գյուղացիները երբեմն ըմբոստանում էին նաև վաշխառուների դեմ, հրաժարվում վճարել վաշխառուական պարտքերն ու օրավուր աճող տոկոսները: Դրանք այնպես էին կապկպում գյուղացուն, որ ազատվելու միակ հույսը վերջինս փնտրում էր իշխանությունների մոտ: «Վաշխառութունը,— գրում էր «Մշակ» թերթը,— ինչպես մի հազարագլխանի հրեշ, բույն է դրել ժողովրդի մեջ և ծծում նրա մարմնի կենսական հյութերը: Նահապետական կյանքով ապրող գյուղերում խեղճերի, շքավորների մի ահագին բազմություն օրն ի բուն վատնում է իր ամենաթանկագին ուժերը, որպեսզի կուշտ ու պարարտ լինեն միայն մի քանիսը»⁶²:

Ղաղախի գավառի Վերին Աղզան գյուղի պարտքերի մեջ թաղված բնակիչները օգնության համար դիմում են Պետերբուրգ, իսկ Նոր Բայազետի գավառի Սուխոյ-Ֆոնտան, Ներքին Ախտա և այլ գյուղերի բնակիչները վաշխառուների ձեռքից ազատվելու նպատակով դիմում են արքունական բանկի Երեվանի բաժնին՝ խնդրելով 4 տոկոսով վարկ բաց թողնել իրենց⁶³:

«Մշակ» թերթին Զանգեզուրի գավառի Մազրա գյուղից ուղարկած նամակում պատմվում էր Միսիանի գավառամասի վաշխառու, «գյուղացու արյունը ծծող» Հախնաղարյանի մասին, որը 30—40 տոկոսով պարտք էր տալիս գյուղացիներին: Վերջիններիս բազում բողոքներից հետո 1899 թ. Մազրա է ժամանում Ելիզավետպոլի նահանգային դատախազը: Կազակները շրջապատում են Հախնաղարյանի և նրա վաշխառու որդիների տները, որտեղից և հայտնաբերում են 476 պարտամուրհակ⁶⁴:

Արևելահայ գյուղացիության կյանքը նկարագրող Ա. Աղբյւրյանի պատմվածքներից մեկի հերոսները ըմբոստանում են գյուղական վաշխառուի դեմ. «Մինչև երբ համբերենք, մինչև

երբ տանենք էս գրութիւնը,— բողոքում են գյուղացիները: ...ժամանակի ընթացքում, իհարկե, շատանում էր տրտնջողների թիվը և նրանց մեջ օրեցօր աճում էր թշնամու դեմ մաքառելու և կռիւնու պահանջը»⁶⁵:

Գյուղական բուրժուազիայի դեմ պայքարը արեւելահայ գյուղում մղվող սոցիալական երկրորդ պատերազմն էր: Սակայն դժվար է ցույց տալ, թե որտեղ է սկսվում ու վերջանում սոցիալական առաջին պատերազմը և որտեղ՝ երկրորդը: Գրանք համարյա միշտ ընթանում էին փոխկապակցված, հաճախ լրացնում ու հաջորդում միմյանց:

XIX դարի վերջերին Ռուսաստանի գյուղացիական մասսաների համար բնորոշ էր սոցիալական առաջին պատերազմը: Վ. Ի. Լենինը գրում է. «Բայց մեր գյուղացին տառապում է, ինչպես մենք տեսանք, ոչ միայն և նույնիսկ ոչ այնքան կապիտալի հարստահարութիւնից, որքան կալվածատերերի ճնշումից ու ճորտատիրական մնացուկներից... Առաջինը ամբողջապես զեռ ապագայումն է, երկրորդը նշանակալից շափով արդեն անցյալում է»⁶⁶: Լենինյան այս խոսքերն ամբողջովին վերաբերում են նաև արեւելահայ գյուղին:

Ունեոր տարրերի շահագործմանը գյուղացիները կրթեմն փորձում էին վրեժխնդիր լինել՝ նրանք հրդեհի ճարակ էին դարձնում իրենց հարստահարիչների ունեցվածքը: Օրինակ, 1900 թ. հունվարին գյուղացիները հրդեհում են Կարսի մարզի Գյուլվերան գյուղի տանուտերի տունը, 1900 թ. փետրվարին՝ նույն մարզի Բաշ-Շորագյալ գյուղի տանուտերի օգնականի տունը⁶⁷: Նման դեպքեր տեղի էին ունենում երկրի տարբեր անկյուններում: Սակայն չպետք է անտեսել, որ գյուղական հրդեհների ու հրկիզումների որոշ մասը առնչութիւն չունեւր դասակարգային պայքարի հետ, այլ կենցաղային բազում անհարթութիւնների անմիջական հետևանք էր: Հրդեհների վերաբերյալ վիճակագրական ինչ-որ տվյալներ ընդունել որպես դասակարգային պայքարի վերելքի ցուցանիշ, կարծում ենք, ճիշտ չէր լինի:

Նահանգապետների ամենամյա հաշվետվութիւններից, որոնք տեղեկութիւններ են պարունակում տարվա ընթացքում

ժառանգ հրդեհների և հրկիզումների մասին, պարզորոշ երևում է, որ դրանց թիվը յուրաքանչյուր հաջորդ տարում նախորդ տարվա համեմատ խիստ տատանումներ է տվել: Նման պայմաններում դժվար է խոսել հրկիզումների ընդհանուր ու բացարձակ աճի մասին, քանի որ դրանք աճել ու պակասել են զուտ հարաբերականորեն: Երևանի նահանգում եթե 1880 թ. եղել է 71 հրդեհ (որից 53 հրկիզում), ապա 1890 թվականին՝ 59 հրդեհ (որից 45 հրկիզում)⁶⁸: Ստացվում է, որ տասը տարվա ընթացքում դրանց թիվը նահանգում զգալիորեն իջել է: Ուրեմն, աճ ցույց տալու համար տարեթիվերը չպետք է ընտրվեն մեխանիկորեն, որովհետև նույն կերպ կարելի է ապացուցել հակառակը: Եվ եթե անգամ խոսք է գնում հրդեհների աճի մասին, ապա դա հիմնականում պետք է կապել ոչ թե դասակարգային պայքարի վերելքի, այլ ազգաբնակչութան աճի բարձր տեմպերի հետ: Ուստի, չենք կարող համաձայնել այն հետազոտողների հետ, որոնք հրդեհների աճը ցանկանում են կապել դասակարգային պայքարի վերելքի հետ:

XIX դարի երկրորդ կեսի արեւելահայ գյուղացիական շարժումների պատմութեան էջերն իրենց հիմնական բովանդակութեամբ բավականաչափ նման են: Գրանք պատմում են տարբեր անկյուններում տեղի ունեցած ագրարային հուզումների մասին, որոնք հիմքում ունեցել են միևնույն դրդապատճառները, կարծես թե պայքարի միևնույն ընթացքն ու վախճանը: Այդ էջերի մեջ առանձնանում է 1886—1887 թթ. գյուղացիական ելույթներին վերաբերող էջը:

Ոստիկանութեան դեպարտամենտի կազմած մի տեղեկագրի համաձայն 1881 թ. հունվարից մինչև 1888 թ. մայիսը Ռուսաստանում տեղի են ունեցել 332 գյուղացիական «անկարգութիւններ»⁶⁹: Անշուշտ, գյուղացիական ելույթների թիվն անհամեմատ մեծ է եղել, սակայն տվյալ տեղեկագրում առանձնացվել են առավել նշանակալից դեպքերը, որոնք ունեցել են ընդգծված «քաղաքացիական և քրեական բնույթ»:

Գյուղացիական ելույթները, որոնք պաշտոնապես որակավորվում էին որպես «անկարգութիւններ», ըստ այդ տեղեկագրի տեղի են ունեցել Ռուսաստանի 61 նահանգներում և

մարզերում: Անդրկովկասյան նահանգներից ու մարզերից միայն Երևանի նահանգն է հիշատակվում այդտեղ⁷⁰: Այն հարցի պատասխանը, թե Երևանի նահանգում տեղի ունեցած գյուղացիական այդ ի՞նչ ելույթ է, որ ցարական աստիճանավորների կողմից առանձնացվել է համառուսական մասշտաբ ընդգրկող ցուցակում, ստանում ենք վերջինիս հավելվածից, որտեղ նշվում է, որ 1887 թ. մարտին Երևանի նահանգի նոր Բայազետի գավառի Գյուլ գյուղի բնակիչները լուրջ դիմադրություն են ցույց տվել իշխանության ներկայացուցիչներին⁷¹:

Ցարական կառավարությունը 1887 թ. պարտադիր զինապարտության օրենքը տարածեց նաև Անդրկովկասի քրիստոնյա բնակչության վրա, որն ուղեկցվեց տեղական իշխանության ներկայացուցիչների կողմից թույլ տրվող բազում անօրինականություններով ու շարաշահումներով: Դա ցարիզմի սոցիալական շահագործման և ազգային ճնշման դեմ կուտակված մասսայական դժգոհության առիթ հանդիսացավ: Երկրամասի տարբեր անկյուններում տեղի ունեցան գյուղացիական հուզումներ, որոնք դրսևորվեցին նաև արևելահայ գյուղում: Դրանց թվին է պատկանում Գյուլ գյուղի բնակիչների ելույթը, որի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ կան արխիվալին մի շարք փաստաթղթերում⁷²:

1887 թվականի մարտի 8-ին զինակոչիկների ցուցակը կաղմեկու նպատակով նոր Բայազետի գավառի Գյուլ գյուղն է ժամանում գավառապետի օգնական Օլխովսկին: Այստեղ բնակչությունը նրան բացահայտ դիմադրություն է ցույց տալիս, որի պայմաններում անհնար է դառնում կաղմել զինակոչիկների ցուցակը: Գավառապետի օգնականի ժամանման լուրն առնելով ժողովուրդը շրջապատում է տանուտերի տունը, որտեղ իջևանել էր նա և այն քարկոծում: Գյուղացիների վրա ազդելու նպատակով գավառապետի օգնականը դուրս է գալիս նրանց ընդառաջ: Դա ոչ մի ներգործություն չի ունենում: Գյուղացիները թափվում են նրա վրա, գործի է դրվում մահակը և տալանաց Օլխովսկին փոխվում է գետնին: Գյուլ գյուղի բնակչության ըմբոստացման լուրն անմիջապես Թիֆլիս է հասնում: Մի քանի հոգի բանտարկվում են: Գյուղացիական այս ելույթն

էր վրա է հրավիրում նաև ներքին գործերի և արդարադատության մինիստրների ուշադրությունը⁷³:

Անդրկովկասում պարտադիր զինապարտության օրենքի տարածման ուղղությամբ ցարական կառավարության նախապատրաստական աշխատանքները սկսվել էին դեռևս 1880-ական թվականների սկզբներին: Աշխատանքները գլխավորում էր Կովկասի կառավարչապետը, որը հաճախակի հրավիրվող խորհրդակցություններում նահանգապետների ուշադրության կենտրոնում մշտապես պահում էր մեկ հարց՝ տեղական ազգաբնակչության շրջանում հնարավոր «անկարգությունների» ծագման զեպրում ոստիկանության գործելակերպի հարցը⁷⁴: Տեղական իշխանությունների ներկայացուցիչներն իրենց գործունեությամբ օրյեկտիվորեն նպաստեցին նման հնարավորության հասունացմանը: Միամատյանների և բազմապիսի ցուցակների ստուգումն ու կազմումը ընթանում էր կեղծիքի, կաշառակերության, շարաշահումների պայմաններում: Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետն իր ղեկավարությանն ուղղած զեկուցագրում ստիպված էր ընդունել, որ ժողովրդի դժգոհության և անկարգությունների պատճառը զինակոչիկների ցուցակների սխալ կազմելն էր⁷⁵:

Արխիվային նյութերը լույս են սփռում զինապարտության օրենքի տարածման թե՛ նախօրեին և թե՛ հետո Արևելյան Հայաստանի ամենատարբեր շրջաններում տեղի ունեցած գյուղացիական ելույթների վրա, որոնք ցարական աստիճանավորների կողմից չնայած չեն հիշատակվում վերոհիշյալ տեղեկագրում, սակայն իրենց ընդգրկմամբ գերազանցում են Գյուլ գյուղի ելույթը:

Ռուսաստանում տեղի ունեցող նշանավոր իրադարձությունների վերաբերյալ կայսրին ներկայացվող ոստիկանության ղեկավարամենտի դիրեկտորի ամենշաբաթյա մի ամփոփագրից տեղեկանում ենք, որ 1886 թ. հունիսին Նլիզավիտալի նահանգի Զանգեզուրի գավառի Խոտ, Շինուհայր և Տաթև գյուղերի բնակիչները դիմադրավել են իշխանության ներկայացուցիչներին, որոնք ժամանել էին ծխամատյանները ստու-

գելու և զինակոչիկների նախնական ցուցակները կազմելու նպատակով⁷⁶;

Շինուհայր գյուղի բնակիչները փակել էին գյուղ տանող ճանապարհը և կողքի ձգվող բարձունքներից քարեր էին նետում գյուղ մտնելու փորձ կատարող աստիճանավորների և հեծյալների վրա: Նրանք գյուղի տանուտներից խլել էին կնիքը, զրկել նրան ավագության իրավունքներից և երգվել հիմնահատակ անել այն տունը, որտեղից դավաճան դուրս կգար⁷⁷: Իսկ Տաթև գյուղում կանայք հարձակվելով հեծյալների և կազակների վրա, փորձել էին ծեծել նաև դավառապետի օգնականին: Ելիզավետպոլի նահանգապետն անմիջապես դիմում է երկրամասի զինվորական հրամանատարությանը և խնդրում իրեն տրամադրել կազակների ու հետևակայինների մեկական հարյուրյակ, որոնց հետ նա շտապում է Գորիս: Բազմաթիվ գյուղացիներ բանտարկվում են: Հուլիսի վերացման և կարգ ու կանոնի վերականգնման նպատակով Կովկասի կառավարչատեղի նահանգապետին առաջարկում է օգտվել նաև մարմնական պատժամիջոցներից⁷⁸:

Ոստիկանության ղեկարտամենտի զիրեկտորը միաժամանակ տեղեկացնում է Ալեքսանդր III-ին, որ Ելիզավետպոլի նահանգապետի հսկողության ներքո այդ գործի կապակցությամբ վարչական մանրադնին հետաքննություն է կատարվում⁷⁹:

Նույն հոգի վրա 1886 թ. իշխանության ներկայացուցիչներին բացահայտ դիմադրություն են ցույց տալիս նաև Կարսի մարզի Կաղզվանի օկրուգի մի շարք գյուղերի բնակիչներ: Մասսայական հուզումները վերացնելու համար օկրուգի պետը Կարսի նահանգապետին խնդրում է զորք ուղարկել, որն անմիջապես կատարվում է⁸⁰: Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետի տեղակալը ոստիկանության ղեկարտամենտին տեղեկացնում է, որ Կարսի մարզի օկրուգային և տեղամասային պետերը ժողովրդի մեջ դրական ոչ մի աշխատանք չեն կատարել, զինապարտության օրենքի հետ կապված հարցերը չեն բացատրել, իսկ Կաղզվանի օկրուգի պետը բավա-

բարվել է միայն ցինիկաբար հայտարարելով. «Գեհ, այժմ ես ձեզ բուրդի զինվոր կվերցնեմ»⁸¹:

1887 թվականին զինապարտության օրենքի տարածման կապակցությամբ ցարիզմի դեմ ուղղված գյուղացիական ելույթներ տեղի ունեցան նաև Երևանի նահանգի մի շարք այլ գյուղերում: Կովկասի կառավարչատեղի Պետերբուրգ ուղարկած հեռագրում նշում է, որ նոյեմբերի 2-ին էջմիածնի գավառի Վաղարշապատ գյուղում տեղի են ունեցել խոշոր անկարգություններ⁸²:

Նոր Բայազետի գավառի Գյուղալղարա գյուղում հուզումներն ավելի բուռն են դրսևորվում: 1887 թ. նոյեմբերի 9-ին մոտ 5000 հոգի, որոնք այդտեղ էին հավաքվել նաև հարևան գյուղերից, լուրջ դիմադրություն են ցույց տալիս զինվորական ատյանի անդամներին և գավառապետին⁸³: Կարծես թե կրկնվում են Գյուղ գյուղի դեպքերը, սակայն արդեն ավելի մեծ մասշտաբներով: Ամբոխը քարկոծում է այն տունը, որտեղ պատսպարվել էին զինվորական ատյանի անդամները և գավառապետը: Վերջինս դուրս գալով փորձում է հանգստացնել ժողովրդին, սակայն գյուղացիներն ազմուկ-աղաղակով հայտնում են, որ ոչ մի զինվոր չեն տա: Գավառապետի կարգադրությամբ կազակներն օդում կրակում են, որն ունենում է իր ներդործությունը և ամբոխն աստիճանաբար ցրվում է: Զինվորական ատյանի անդամները տեղեկանալով, որ գյուղացիները գիշերը նորից են կրկնելու հարձակումը և հաշվի առնելով իրենց անբավարար պաշտպանությունը (10 կազակ և 12 շապար), որոշում են չվտանգել իրենց կյանքն ու վերադառնում են Նոր Բայազետ⁸⁴:

Գյուղացիական այս ելույթն անմիջապես իր վրա է բեռնում իշխանությունների ուշադրությունը: Նոր Բայազետ են շտապում Երևանի նահանգապետ, գեներալ-լեյտենանտ Շալիկովը, օկրուգային դատախազը, նահանգային ժանդարմական վարչության պետը և այլք: Նման հեղինակավոր հանձնախմբի ներկայության պայմաններում միայն, նոյեմբերի 14-ին հնարավոր է լինում կազմել զինակոչիկների ցուցակը⁸⁵: Երևանի նահանգապետը Կովկասի կառավարչատեղի տեղեկացնում է,

որ Գյուղալղարայի հուղումների առաջացմանը բավականին նպաստեցին այն թերութիւններն ու անկաղմակերպվածութիւնը, որոնք տեղ գտան գավառապետի ու զինվորական ատ-յանի աշխատանքներում՝ մասնավորապես գյուղացիական զի-մումներին ժամանակին չպատասխանելը, օրենքի հետ բնակ-չությանը լավ չծանոթացնելը և այլն⁸⁶։ Առավել ակտիվութիւն ցուցաբերած գյուղացիների նկատմամբ քրեական հետաքննու-թիւն է սկսվում։ Ի դեպ, գյուղացիական այս ելույթի ձայնը հասնում է Պետերբուրգ՝ արգարագատության մինիստրին։ Այդ մասին տեղեկացվում է Ալեքսանդր III կայսրին⁸⁷։

Գյուղալղարա գյուղի բնակիչները, անշուշտ, լսել էին ի-րենց գավառի Գյուլ գյուղի մարտյան դեպքերի մասին։ Դա նրանց ավելի համարձակ էր դարձրել։ Եվ կարծես նման դեպ-քերը նկատի ունենալով ցարական աստիճանավորներից մեկը, որը 1888 թ. գրում էր. «Իրենց այժմյան շափերով գյուղացիական անկարգութիւնները պետութեանը դեռևս չեն սպառնում բացա-ռիկ վտանգով, բայց նրանց բնորոշ որոշ հատկութիւնների վրա, այն են՝ վարակչութիւնն ու համառութիւնը, ուշադրու-թիւն պետք է դարձնել հենց այժմ, կանխապես... Գյուղացիա-կան անկարգութիւնները տարեցտարի գրավում են նորանոր վայրեր և այս կամ այն շափով ամրապնդվում այնտեղ»⁸⁸։

Նոր Բայազետի գավառապետը հաշվի առնելով ժողովրդի գրգռված վիճակը ու ցանկանալով խուսափել իր գավառի Գյուլ և Գյուղալղարա գյուղերի դեպքերի կրկնման հնարավորութիւ-նից, 1887 թ. նոյեմբերին խնդրում է Երևանի նահանգապետին կազակներ ուղարկել ներքին Ախտա գյուղը՝ ապահովելու հա-մար զինվորական ատյանի անդամների անվտանգութիւնը⁸⁹։ Նույնպիսի նպատակ էր հետապնդում նաև Երևանի նահանգա-պետի ժամանելը նահանգի ամենամեծ գյուղերից մեկը՝ Աշ-տարակ⁹⁰։

Ոստիկանութեան դեպարտամենտին Երևանի նահանգային ժանդարմական վարչութեան պետի ուղղած զեկուցագրերից մե-կը տեղեկութիւններ է պարունակում Ալեքսանդրապոլի գա-վառի Ջաջու գյուղում տեղի ունեցած գյուղացիական ելույթի մասին։ 1887 թ. նոյեմբերի 19-ին Ջաջուում վիթխարի բաղ-

մութիւն էր հավաքվել շրջակա 52 գյուղերից։ Գյուղացիները փորձում են տեսնել զինվորական ատյանի անդամներին։ ջանկանում հայտնել իրենց դժգոհութիւնները զինակոչիկնե-րի ցուցակադրման հարցերի առթիվ, սակայն ոստիկանական աստիճանավորներն արգելում են։ Քարերով ու փայտերով զին-ված գյուղացիները փորձում են ուժով արդյունքի հասնել, սա-կայն հանդիպում են նախապես այստեղ ժամանած կազակնե-րի զիմադրութեանը։ Գյուղացիներին հնազանդեցնելու համար գավառապետը Ալեքսանդրապոլից լրացուցիչ օգնութիւն է խնդրում։ Նույն օրը երեկոյան զինվորների մի ամբողջ զու-մարտակ հասնում է Ջաջու։ 11 գյուղացիների ձերբակալու-մից հետո զինվորական ատյանը վերսկսում է աշխատանք-ները⁹¹։

Տեղական իշխանութեան ներկայացուցիչները հնարավո-րութեան դեպքում փորձում էին թաքցնել գյուղացիական ելույթի փաստը կամ էլ փոքրացնել վերջինիս նշանակութիւնը։ Դրանով իսկ նրանք ցանկանում էին փակել տվյալ ելույթի ազդեցութեան տարածման շրջանակները և, միաժամանակ, չարժանանալ վերադաս օրգանների կողմից «թուլլ հսկողու-թեան համար» իրենց հասցեին արվելիք կշտամբանքներին։ Սակայն, ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, «եթեմն կարող ենք ըստ ոստիկանական ստախոսութեան ծխի կոահել ժողովրդա-կան ցասման կրակի մասին»⁹²։ Դրա լավագույն օրինակը կա-րող է հանդիսանալ էջմիածնի գավառի Սարգարապատ գյուղի 1887 թվականի դեկտեմբերի 3-ի զինված դիմադրութեան դեպքը⁹³։

Դեկտեմբերի 3-ին Սարգարապատ գյուղում զինվորական ատյանը ձեռնամուխ եղավ զինակոչիկների ցուցակը կազմե-լուն։ Աշխատանքները կատարվում էին գյուղամիջյան հրա-պարակում, որտեղ հավաքվել էր մոտ 3000 մարդ։ Կազակները մտրակների հարվածներով փորձում են ժողովրդին հեռացնել ատյանի անդամներից։ Առաջանում է մեծ իրարանցում։ Գյու-ղացիները քարեր են նետում կազակների և զինվորական ատ-յանի անդամների վրա։ Վերջիններս բոլոր փաստաթղթերը թողնելով այդտեղ, շտապում են թաքնվել։ Ժողովուրդն օգ-

տրվում է դրանից ու ոչնչացնում բոլոր ցուցակները: Գրանից հետո գյուղացիները շրջապատում են այն տունը, որտեղ պատրաստվել էին իշխանության ներկայացուցիչները: Գավառապետ Խան-Աղովը փորձում է դուրս գալ թաքստոցից և հանգստացնել ժողովրդին, սակայն գյուղացիները քարերի նոր տարափ են տեղում և մոտ մեկ ժամ ատյանի անդամները մնում են պաշարված գրուբյան մեջ: Գյուղացիները փորձում են հըր-դեհել նրանց թաքստոցը, բայց վրա են հասնում մոտակա գյուղերում գտնվող կաղակները և ցրում հրապարակում հավաքված ժողովրդին: Նման դիմադրության պայմաններում իրենց ներկայությունը վտանգավոր համարելով, զինվորական ատյանի անդամները շտապ հեռանում են գյուղից: Ի դեպ, ճանապարհին նրանք շրջապատված են լինում կաղակներով, որոնք հրացանները պահում էին պատրաստի վիճակում: Իշխանության ներկայացուցիչներն աճապարում են Սարգարապատից գյուղացիների «ուռա» հաղթական բացականչությունների ներքո⁹⁴:

Չգտելով փոքրացնել Սարգարապատի ղեպքերի նշանակությունը, էջմիածնի գավառապետն իր ղեկավարությանը գրում էր. «Սարգարապատում տեղի են ունեցել փոքր անկարգություններ՝ կազակների անզգույշ գործողությունների հետեվանքով: Այդ պատճառով ես առավել հարմար գտա տեղափոխել ատյանի գործունեությունը Շահրիար: Աշխատանքներն այժմ ընթանում են, ոչ մի անկարգություններ չկան: Հանգիստ եղեք, ես հույսով եմ, որ ամեն ինչ կվերջացնենք բարեհաջող: Համենայն դեպս, վաղվա համար բարեհաճեք ուղարկել ևս 15 կազակներ»⁹⁵: Գավառապետի վերջին խոսքերը շատ բան են հուշում:

Մի բանի որ անց Սարգարապատի գյուղացիների դիմադրության լուրն իսկական մանրամասներով հասնում է Երևան: Այն մեծ անհանգստություն է պատճառում ցարական աստիճանավորներին: Որքան էլ որ էջմիածնի գավառապետը փորձեր տվյալ ղեպքը ներկայացնել որպես պատահական երևույթ, այստեղ արդեն նման կերպ չէին կարող մտածել՝ դեռևս շատ թարմ էին Գյուլ, Գյուղալգարա, Ջաջուռ և մյուս գյուղերի ղեպ-

քերը: Իշխանությունների ներկայացուցիչներին դիմադրություն ցույց տալու համար առավել ակտիվություն դրսևորած 9 գյուղացիներ դատի են տրվում⁹⁶: Գյուղացիական այս ելույթի մասին տեղեկացվում է նաև Ալեքսանդր III կայսրը⁹⁷:

Պարտադիր զինապարտության օրենքի տարածման կապակցությամբ ծագած գյուղացիական ելույթները իշխանություններին բավական մտահոգություն էին պատճառում: Իրենց թափով ու մասշտաբայնությամբ արևելահայ գյուղացիական շարժումների պատմության մեջ դրանք աննախադեպ էին և պատահական չէ այն անհանգստությունը, որ ամենամյա զորակոչերի ժամանակ պաշարում էր տեղական իշխանությունների ներկայացուցիչներին: Տարիներ անց էլ, նրանք շտապում էին տեղեկացնել իրենց ղեկավարությանը, որ նման «անկարգություններ» չեն եղել: Ահա թե ինչ է գրում Երևանի նահանգապետը 1891 թ. գեկուցագրերից մեկում. «Ձինակոչիկների զորակոչը՝ թվով հինգերորդը, կատարվեց կարգ ու կանոնի և հանգստության պայմաններում»⁹⁸:

Գյուղացիական վերահիշյալ ելույթներն օրյեկտիվորեն ուղղված էին ցարիզմի ինչպես սոցիալական, այնպես էլ գաղութային շահագործման դեմ: Եվ, ընդհանրապես, դարավերջի արևելահայ գյուղացիական շարժումներում պայքարի այս երկու բնորոշ գծերը հանդես են եկել համատեղ ու լրացրել միմյանց: Նրանք օրգանապես միաձուլվել են, քանզի ցարիզմն իրականում ամենախոշոր հողատերն էր և գաղութարարը: Այդ ելույթները կազմում են Արևելյան Հայաստանի գյուղացիական շարժումների պատմության ուշագրավ էջերից մեկը:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Արևելյան Հայաստանի գյուղացիության դասակարգային պայքարը պատմական օրինաչափ երևույթ էր և ուներ խոր արմատներ: Սոցիալական ճնշման դեմ գյուղացիական մասսաների խուլ բողոքը ժամանակի ընթացքում ձեռք էր բերում որոշակի հնչեղություն, երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը համընթաց վերելք էին ապրում գյուղացիական շարժումները:

Անցյալ հարյուրամյակից մեզ հասած փաստաթղթերը վկայում են XIX դ. վերջին քառորդի արևելահայ գյուղի անհանգստության մասին: Գյուղացիությունը հողի մեծ կարիք էր զգում: Գա հիանալի է արտացոլվել ժամանակի գյուղացիական խնդրագրերում: «Հողը քիչ է» — սա գյուղացիական խնդրագրերի հիմնական մոտիվն էր, իսկ պայքարը հողի համար՝ գյուղացիական շարժումների բնորոշ գիծը:

1880—90-ական թվականներին Արևելյան Հայաստանի թե՛ պետական և թե՛ կալվածատիրական գյուղացիության պայքարի առանցքը հողն էր: Սակավահողությունը, հողաչին զավթումները և բազմապիսի վեճերը, հողավերաբաժանման ոչ սխտեմատիկ բնույթը և այլն, նպաստում էին ազրարային հուզումների ծավալմանը: Գյուղացիությունը պայքարում էր նաև ցարիզմի հարկային հարստահարման և տեղական իշխանությունների ներկայացուցիչների շարաշահումների դեմ:

Կալվածատիրական գյուղացիության պայքարի հիմնական սլաքը, ի տարբերություն պետական գյուղացիության, ուղղված էր նաև կալվածատիրական հարկերի գանձման և պարհակների կատարման դեմ: Հողատերերի օգտին վճար-

վող հարկերը իշխանությունները գանձում էին նույն խստությամբ, ինչ պետական հարկերը: Սակայն դա չէր խանգարում, որպեսզի գյուղացիներն ամբողջ խմբերով կամ գյուղով կտրականապես հրաժարվեին ճանաչել մուլքադարների «օրինական» և անօրինական իրավունքները: Կալվածատիրական շահագործման դեմ մղվող գյուղացիական պայքարը երբեմն տասնամյակներ էր տևում: Գյուղացիների և հողատերերի լարված հարաբերություններին բնորոշ էր այն երևույթը, որ երկու կողմերն էլ օգնության համար շտապում էին դիմել իշխանության տեղական ու բարձրագույն օրգաններին: Եվ եթե առաջինների դիմումները հուսահատության հասցված մարդկանց բողոքի ձայն էր ընդդեմ բիրտ շահագործման, ապա երկրորդներին՝ այդ շահագործման փաստական ճանաչման և ամրապնդման պահանջ:

Վ. Ռշտունին նշում է, որ կալվածատիրական գյուղի անշատ-անշատ ըմբոստացումները, շնայած դրանց երբեմն շատ համառ ու երկարատև ընթացքին, դրական շատ քիչ արդյունք էին բերում գյուղացիությանը, բայց այնուամենայնիվ դրանք մշտական լարման մեջ էին պահում կալվածատերերին և նրանց շահերի պաշտպան ցարական իշխանություններին, նրանց ուշադրությունը հրավիրում գյուղական կյանքի լարված իրականության վրա:

Արևելահայ գյուղացիության պայքարը տարբեր դրսևորումներ է ունեցել: Այն արտահայտվել է թե՛ խնդրագրերի և թե՛ բողոքագրերի ձևով, հաճախ երկչուտ անհնազանդության ու պասսիվ դիմադրության փորձերով և թե վառ ըմբոստացումներով, որոնք երբեմն վեր էին ածվում զինված դիմադրության: Պայքարի այս ձևերը հաճախ լրացնում էին միմյանց, հանդես գալիս հաջորդաբար, իսկ երբեմն էլ՝ միաժամանակ:

Գյուղացիական պայքարի պասսիվ ձևն արտահայտվում էր խնդրագրերի և բողոքագրերի միջոցով: Ի դեպ, պասսիվ պայքարի բարձրակետը կարելի է համարել այն երևույթը, երբ գյուղացիական դիմումները հասցեագրվում էին անմիջապես ամենաբարձր ատյաններին՝ Սենատին և կայսրին: 90-ա-

կան թվականներին ավելի հաճախակի են դառնում նման դեպքերը: Այս կապակցությամբ չի կարելի համերաշխվել այն մտքին, որ եթե նախկինում արևելահայ գյուղացիությունը իր բողոքագրերը հասցեագրում էր գավառական և նահանգային իշխանություններին, ապա 1910—1914 թթ. շրջանցելով այդ ինստանցիաները, դրանք ուղարկում էր անմիջապես Կովկասի փոխարքային²: Սույն աշխատության մեջ բերված բազմաթիվ փաստերը խոսում են այն մասին, որ նախկինում էլ, և ոչ միայն փոխարքային (կառավարչապետին), այլ անմիջապես Ռուսաստանի մինիստրներին, Սենատին և կայսրին գյուղացիները դիմում էին դեռևս 80—90-ական թվականներին:

Գյուղացիական խնդրագրերն ու բողոքագրերը անվերջանալի հոսքով կուտակվում էին ցարական աստիճանավորների գրասենյակներին: Չնայած դրանք Արևելահայ Հայաստանի ամենատարբեր անկյուններից էին, սակայն ունեին միևնույն բովանդակությունը՝ քայքայվածություն, կարիք ու զրկանք, ամենուր տիրող աղքատություն ու վիշտ, ահավոր հողասակավություն ու ահռելի հարկեր: Այսպիսին էր ժամանակաշրջանը, հայ գեղջուկի կյանքը: Գյուղացիական խնդրագրերն ու բողոքագրերը կազմում են այդ ժամանակաշրջանի տարեգրության խոսուն էջերը:

Ցարիզմի ագրարային քաղաքականությունը հետամուտ չէր գյուղացիական մասսաների տնտեսական պայմանների բարելավմանը: Այն օբյեկտիվորեն նպաստում էր ագրարային հուզումների ծավալմանը պետական, կալվածատիրական և վանքապատկան գյուղերում: Ժամանակակիցներից մեկը խոսելով Անդրկովկասի ետոեֆորմյան ագրարային հարաբերությունների մասին, նշում էր. «Հենց այդ հարաբերություններն էլ գյուղացիական միջավայրում առաջ բերին այժմյան անկարգություններն ու հուզումները»³:

Արևելյան Հայաստանի XIX դարի վերջին քառորդի գյուղացիական շարժումների պատմությունը բավական փաստառատ է: Ուշագրավ ելույթներ են տեղի ունեցել Նրևանի գավառի Պտղնի, Նովրուզու, Գյոգաբու, Նոր Բայազետի գա-

վառի Գյոգալղարա, Զանգեզուրի գավառի Տաթև, Էջմիածնի գավառի Կարխուն, Խաթունարխ, Սարդարապատ, Բորչալուի գավառի Մեծ Ղարաքիլիսա, Վարդաբուր և բազմաթիվ այլ գյուղերում:

Անշուշտ, չի կարելի համաձայնել այն տեսակետին, որ մինչև ռուսական առաջին հեղափոխությունը հայ գյուղը դառնում էր դարավոր լեթարգիական քնի մեջ և կամ որ Հայաստանի գյուղացիությունը հանդիսանում էր Անդրկովկասի հանդիստ օաղիսը: Վ. Ռշտունին իրավացիորեն նշում է, որ փնտրել Հայաստանում գյուղացիական պայքարի այնպիսի վառ արտահայտություններ, ինչպես օրինակ Վրաստանում, անտեղի կլինեն, սակայն, մերթ ուժեղանալով և մերթ թուլանալով, բայց երբեք չմարելով, XIX դարի ողջ ընթացքում Հայաստանի գյուղացիության պայքարը իր մասին զգացնել էր տալիս ցարիզմին⁴:

XIX դարի 80—90-ական թվականների արևելահայ գյուղացիական շարժումների պատմության ուսումնասիրումը բերում է հետևյալ եզրակացություն. եթե Ռուսաստանի գյուղացիական շարժումները 1880-ական թվականների սկզբին զգալի վերելք ապրեցին, այնուհետև՝ վայրէջք, իսկ 1890-ական թթ. երկրորդ կեսից՝ կրկին վերելք⁵, ապա արևելահայ գյուղացիական շարժումները չապրեցին նման զարգացում, այլ շարունակեցին ընթանալ դանդաղ, առանց նկատելի տատանումների, սակայն ամբողջության մեջ վերցրած՝ վերընթաց գծով: Այդ վերելքը պայմանավորված էր գյուղացիական մասսաների տնտեսական անբարեկեցություն խորացմամբ՝ հողասակավությամբ, հարկային հարստահարության սաստկացմամբ, 90-ական թվականների անբարեկեցությամբ և այլ հանգամանքներով: Դրան մեծապես նպաստում էին նաև գյուղացիության սոցիալական շերտավորման խորացումը, արտագնացության աճը և առաջավոր գաղափարների աստիճանական ներթափանցումը գյուղական խավարի թագավորության մեջ:

XIX դարի վերջին Արևելյան Հայաստանի գյուղացիական շարժումներին բնորոշ է հետևյալը. գյուղացիության պայ-

Քաղաք իր բոլոր դրսևորումներով հանդերձ եղել է անկազմակերպ մասսաների շարժում, տարերային պոսիվումների մի հաջորդական շղթա, որոնք դուրս չէին գալիս տեղական նեղ շրջանակներից և հիմքում ունեին զուտ տնտեսական մոմենտներ:

